մամբ նոր մոտեցումների մշակման շնորհիվ գինված ուժերի մարտունակության
գնահատման ժամանակ սկսեցին գերակա դեր խաղալ որակական չափանիշ-
ները: ...ՈԽստի պատահական չէ, որ պետությունների՝ ուազմարվեստի ժամա-
նակակից տեսության վրա հիմնվող գինված ուժերում ուազմական կրթության և
ընդհանրապես անձնակազմի կառավարման ոլորտը համարվում է պաշտպա-
նական համակարգի արդյունավետության և ԶՈՒ-ի մարտունակության ապա-
հովման առաջնային գործոն»¹:**

Հստ այդմ՝ Վ. Սարգսյանի անվան ուազմական ինստիտուտը նպատակ է
հետապնդում ՀՀ ԶՈՒ-ում իրականացվող ուազմակորպական բարեփոխումների
շրջանակներում գինվորական կադրերի պատրաստման համակարգը համապա-
տասխանեցնելու ժամանակակից չափանիշներին:

Ժամանակակից մարտահրավերները խիստ պահանջներ են ներկայացնում
ուազմական կադրերի, այդ բվում և հրետանավորների, պատրաստման մշտա-
պես զարգացող համակարգին: Ինստիտուտի նեկավարությունը շեշտում է, որ՝
«Քաջ գիտակցելով մեր երկրի անվտանգության ապահովման գործում Ո-ազմա-
կան ինստիտուտի՝ որպես բանակին որակյալ սպայական կադրերով պահո-
վող հիմնական օրակի դերը՝ մենք անհրաժեշտ ենք համարում վերանայել թե՝
կազմակերպական, թե՝ ուսումնական, թե՝ նյութատեխնիկական բազայի կա-
տարելագործման ու արդիականացման հետ կապված որոշ մոտեցումներ»²:

¹ Ս. Ս. Օհանյան, Ռազմական կրթության համակարգի զարգացում՝ որպես ՀՀ պաշտ-
պանական համակարգի արդյունավետության մեծացման գործոն: «ՀԲ», 2012, հմ. 3:

² Մ. Ն. Կարապետյան, Ա. Ս. Մկրտչյան, Վ. Սարգսյանի անվան ուազմական ինստիտուտի
խնդիրները և զարգացման հեռանկարները ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքս-
տում: «ՀԲ», 2010, հմ. 1:

Ինստիտուտի այդ ընդհանուր քաղաքականության համատեքստում զգալի աշխատանքներ են կատարվում նաև հրետանու ֆակուլտետում: Ժամանակակից ռազմական բախումներում հրետանու դերի ու կիրառման եղանակների, մասնագետների պատրաստման միջազգային փորձի, ինչպես նաև ռազմատեխնիկական զարգացման միտումների վերլուծության հիմն վրա ճշգրտվում են ուսումնական ծրագրերը, կատարելազործվում ուսումնավարժական մեթոդները: Մասնավորապես՝ ուսումնական գործընթացում հաշվի են առնվում զիտուրյան տեսության և պրակտիկայի նորագույն նվաճումները, ինչը նպաստում է ոչ միայն ուսուցման որակի բարելավմանը, այլև ԶՈՒ-ի մարտունակության ամրապնդմանը:

Ուսուսատանի Դաշնության այս ոլորտի մասնագետները նշում են, որ ներկայում հրետանային զիտուրյան տեսության և պրակտիկայի զարգացման հաշվառմամբ ուսումնական ծրագրերի զարգացումը պետք է շարունակել գերազանցապես հետևյալ կարևոր ուղղություններով. հրածգության ճշգրտության գնահատման, տեսական հիմունքների մշակման և հրածգության տեղակայումների որոշման միջոցների կատարելազործում, նոր տեսակի մարտապաշտամների խոցող ներգրծության ուսումնասիրություն և տարրեր նշանակետների խոցման համար դրանց կիրառման համձնարարականների նշակում, կրակային խոցումից հետո հակառակորդի օրյեկտների մարտունակության գնահատում, հրետանու կրակային համակարգի արդյունավետության գնահատման տեսական հիմունքների մշակում և առանձին կրակային առաջադրանքների կատարում, հրետանու կրակի արդյունավետության գնահատման, կրակի կառավարման և հրածգության վերաբերյալ համձնարարականների մշակման համար մաքենատիկական մոդելների ստեղծում, կրակի ավտոմատացված կառավարման համակարգերի օգտագործմամբ կրակի կառավարման դեպքում հրետանային հրամանատարների կողմից որոշումների լուղունման տեսական հիմունքների մշակում, հատուկ պայմաններում ու տեղային պատերազմների վարման և զնված հակամարտությունների ժամանակ հրածգության և կրակի կառավարման վերաբերյալ համձնարարականների մշակում³:

Այդ ոլորտում առաջատար պետությունները ներկայում հրետանային հրածգության և կրակի կառավարման տեսության ու պրակտիկայի զարգացումը հասցել են բարձր մակարդակի: Սակայն սպառազինության և ռազմական տեխնիկայի կատարելազործման շարունակականության պատճառով գրեթե միշտ փոփոխության են ենթարկվում մարտավարության մինչ այդ ընդունված սկզբունքները: Այլ կերպ ասած՝ այդ ոլորտը պահանջում է ապահովել բոլոր մակարդակների հրամանատարների գիտելիքների անընդհատ զարգացում:

Ինչպես հայտնի է, հրետանու համար նախատեսված սպառազինությունն ու ռազմական տեխնիկան շահագրծող անձնակազմը որոշակի ժամանակահատվածում կատարում է որոշակի մեխանիկական գործողություններ՝ լիցքավո-

³Տես Ю. Վ. Կոբոլին, Օ. Ա. Օչերետյան. Роль академии в развитии теории и практики стрельбы и управления огнем артиллерии. «Военная мысль», январь 2006, № 1:

րում, նշանառում, կրակոցի կատարում և այլն, իսկ մարտավարական ու կրակի կառավարման խնդիրները կատարում են սպաները՝ հրետանային մասնագետները, հետևաբար հրետանու կիրառման արդյունավետությունը հիմնականում կախված է սպայակազմի պատրաստության աստիճանից: Ուստի անհրաժեշտ է պատրաստել այնպիսի հրետանավոր սպայի, որ նա՝

1. հասնի լիակատար մարտական պատրաստականության, մարտական գործողությունների ժամանակ վստահորեն կատարի պարտականությունները, կարողանա մարտը կազմակերպել կոնկրետ տեղանքում, բարդ ու վոփիխվող իրադրության պայմաններում՝ անձնակազմի մեջ ձևափրելով բարձր մարտական ու բարոյահոգեբանական հատկություններ, ֆիզիկական տոկունություն և զինվորական կարգապահության նկատմամբ գիտակցված վերաբերմունք,

2. կարողանա կառավարել հրետանային ստորաբաժանման կրակը, ենթականներին մերողապես ճիշտ ուսուցանել ինչպես հրետանային սպառագինության, այնպես էլ կրակի կառավարման այլ միջոցների մարտական կիրառումը, ենթականների հետ անցկացնել համապատասխան տեսական, գործնական, մերողական պարապմունքներ,

3. կարողանա օգտվել անհատական ու կոլեկտիվ պաշտպանական միջոցներից, օգտագործել հաստիքային տեխնիկայի ու տեղանքի պաշտպանական հնարավորությունները, հակառակորդի կողմից միջուկային, քիմիական մանրէաբանական (կենսաբանական) գենքի կիրառման դեպքում կատարել ինքնօգնություն ու փոխօգնություն, կատարել հատուկ առաջարրանքներ, ենթականների հետ անցկացնել համապատասխան տեսական, գործնական, մերողական պարապմունքներ,

4. կատարելապես տիրապետի հաստիքային գենքերին, հետախուզության արդյունքների հիման վրա որոշի հրաձգության համար տեղակայումները, արագործն և առաջին իսկ կրակոցով (համազարկով) խոցի նշանակետը, կարողանա կիրառել հրածգության բոլոր եղանակները, ճշգրտել կրակը ինչպես ցերեկը, այնպես էլ գիշերը՝ լեռնային, օդերևութաբանական ու բայխտիկական պայմանների հաշվառմամբ,

5. կարողանա դիմանալ տևական ֆիզիկական ու հոգեբանական ծանրաբեռնվածություններին և հաջողությամբ գործել ժամանակակից մարտում, ենթականների մեջ զարգացնել երկարատև ռազմերք ու երթարշավ կատարելու դիմացկունություն, խոչընդոտների հաղթահարման, ձեռնամարտի վարման հմտություններ, համապատասխան պարապմունքներ անցկացնել ենթականների հետ,

6. գիտակցի ռազմական հոգեբանության և վարքականոնի հիմունքների կարևորությունը, գիտակցված մղումով ու նվիրումով ծառայի Հայաստանի Հանրապետությանը, կարողանա գիտելիքներ հաղորդել ենթակա անձնակազմին, դաստիարակել նրանց ռազմահայրենասիրիական ոգով՝ ուսուցանելով հայ ժողովրդի հերոսական պատմությունն ու ավանդությները, ձևափրել առողջ բարոյահոգեբանական մքնողրտ, և այլն:

Այսպիսով՝ մարտի դաշտում հրետանու առավել արդյունավետ կիրառումը հնարավոր է ապահովել միայն բարձրակարգ մասնագետների միջոցով, որոնք

տիրապետեն սպասարկող անձնակազմի պատրաստման արդյունավետ մեթոդներին, գիտենան հրթիռային գորքերի և հրետանու սպառազինության և ուղմական տեխնիկայի կառուցվածքը, շահագործման ու սպասարկման կանոնները, մարտական հնարավորությունները, դրանք ամրող հղորությամբ կիրառլու մարտավարական հնարները:

Ինչպես ընդհանրապես ՀՀ Զինված ուժերում, այնպէս էլ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում բարեփոխումների գործընթացը թևակողին է որակական նոր փուլ: Վերջին երկու տարվա ընթացքում բարեփոխումների շրջանակներում Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը ՀՀ ԶՈՒ-ի Հրթիռային գորքերի և հրետանային վարչության հետ համատեղ մշակում է սպայակազմի պատրաստման և վերապատրաստման նոր ուղիներ, ուսումնական ծրագրեր, մեթոդներ, որոնք համապատասխանեցվում են արդի պահանջներին:

Ուսումնական գործընթացում առանձնահատուկ կարևորություն է տրվում ստեղծագործական և կողեկտիվի կառավարման ունակությունների ձևավորմանը: Հրետանային մասնագետի որակավորնան ժամանակ հաշվի է առնվում ժամանակակից մարտի բարդ և սրբնաց փոփոխության պայմաններում արագ ու ճիշտ կողմնորոշվելու և օպտիմալ որոշում կայացնելու ունակությունը: Հետևաբար, հրետանային բարձրակարգ մասնագետը ստորաբաժնում դեկավարելիս պետք է կարողանա ցուցաբերել ստեղծագործական մուտքեցում: Գաղտնիք չէ, որ հետախուզմանը, տվյալների պատրաստմանը, կրակադիրք դրանց փոխանցմանը, լիցքավորմանը, նշանառմանը և հրածգությանը մասնակցում են 10-14 տարրեր զինվորական մասնագետներ, հետևաբար հրետանավոր սպան մարտի կազմակերպման ժամանակ պետք է կարողանա հաշվի առնել իր ենթակաների անձնային առանձնահատկություններն ու մասնագիտական որակները և ըստ այդմ կազմավորել ներդաշնակ գործող կողեկտիվ: Ուստի զարգացող է համարվում ուսուցման այն համակարգը, որն ապահովում է կառավարելու և ստեղծագործելու ունակությամբ:

ՀՀ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում ուսումնական գործընթացը կազմակերպելիս առաջնորդվում են իհմնավորականացման, անհատականացման և համակարգչայնացման սկզբունքներով:

Հիմնավորականացման սկզբունքը ենթադրում է մասնագիտական պատրաստման պրոֆիլի ընդլայնում՝ իիմնարար գիտությունների խորացված ուսումնասիրությամբ, ինչը հնարավորություն է տալիս սովորողների շրջանում ձևավորելու մասնագիտական լայն մտահորիզոն: Հրետանավորների մասնագիտական դասընթացի ամրող համակարգը կառուցվում է ֆիզիկամաքնատիկական առարկաների հիմքի վրա: Ընդ որում, այդ առարկաների և դասավանդվող նյութի ընտրությունը կատարվում է դրանց փոխադարձ կապի ու կառուցվածքի հաշվառմաբ:

Հրետանային մասնագետի մասնագիտական որակը որոշվում է ընդհանուր գիտական, իմենաբական և մասնագիտական պատրաստության աստիճանով: Այդ պատճառով ներկայումս ուսուցման առավել ընդունելի սիսեման լայն պրոֆիլի մասնագետների պատրաստումն է, մասնավորապես՝ հրետանավոր

սպաները պետք է կարողանան շահագործել ՀՀ ԶՈՒ-ի զինանոցում գտնվող բոլոր տեսակի հրետանային համակարգերը, ընդունակ ուսուցման ընթացքում հաշվի են առնվում նաև հետազայում նոր զինատեսակներով համալրմանը պայմանավորված խնդիրները:

Անհատականացման սկզբունքով նախատեսվում է ուսումնառության ընթացքում հաշվի առնել տվյալ անձնափորության հոգեֆիզիոլոգիական ու այլ անձնային առանձնահատկությունները և ցուցաբերել անհատական մոտեցում: ՈՒստի կուրսանների ուսուցման և դաստիարակության գործընթացը պետք է կազմակերպվի հոգեբանական մասնագիտական ընտրազատման արդյունքների հիման վրա, ինչը կնպաստի ուսուցման արդյունավետության մեծացմանը⁴:

Համակարգչայնացման սկզբունքը նախատեսում է ուսուցում նոր տեղեկատվական ու մերողական հիմքի վրա՝ ԷՀՄ-ի և այլ համակարգչային տեխնիկայի լայն կիրառմամբ: Հրետանու կրակի ճշգրտումը կախված է մի շարք գործոններից՝ մարտակարգի տարրերի տեղակապակցման, հետախուզական տվյալների, օբյեկտութարանական ու բայխատիկական պայմանների որոշման եղանակներից և որպես վերջնական արդյունք՝ հրածգության համար հաշվարկված տվյալների որոշման ճշգրտությունից ու արագությունից:

Հրածգության համար տվյալների որոշումն առավելագույն ճշգրտությամբ և արագությամբ հնարավոր է միայն մասնագիտացված հաշվարկան տեխնիկայի՝ համակարգիչների կիրառման դեպքում:

Համակարգչային տեխնիկան կիրառվում է նաև ժամանակակից հրետանային բարդ համակարգերի տեխնիկական վիճակը ստուգելու, մարտական կիրառմանը դրա պատրաստությունը որոշելու, տեղակապակցում կատարելու, տեղեկույթը հաղորդելու, ինչպես նաև հրանորի նշանառման գործընթացը ավտոմատ եղանակով կատարելու համար: Հետևաբար՝ առանց համակարգչային տեխնիկայի կիրառության հնարավոր չէ պատկերացնել ժամանակակից ՍՈՒ-ների շահագործումը և ստորաբաժանումների կառավարումը:

ՀՀ ԶՈՒ-ում հրետանային մասնագիտական պատրաստման համակարգի արդիականացումը ենթադրում է.

1. ուսումնական ծրագրերի վերամշակման ժամանակ մեծապես հաշվի առնել ներկայիս տեղային պատերազմներում ու զինված բախումներում, այդ թվուն և Արցախյան ազատամարտում, հրետանու մարտական կիրառման փորձը, ուղղական գործողությունների բատերարեմի (ՈԳԹ) բնակլիմայական և աշխարհագրական առանձնահատկությունները և հավանական հակառակորդի՝ ձեռք բերվող ժամանակակից ՍՈՒ-մարտավարատեխնիկական բնութագրերը,

2. կազմակերպել և անցկացնել բարձր կորսի կուրսանների և ունկնդիրների հետ դաշտային պայմաններում մարտավարական վարժանքներ՝ ներգրավելով զորքերից համապատասխան մասնագիտությամբ աշքի ընկած սպաների, ինչը կնպաստի առաջավոր փորձի տարածմանը,

⁴ Այդ մասին ավելի հանգամանորեն տես «Հ. Հ. Մարգարյան, Պաշտպանական ոլորտում կադրերի հոգեբանական մասնագիտական ընտրազատման հարցի շուրջ: «ՀԲ», 2012, հմ. 3:

3. Աերդրել ժամանակակից չափանիշներին համապատասխանող պրոֆեսուրադասախոսական կադրերի ընտրության համակարգ,

4. Աերդրել զինվորական կադրերի պատրաստման՝ արտերկրի առաջավոր փորձը,

5. ատեստավորման կազմակերպման և անցկացման ժամանակակից համակարգի ներդրման միջոցով բարձրացնել գիտամանկավարժական կադրերի որակավորման նակարդակը,

6. ժամանակակից չափանիշներին համապատասխան կատարելագրութել կուրսաների ուսուցման և դաստիարակության մեթոդները՝ շեշտը դնելով ստեղծագործական վերաբերմունքի ձևավորման վրա,

7. պարբերաբար համալրել և բարձրացնել մասնագիտական լսարանների նյութատեխնիկական բազան, առաջին հերթին՝ նորագույն հայրենական վարժասարքերով, և այլն:

Այսպիսով՝ հրետանավոր սպան պետք է իրեն դրսևորի որպես առաջավար, կարողանա ստեղծել արդյունավետ, սերտ համագործակցող թիմ, հոգատար լինի ենթականների նկատմամբ, օժանդակի նրանց մասնագիտական աճին, մշտապես ուղղորդի նրանց, անձնակազմին սովորեցնի առանց խուճապի մատնվելու, դատողաբար ու հաշվեմկատորեն գործել համկարծակի ծագող ամենատարբեր պայմաններում և իրավիճակներում, ենթականների համար լինի հեղինակություն, ձեռք բերի վերադասի վստահությունն ու հարգանքը, ունենա ռազմական, իրավական և հասարակական գիտելիքների անհրաժեշտ պաշար, նպաստի երիտասարդ սպանների մասնագիտական կայացմանն ու աճին:

ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ МОДЕРНИЗАЦИИ СИСТЕМЫ ПРОФЕССИОНАЛЬНОЙ АРТИЛЛЕРИЙСКОЙ ПОДГОТОВКИ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

А. Е. БАГДАСАՐՅԱՆ, полковник, начальник факультета артиллерии

Военного института МО РА им. В. Саргсяна,

Г. А. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, полковник, начальник кафедры вооружения и эксплуатации
факультета артиллерии Военного института МО РА им. В. Саргсяна

РЕЗЮМЕ

Подготовка профессиональных артиллерийских кадров младшего офицерского состава осуществляется на факультете артиллерии Военного института им. В. Саргсяна. В рамках реформирования всей системы военного образования при методологической поддержке группы экспертов из стран НАТО происходит модернизация учебного процесса и на факультете артиллерии. В частности, с учетом роли и способов применения артиллерии в современных локальных войнах и военных столкновениях, международного опыта подготовки специалистов в данной области, а также на основе анализа тенденций военно-технического развития уточняются и корректируются учебные программы с широким применением современных технологий, в том числе

компьютерных тренажеров отечественного производства, совершенствуются методы обучения с целью подготовки квалифицированных специалистов-офицеров, способных в экстремальных условиях максимально эффективно использовать тактико-технические возможности артиллерийского вооружения и техники, быстро и правильно ориентироваться при принятии решений в быстро меняющейся боевой обстановке и т. д.

В процессе профессиональной подготовки, кроме формирования профессионально важных качеств, особое внимание уделяется их подготовке к работе с личным составом. Для этого предусмотрено формирование у будущих офицеров прочных военно-педагогических знаний и навыков, позволяющих методически правильно определять индивидуально-психологические особенности подчиненных и их профессиональные качества с последующим формированием слаженно действующего коллектива.

MAJOR TRENDS OF MODERNIZING THE PROFESSIONAL ARTILLERY TRAINING IN THE ARMED FORCES OF THE REPUBLIC OF ARMENIA

*A. Ye. BAGHDASARYAN, Colonel, Head of the Artillery Department,
V. Sargsyan Military Institute, MOD, RA,*

*G. A. KARAPETYAN, Colonel, Head of the Arms and Operation Chair
of the Artillery Department, V. Sargsyan Military Institute, MOD, RA*

SUMMARY

Training of professional artillery personnel of junior officers is performed at the Artillery Department of the V. Sargsyan Military Institute. As part of the reforms of the entire military education system with the methodological support of the NATO expert group the educational process at the Artillery Department also undergoes modernization. In particular, with regard to the role and methods of using artillery in modern local wars and armed conflicts, the international experience of training specialists in the field, and on the basis of trend analysis of military-technical development the training programs are being adjusted and revised with extensive use of modern technologies, including computer simulators of domestic production, training methods are being improved in order to train qualified specialist-officers capable of most effectively leveraging tactical and technical capabilities of artillery weapons and equipment under extreme conditions, acting quickly and correctly in decision-making in a rapidly changing combat environment, etc.

In the process of professional training, besides shaping professionally important qualities, special attention is paid to their preparation for work with the personnel. This is achieved through delivering stable military-pedagogical knowledge and skills to the future officers that will ensure methodically correct identification of individual-psychological characteristics of subordinates and their competencies and subsequent formation of cohesive personnel.

**ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԼԻՐԻ
ԴԵՐԸ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Ա. Հ. ԵՍԱՅԱՆ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական, ՀՀ ՊՆ

**Ուազմակելիսական ծառայության գրեթելիկական բաժնի գլխավոր
մասնագետ, Բ. Վ. ՈՒԿԱՆՅԱՆ, ՔՀԾ 2-րդ դասի առաջարար ծառայող,**

**ՀՀ ՊՆ Ուազմակելիսական ծառայության գլամերական բաժնի
առաջարար մասնագետ**



Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության գործում կարևոր դեր ու նշանակություն ունի ՀՀ ռազմական արդյունաբերության համայնքը (ՌԱՀ): ՌԱՀ-ը գլխական և արտադրական կազմակերպությունների մի համակարգ է, որն իրականացնում է ռազմական տեխնիկայի, սպառագինության, ռազմամթերքի և ռազ-

մատեխնիկական միջոցների մշակման, արտադրության ու նորոգման պիտական պատվերներ, որոնք պայմանափորված են ԶՈՒ-ի ներկայիս զարգացման պահանջմունքներով: ՈԽտի հանրապետության մարդկային և ֆինանսատնտեսական, այդ թվում՝ հումքային, ռեսուրսների սահմանափակության պայմաններում հույժ կարևոր է դառնում եղած ռեսուրսների ճիշտ կառավարումը, որի հիմնական գործիքը ռազմատեխնիկական քաղաքականությունն է: Այն մշակվում է ինչպես պաշտպանական կարիքների և խաղաղ ու պատերազմական ժամանակներում ԶՈՒ-ի խնդիրների, այնպես էլ հավանական հակառակորդի ռազմական ներուժի զարգացման հիմնական ուղղությունների և ընդհանրապես զինված պայքարի միջոցների ու եղանակների միտումների հաշվառմաբ:

ՀՀ Պաշտպանության նախարար Ա. Օհանյանը նշել է. «Վերջին երկու տասնամյակում ի հայտ են եկել ռազմական պայքարի նոր միջոցներ, որոնցից են, մասնավորապես, գերճշգրիտ զենքերը: Դրանց և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիական բազայի վրա ստեղծված կառավարման, հետախուզումն և նշանառման համակարգերի համատեղ օգտագործումը կտրուկ կերպով փոխում է ռազմական գործողությունների վարման ձևերն ու մերողները... Այսպիսի պատերազմներում հաղթանակի երաշխիք են հակառակորդի կառավարման տեղեկատվական համակարգերի նկատմամբ առավելություն ունեցող կառավարման բազմաֆունկցիոնալ համակարգերը և գերճշգրիտ զենքերը, որոնք ապահովում են հակառակորդի գորքերի խոցելի տարրերի արագ հայտնաբերումն ու դրանց նկատմամբ խոցող միջոցների անհապաղ կիրառումը: Այլ կերպ ասած՝ մոտ ապագայում պետությունների սպառագինությունների համա-

կարգերի հղորությունը բնութագրվելու է հիմնականում ոչ թե դրանց քանակով, այլ որակական հատկանիշներով»¹:

Ասվածը մեծապես վերաբերում է հրթիռահրետանային սպառազինությանը, որի կրակային հղորությունը, խոցման ճշգրտությունը, հեռահարությունը ժամանակակից պատերազմներում հաջողության հասնելու հիմնական գրավականներից են: Մասնավորապես՝ մեծ էր հրետանու դերը Լեռնային Ղարաբաղում և ՀՀ սահմանամերձ գոտում մղվող մարտերում: Այս կարևոր դրույթի գիտակցմամբ էլ ձևավորվում է ՀՀ ՊՆ ռազմատեխնիկական քաղաքականությունը հրթիռահրետանային սպառազինության ոլորտում: Այսօր ՀՀ ՊՆ նոր ռազմատեխնիկական քաղաքականությունը նպատակաուղղված է հակառակորդի կառավարման տեղեկատվական համակարգերի նկատմամբ առավելություն ունեցող կառավարման բազմաֆունկցիոնալ համակարգերի ու գերճշգրիտ գեներերի մշակմանը և սեղմ ժամկետներում դրանցով ԶՈՒ-ի համարմանը, ինչի շնորհիվ կապահովեն հակառակորդի գորքերի խոցելի տարրերի արագ հայտնաբերումն ու դրանց նկատմամբ խոցող միջոցների անհապաղ արդյունավետ կիրառումը:

Հրետանային գորքերի բարձր մարտական պատրաստության և մարտունակության ապահովման համար մեծ նշանակություն ունի հաստիքային ՍՈՒ մարտունակ վիճակում պահպանումը, ժամանակակից տեխնոլոգիաների զարգացմամբ ու գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված ձեռքբերումների կիրառմամբ առկա տեխնիկայի արդիականացումը և փոխարինումը կատարելագործված տեխնիկական միջոցներով ու սարքերով:

Հրթիռային գորքերի և հրետանու հաստիքային ՍՈՒ և ռազմատեխնիկական գույքի ստեղծման, արտադրության, արդիականացման ու նորոգման աշխատանքները կատարվում են ՌԱՀ-ի ընկերություններում՝ պետական պատվերների միջոցով: Մասնավորապես՝

– նախագծել և արտադրվել են դիվիզիոնի միասնական կառավարման հրետանային հետախուզական օպտիկաէլեկտրոնային համակարգեր, լազերային հեռաչափներ, ավտոմատացված թվային կողմնացույց-անկյունաչափներ (բուտիներ), շրջադիտակներ, «Լույս» նմուշի լուսավորման սարքեր, որոնք արդեն ընդունված են գորքերի հաստիքային սպառազինության մեջ: Պետական պատվեր կատարող ձեռնարկություններում արտադրվում են հակառանկային կառավարվող հրթիռների «Լուսային խափանումների ցուցիչներ», ինչպես նաև հրետանու սպայի ռադիոֆիլկացված պլանշետներ, որոնցով ապահովված են բոլոր հրետանային ստորաբաժանումները,

– ստեղծված շարժական լաբորատորիաների միջոցով գորամասերում և մարտական հերթապահության ստորաբաժանումներում պարբերաբար անցկացվում են արատորոշչի աշխատանքներ. ստուգվում է հակառանկային կառավարվող հրթիռների աշխատունակությունը, կատարվում են արձակող կայանքների ստուգում, նորոգում և ճշգրտում,

¹ U. U. Ohanjanian, ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը որպես պաշտպանական բարեփոխումների առաջնային խնդիր: «ՀԲ», 2011, հմ. 3:

– շարունակվում է դիվիզիոնի կառավարման համակարգի՝ դիվիզիոնի հրամանատարի, դիվիզիոնի շտաբի պետի, մարտկոցի հրամանատարի և մարտկոցի ավագ սպայի հրամանատարական մեքենաների արդիականացումը, դրանք համարվում են ժամանակակից ՋՊՍ (GPS) սարքերով, կապի նորագույն համակարգերով և այլ միջոցներով: Ընդունիչ-հաղորդիչ սարքերը փոխարինվում են համակարգիչներով: Կատարվում են հակատանկային կառավարվող հրթիռների («Ֆագու», «Շոտուրմ-Ս», «Կոնկորս», «Մետխո») և «Հրետանային համակարգային հրածագարաններ» վարժասարքերի նորոգման, արդիականացման ու զորքերում տեխնիկական սպասարկման աշխատանքներ: Աշխատանքներ են տարվում հրթիռային կայանքների հիդրոհամակարգերի արդիականացման ուղղությամբ,

– նորոգող ձեռնարկություններում կազմակերպվում են հրետանային հետախուզության միջոցների (ՄՆԱՌ-10, ԱԶԿ-7, ՄՌԿ-1, ԱՌԿ-1)` լազերային հեռաչափների, իրետանային կողմնացույց-անկյունաչափների, դեսանտային օդերևութարանական կայանքների նորոգման աշխատանքներ: Նման աշխատանքներ են կատարվում նաև գորամասերում և ստորաբաժանումներում՝ շարժական նորոգող արհեստանոցների միջոցով: Ռազմարդյունաբերական գործարաններում կատարվում են մարտավարական համակարգերի, օվերատիվ-մարտավարական հրթիռների նորոգման ու սպասարկման աշխատանքներ,

– բոլոր հրետանային միջոցների համար պատրաստվում են անհատական և խմբային պահեստամասեր ու գործիքներ՝ իրետանային համակարգերի փոխարինմանը և համալրմանը,

– պետական պատվերներ կատարող ընկերություններում և ռազմաարդյունաբերական ձեռնարկություններում կատարվել են գերմաքուր ազոտ զազ ստանալու գազաֆիկացման կայանի հավաքակցում և կարգաբերում, կատարվում է բարձր ճնշման (400 մբն) գերմաքուր ազոտ գազի գլանանոթների (բալոններ) լցավորում,

– օպտիկակելեկտրոնային համակարգերի համար ընկերություններում աճեցվում են բարձր որակի լազերային բյուրեղներ, որոնք նաև մեծ պահանջարկ ունեն միջազգային շուկաներում:

Կատարված աշխատանքների շնորհիվ ստեղծվել է գիտաարտադրական բազա, որը հնարավորություն է տալիս մշակելու և ստեղծելու սկզբունքներն նոր տեսակների ՍՈ-Տ՝ գերճշգրիտ, էլեկտրամագնիսական, տեղեկությային և միշտ այլ տեսակների գեներեր, ինչը նպաստում է ԶՈՒ-ի ընդհանուր մարտունակության մեծացմանը:

Հրթիռային զորքերի և հրետանու զարգացումը, ինչպես նաև մարտունակությունն ապահովվում են հետախուզական-կրակային եզրագծերի ստեղծմանը: Դա հնարավորություն է տալիս ժամանակային առումով ապահովելու նշանակեանությունը, հրթիռային զորքերը և հրետանու զորամասերն ու ստորաբաժանումները զինելու գերճշգրիտ զենքով, մեծացնելու խոցման միջոցների հետահարությունը, կրակի նախապատրաստման ու վարման ավտոմատացումը:

ՀՀ Զինված ուժերում տարեցտարի ընդլայնվում է ՍՈՒ-Տ նոր նմուշների ներդրումը, հրետանային ստորաբաժանումների տեխնիկական միջոցների ու սարքավորանքի փոխարինումը ժամանակակից նմուշներով։ Հայաստանում նոր տեսակի ՍՈՒ-Տ կամ դրա կատարելագործված նմուշների մշակումն ու արտադրությունը ծրագրելիս կարևոր է ճիշտ հասկանալ ու գնահատել համապատասխան համաշխարհային միտումները։ Այդ նպատակով ուսումնասիրվում են առաջատար պետություններում այդ ոլորտում կատարվող մշակումները։ Վերլուծությունը ցույց է տալիս, որ հրթիռահրետանային սպառագինության զարգացման առավել հեռանկարյային ուղղություններն են։

– նոր սերնդի հրետանային բայիստիկական ռադիոտեղորոշումային կայնը, որը, արդյունավետության մեծացման համար, մասնավորապես, հնարավորություն է տալիս նշանառման ընթացքում չափելու և հաշվառելու կրակող համակարգերի արկերի (ականների) բոլչքի իրական սկզբնական արագության մեծությունը։ ՈՒկրաինացի մասնագետներն ստեղծել են ռադիոտեղորոշումային համակարգի միջոցով արկերի (ականների) բոլչքի սկզբնական արագության մեծության չափման նոր եղանակ՝ հիմնված դոպլերյան մեթոդի վրա։ Ստեղծված նոր սերնդի հրետանային բայիստիկական կայնը, որի սարքավորանքը պատրաստված է նոր ներդրված ռադիոէլեկտրոնային տեխնոլոգիայով, փորձարկման ժամանակ ցույց է տվել մեծ արդյունավետություն։ Ըստ էության, տեխնիկատնտեսական ցուցանիշներով այն կարելի է տեղադրել ցանկացած հրետանային համակարգի վրա, կամ էլ կարող է կիրառվել ինքնավար եղանակով,

– հրետանային հետախուզության «Արքուր» համակարգը, որը ժամանակակից շարժական միջոց է՝ նախատեսված հակառակորդի կրակ վարող հրետանային միջոցները հայտնաբերելու համար։ Այն ցամաքային ռադիոտեղորոշումային համակարգ է, որը որոնում է քոչող հրետանային արկերը, մի քանի վայրկյանում կառուցում է դրանց հետագիծը, և դրա հիման վրա ստացված տվյալներով հայտնաբերում արկի արձակման վայրը՝ կրակող հրետանային միջոցի դիրքը։ «Արքուր» համակարգը կարող է հայտնաբերել նաև ականանետային և նոնականանետային ստորաբաժանումների դիրքերը։

Այսօր զարգացած պետությունների սպառագինությունը համալրում են՝

– արդյականացված 152-նմ «ՍՈՍՈՒ-Ս» ավտոմատ հրետանային կայանը, որը համալրված է ավտոմատացված կառավարման համակարգով և նշանառման սարքերով,

– 1L219 «Չոռպարկ» հրետանային հետախուզական ռադիոտեղորոշումային համալիրը, որը նախատեսված է հակառակորդի կրակային դիրքերի (ականանետների, հրետանու, համազարկային կրակի հրթիռային համակարգերի և մարտավարական հրթիռների) կոռորդնատները կրակոցով (արձակումով) որոշելու, յուրային հակառակ միջոցներին նշանացուցում տալու և հրածգության արդյունքները վերահսկելու համար։ Ապահովում է մեկ րոպեում մինչև 70 կրակային դիրքի միաժամանակյա հայտնաբերման, մինչև արկի ընկնելու պահը (համազարկից 20 վրկ հետո) կրակային դիրքի կոռորդնատների հաղորդման,

կառավարման հրամանատվական կետերի հետ տեղեկույթի ավտոմատացված փոխանակման խնդիրների կատարում: ՈՒնի մոդուլային կառուցվածք, ոսղիութեակտունային խանգարումների նկատմամբ կայուն է:

Մի շաբթ պետությունների զինված ուժերը մոտ ապագայում կհամալրվեն համազարկային կրակի հրթիռային համակարգերի («Ամերչ», «ՈՒրագան», «Գրադ») նոր՝ արդիականացված, փոփոխակներով, որոնք կունենան ավելի մեծ ճշգրտություն, արդյունավետություն և հեռահարություն: Կատարելագործվում են նաև հրետանային հետախուզության միջոցները, ստեղծվում նորեր՝ ռադիոտեղորոշումային («Կրեդո-1», «Ախտյոնոկ», «Զոռպարկ-1Մ»), ձայնային (ԱԶԿ-7Մ), օպտիկակելեկտրոնային (ՊՄ-Պ-4Ա) և օդային հրետանային «Տիպչակ» միջոցներ, որոնք ունեն հետախուզության և ստացվող տեղեկույթի մշակման ժամանակակից սարքեր և հնարավորություն են տալիս մեծացնելու հետախուզության հեռավորությունը և բարձրացնելու հրաձգության սպասարկման որակը: Դրանք կատարում են նշանակետերի ուղեկցում և կորոդինատների ավտոմատ ստացում, ապահովում են հետախուզական տեղեկույթի ավտոմատացված հաղորդումը խոցման միջոցներին:

ՈԽումնասիրելով արտասահմանյան երկրների զինված ուժերի համալրվածությունը ժամանակակից սպառազինությամբ, հազեցվածությունը կատարելագործված նորագոյն միջոցներով և դրանց կառավարման համակարգերը, հաշվի առնելով ժամանակակից սպառազինության զարգացման միտուները, աշխարհագրական և այլ կարգի գործուներով՝ նպատակահարմար ենք համարում ՀՀ Զինված ուժերի սպառազինությունը ամրողությամբ համալրել ժամանակակից կառավարման ավտոմատացված համակարգերով, հրթիռային զորքերի և հրետանու պետի՝ կառավարման ավտոմատացված, հրետանային դիվիզիոնների կրակի կառավարման ավտոմատացված, ինչպես նաև փոքրածավալ, դյուրակիր ականանետային մարտկոցների կառավարման համալիրներով, որոնք միացված լինեն զինված ուժերի կառավարման ընդհանուր համակարգին: Այս համալիրներն զգալիորեն կնվազեցնեն կառավարման վուլի և տվյալների մշակման տևողությունը:

Կառավարման ավտոմատացված համակարգի միջոցով կարելի է ապահովել հրետանային ստորաբաժանումների խնդիրների կատարումը միասնական հետախուզատեղեկատվական տարածությունում, ինչը հնարավորություն կտա տարրեր հետախուզական միջոցներից, ինչպես նաև անօդաչու թռչող ապարատներից ժամանակին ստանալու տվյալներ:

Տեխնիկական նորամուծությունները հնարավորություն են տալիս ծևափրեկություն ռադիոտեղորոշման, հետախուզման, դիտարկման, կառավարման համակարգերի, նշանառման և ինքնանշանառման խոցման միջոցների նկատմամբ նոր մուտքումներ, որոնց տրամաբանական շարունակությունն է ոռորոտացված համակարգերի ստեղծումն ու մարտի դաշտում կիրառումը: Այդ նպատակն իրագործելու նկատառումներով պաշտպանության նախարարությունը սերտուն համագործակցում է ՀՀ-ում զործող բարձր տեղեկատվական տեխնոլոգիաներով մշակումներ առաջարկող կազմակերպությունների հետ: Բավական է

նշել, որ Հայաստանը օպտիկաէլեկտրոնիկայի բնագավառում զբաղեցնում է աշխարհում ոչ հետնապահի դիրք:

Այսպիսով՝ տվյալ ոլորտի հետագա զարգացումը պետք է հիմնված լինի միջազգային փորձի վերլուծության, ուազմատեխնիկական համագործակցության և գիտականության սկզբունքների վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ուազմական դրկուրին»: «Աշխատանքային տեսրեր», 2007, հմ. 4:

2. Մ. Ռ. Բասիսանյան, Ա. Պ. Պետրոսյան, ՀՀ ուազմական արդյունաբերության համակարգի զարգացմանն ուղղված հիմնական միջոցառումները պաշտպանական բարեփոխումների շրջանակում»: «ՀԲ», 2011, հմ. 3:

3. Վ. Ա. Հայրապետյան, Հրետանու մարտական կիրառումը տեղային պատերազմներում: «ՀԲ», 1999, հմ. 2:

4. Բ. Վ. Մենչիկով. Оборонно-промышленный комплекс: состояние, проблемы, перспективы. «Военная мысль», 2006, № 12.

РОЛЬ ВОЕННО-ПРОМЫШЛЕННОГО КОМПЛЕКСА РА В ДЕЛЕ ТЕХНИЧЕСКОГО РАЗВИТИЯ РАКЕТНЫХ ВОЙСК И АРТИЛЛЕРИИ

Ա. Ա. ԵՍԱՅԻՆ, советник 3-ого класса СГС, главный специалист технического отдела военно-технической службы МО РА, Б. Վ. ՅՈՍԿԱՆՅԻՆ, ведущий служащий 2-ого класса СГС, главный специалист экономического отдела военно-технической службы МО РА

РЕЗЮМЕ

В настоящее время ВПК в РА развивается в нескольких основных направлениях: поддержание в боеспособном состоянии наличествующих артиллерийских ВВТ, модернизация систем их управления в целях обеспечения эффективного поражения целей, а также разработка и производство новых. В частности, созданы достаточные информационная производственная базы на основе высоких технологий и позволяющие осваивать, проектировать и производить артиллерийские разведывательные оптико-электронные совместно управляемые комплексы дивизиона, лазерные дальномеры, автоматизированные цифровые буссоли, перископы, осветительные приборы военного назначения, а также современную продукцию гражданского назначения.

Технические инновации позволяют формировать новые подходы к разработке систем разведки, радиолокации, наблюдения, управления, наведения и самонаведения. Создаются условия для применения на поле боя роботизированных систем. Исходя из этих целей соответствующие структуры Министерства обороны тесно сотрудничают с действующими на территории РА предприятиями, осуществляющими разработки в области информационных и высоких технологий.

THE ROLE OF THE RA MILITARY-INDUSTRIAL COMPLEX FOR TECHNICAL DEVELOPMENT OF THE ROCKET FORCES AND ARTILLERY

*A. H. YESAYAN, 3rd Class Advisor of Special Civil Service, Chief Specialist
of Technical Branch of Military-Technical Service, MOD, RA,*

*B. V. VOSKANYAN, 2nd Class Senior Official of Special Civil Service,
Key Specialist of Economic Branch of Military Technical Service, MOD, RA*

SUMMARY

At present, the Military-Industrial Complex in the Republic of Armenia is developing in several mainstreams: maintenance of combat-readiness of the present artillery weapons and equipment, modernization of their control systems aimed at efficient target destruction as well as the design and manufacture of new ones. In particular, sufficient information and manufacturing capabilities are created on the basis of high-tech allowing us to develop, design and manufacture artillery reconnaissance optoelectronic co-managed complexes of division, laser rangefinders, automated digital compasses, periscopes, illuminating defense equipment, as well as up-to-date civilian products.

Technical innovations allow adopting new approaches to the development of the systems of reconnaissance, radar, surveillance, control, guidance and homing. Conditions are created for using robotized systems on the battlefield. In these terms, the relevant structures of the Ministry of Defense are closely working with the active businesses in the RA which implement elaborations in the field of information and high technology.

ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ



**Հրթիռակիրետանային զորքերի օրվան նվիրված միջոցառում
ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի մասնակցությամբ**

2012 թ. հոկտեմբերի 20



Հրետանավորները ուսումնական պարապմունքի ժամանակ



Հրթիռահրետանային զորքերի վարժանքներ դաշտային պայմաններում

ԴՐԱԳՆԵՐ ՀՀ 20-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԶՈՐԱՀԱՆԴԵՍԻՑ

Երևան, 2011 թ. սեպտեմբերի 21



ՎՄ-80 համազարկային կրակի ռեակտիվ համակարգ



ՀՀ Ո-ԱՀ-ի կատարելագործած
«Սկաղ» օպերատիվ-մարտավարական հրթիռային համակարգ

ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՆՄՈՒԾՆԵՐ



Լազերային հեռաչափ LH-01



«Պանորամ» հրետանային վարժասարք

**9Կ72 «ԷԼԲՌՈՒՄ» («SCUD-B») ՕՊԵՐԱՏԻՎ
ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՀՐԹԻՌԱՅՑԻՆ ՀԱՍՏԱԼԻՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍՔ**

*Մ. Օ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ, գնդապետ,
ՀՀ ԶՈՒ-ի ԳԸ օպերատիվ վարչության ուղղության խմբի պետի լրեղակալ*



Օպերատիվ-մարտավարական հրթիռային «Էլբրուս» համալիրը, որը կիրառվում է 8Կ14Մ-1 տեսակի բալիստիկական հրթիռների 8Ֆ44Մ-1 մարտական մասերով, նախանցանակաված է կենդանի ուժի, կառավարման կետերի, օդանավակայանների և հակառակորդի այլ կարևոր օբյեկտների խոցման համար: Այն ունի 50-300 կմ հեռահարություն: Թեև հրթիռային համալիրը համարվում է բարոյապես հնացած, սակայն ապացուցել է իր հուսալիությունը ամբողջ աշխարհում:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով նույնիսկ գերտերությունները գործնականում հրաժարվեցին տեխնիկական պիտանիության ժամկետները լրացած կամ հնացած սպառազինությունը շահագործումից հանելուց և նորերով փոխարինելուց՝ նախընտրելով արդիականացնել եղածը:

Ըստ այդմ՝ թեև 1980-ական թվականների վերջերից «Էլբրուսի» համարող մասեր չեն թողարկվում, սակայն համալիրի շահագործման ընթացքում բազմիցս կատարվել են հրթիռների և մարտական մասերի կարգորշված, ինչպես նաև 9Պ117Մ արձակման կայանքների հատուկ մասի արդիականացման ծավալուն աշխատանքներ:

Հրթիռային համալիրի կառավարման համակարգի արդիականացումը հնարավորություն տվեց կրծատելու ժամանակային ցուցանիշները, մեծացնելու կարգորշված ու տեխնիկական սպասարկման աշխատանքների արդյունավետությունը և վերը նշված սպառազինության շահագործման ժամկետները երկարածքելու նվազագույնը մեկ տարով՝ մինչև հաջորդ կարգորշված և տեխնիկական սպասարկման աշխատանքները:

Կարգորշված և տեխնիկական սպասարկման աշխատանքները ավելի ճշգրիտ և սեղմ ժամկետներում կատարելու համար մեր մասնագետներն ստեղծել են համապատասխան համակարգչային սարքավորանք, որով փոխարինել են խորհրդային տարիներին հրթիռային համալիրի կառավարման համակարգի և սարքավորումների սպասարկման հսկայական բազան: Դա հնարավորություն տվեց սպասարկման աշխատանքները կատարելու դաշտային պայմաններում՝ անկախ եղանակային պայմաններից:

Նշանակետի կողրդինատներն ստանալուց հետո հրթիռի արձակման համար հաշվարկները կատարվում են հաշվիչ մեքենայով, որը տեղակայված էր

ԶԻԼ-131 ավտոմեքենայի բափրում: Հրթիոի բոխչքի տվյալները որոշվում էին ՏՌ-550 աղյուսակով՝ ճշգրտիչ գրաֆիկական սարքի միջոցով, ինչի հետևանքով հաշվարկների համար պահանջվում էր զգայի ժամանակ: Տեխնիկական միջոցների արդիականացման շնորհիվ հաշվիչ մեքենան փոխարինվել է համակարգչով, որը հաշվարկները կատարում է վայրկյանների ընթացքում: Հատուկ ծրագրի միջոցով (ՏՌ-550-ի տվյալները մուտքագրվում են համակարգչի մեջ) հաշվարկների ճշգրտությունը ևս բարելավվել է:

Արդիականացվել են նաև հրթիոների մարտազիմերի կարգորոշված աշխատանքների կատարման սարքերը: Դա նույնապես հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ կերպով որոշելու մարտազիմերի պիտանիության աստիճանը, հրթիոի ինքնառշացման համակարգի կապը հրթիոի էլեկտրական համակարգի հետ և դրանց աշխատունակության աստիճանը:



Առավելություններ. առաջին՝ կրծատվել է հրթիոների նախապատրաստման և արձակման ժամանակը, երկրորդ՝ մեծացվել է խոցման ճշգրտությունը:

Հարկ է նշել, որ համալիրն ունի նաև բացասական կողմեր: Մասնավորապես՝ ժամանակակից հակաօդային պաշտպանության միջոցները ունակ են որսալու հրթիոը: Մեր մասնագետները համապատասխան աշխատանքներ են տանում այդ թերությունները վերացնելու և համալիրը ՀՕՊ-ի միջոցների համար անորսայի դարձնելու ուղղությամբ:

ПРИМЕНЕНИЕ ОПЕРАТИВНО-ТАКТИЧЕСКОГО РАКЕТНОГО КОМПЛЕКСА 9К72 «ЭЛЬБРУС» («SCUD-B») С ИСПОЛЬЗОВАНИЕМ СОВРЕМЕННЫХ ТЕХНОЛОГИЙ

*М. О. БАБАДЖАНЯН, полковник, заместитель начальника группы направления
Оперативного управления ГШ ВС РА*

РЕЗЮМЕ

В конце 80-ых годов ракеты и комплектующие армейского оперативно-тактического ракетного комплекса советского производства 9К72 «Scud-B» сняты с производства в связи с тем, что этот комплекс является довольно громоздкой и морально устаревшей. Однако с учетом того, что данный комплекс с ракетой 8К14-1 является достаточно надежным, он в настоящее время находится на вооружении и входит в состав ракетной группировки ВС РА. Комплекс был неоднократно модернизирован. Как в

плане компьютеризации вычислительной системы комплекса, так и тех приборов, по которым осуществляются регламентные работы с улучшением качественных характеристик приведения комплекса в высшие степени готовности. Работа специалистов, по модернизации армейского оперативно-тактического ракетного комплекса 9К72 «Scud-B» позволила существенно повысить эффективность поражения цели, а также сократить время на подготовку и пуск ракет.

THE APPLICATION OF THE TACTICAL BALLISTIC MISSILE SYSTEM
9K72 «ELBRUS» («SCUD-B»)
WITH THE USE OF MODERN TECHNOLOGIES

M. O. BABAJANYAN, Colonel, Deputy Chief of the Line Group of the Operative Department in the Main Staff, RA AF

SUMMARY

In late 80-s the missiles and the components of the Soviet production 9K72 «Scud-B» army tactical ballistic missile system were laid off production on the grounds that the system is rather cumbersome and obsolete. However, with the account of the above-mentioned system operating quite reliably with 8K14-1 missile, at this moment it is in service and is part of the missile grouping of the RA AF. The system has been upgraded more and once both in terms of computerization of its operating system, and also the apparatus, by which the maintenance work is carried out. It has evidenced improvements in the quality indicators of bringing the system to the highest levels of readiness. The experts work on modernization of the 9K72 «Scud-B» army tactical ballistic missile system enabled to seriously increase the efficiency of target engagement, as well as to reduce the time for the rockets preparation and launch.

ՂԵԿԱՎԱՐՎՈՂ ԹՌՉՈՂ ՍԱՐՋԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԵՐԻ ԴԻՆԱՍԻԿ ՆԱԽԱԳԾՍԱՆ ՀԻՄԱՀԱՐՑԵՐ

Վ. Ռ. ԲԱՐՄԵԴՅԱՆ, ֆիզիկամարենադիլական գիտուրյունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ նախագահության սիյուռի բաժնի պետ, ԵՊՀ պրոֆեսոր



1. Թոշող սարքեր և դրանց նշանակությունը

Թոշող սարքեր են անվանում Երկրի մթնոլորտում կամ տիեզերական տարածությունում թռչելու համար նախատեսված սարքերը: Այն թոշող սարքերը, որոնց թռչքները իրականացվում են առանց անձնակազմի (օդաչուի), անվանում են անօդաչու թոշող սարքեր (ԱԹՍ): Դրանք լինում են չղեկավարվող և ղեկավարվող*: Ղեկավարվող ԱԹՍ-ները լինում են ավտոմատ ղեկավարվող (կամ ինքնադեկավարվող) և հեռադեկավարվող: Կարևոր նշանակություն ունի ԱԹՍ-ի օգտագործումը ռազմական նպատակներով: Ղեկավարվող թռչող սարքերը որպես զենքի տեսակներ բազմազան են և տարրերվում են իրենց նախանշանակմամբ:

Ներկայում ԱԹՍ-ները օգտագործվում են ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական ոլորտի խնդիրների լուծման համար: ԱԹՍ-ները լինում են միանգամյա և բազմակի օգտագործման:

Բացի հրթիռահետանային համալիրներում օգտագործվող տարրեր բնույթի հրթիռներից՝ բալիստիկական, թեսավոր, զենիթային, հետանային, ավիացիոն և այլն, ԱԹՍ-ները կարող են օգտագործել սահմանային շրջաններում իրավիճակի վերահսկման, ռազմական հերթապահության երթուղիների և ռազմական օրյեկտների դիտման, ռադիոկապի վերահսկողման, արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման և ուժերի համապատասխան ուղղորդման համար, զյուղատնտեսության բնագավառում և այլ նպատակներով:

Ելեկով աշխարհում ժամանակակից թոշող սարքերի (անօդաչու ղեկավարվող թռչող սարքերի) արագ տարածման հանգամանքից՝ ԱՄՆ-ի տեղեկատվության պաշտպանության կենտրոնի վորձագետները 21-րդ դարի անվտանգության ռազմավարության վերաբերյալ հայտարարել են, որ կան երկու տեխնոլոգիաներ, որոնք ունեն բազում նոր հնարավորություններ, որանք են ղեկավարվող թոշող սարքերը և տիեզերական ուղեծրային սարքերը: Հիմնականում հետախուզման և դիտման համար նախատեսված նման թոշող սարքերը կարող են արագ վերափոխվել օդային ռազմական միջոցների:

Թոշող սարքերի ստեղծման և նշանակման ժամանակաշրջանում պատրաստվել է տարրեր նախանշանակման և կառուցվածքի շուրջ 300 տեսակի սարք [1]:

* Հողվածում օգտագործված «ղեկավարում» տերմինը համարժեք է պաշտպանական ոլորտում և մեր հանդեսում գործածվող «կառավարում» տերմինին: –Խմբ.:

Ներկայումս մեր տարածաշրջանում օգտագործվում են աճողաչու դեկավարվող թռչող սարքեր՝ հակառակորդի պաշտպանության ուսումնասիրության, ուզմավարական օբյեկտների հետախուզման համար: Աղբեջանը ԱԹՍ-ներ ծեռք է բերում Խորայելից, իսկ Հայաստանն արդեն ստեղծել է աճողաչու դեկավարվող թռչող սարքերի իր արտադրությունը, որն ունի զարգացման լուրջ հեռանկարներ:

2. Թռչող սարքերի զարգացման հեռանկարը

Տարբեր երկրներում ստեղծված դեկավարվող թռչող սարքերը տարբերվում են ինչպես իրենց կառուցվածքով, այնպես էլ մարտավարաբոիչքային հնարավորություններով և նախատեսված են հիմնականում ուզմական քնույթի տարբեր խնդիրների լուծման համար:

Դեկավարվող թռչող սարքերի նոր տեսակների նմուշներն անընդհատ ներկայացվում են ցուցահանդեսներում, հրապարակայնորեն լուսարանվում են, դրանց մարտավարաբոիչքային քնութագրերի զարգացմանն ուղղված նոր մոտեցումները հաճախակի քննարկվում են միջազգային գիտաժողովներում:

Նշենք, որ 2003 թ. տվյալներով տարբեր պետությունների ԶՈՒ-ի սպառազինության մեջ կային 62 տեսակի ԱԹՍ-ներ [1]:

Միանգամյա օգտագործման ԱԹՍ-ների զարգացման հեռանկարներն են՝ նշանակեածի խոցման ճշգրտության և թոփչի հեռավորության մեծացումը, շարժումը գերձայնային արագությամբ, հակառակային և հակադրիհուային պաշտպանության համակարգերի մեծ հավանականությամբ հաղթահարման ապահովումը, թոփչի ընթացքում թոփչքային տվյալների ճշգրտումների հնարավորությունը, թոփչի ընթացքում հետախուզության կատարումը, և այլն:

Բազմակի օգտագործման ԱԹՍ-ների զարգացման հեռանկարներն են՝ հուսալիության ու դիմացկունության (կենսունակության), թոփչի հեռավորության մեծացումը, թոփչատեկսնիկական և տնտեսական ցուցանիշների մեծացումը, համալիր հետախուզության կատարումը, իրական ժամանակում տվյալների հաղորդման հնարավորությունը, և այլն:

Հաշվի առնելով աճողաչու թռչող սարքերի նկատմամբ աճող հետաքրքրությունը՝ կարող ենք եզրակացնել, որ դրանք ուզմական շուկայում կունենան մեծ պահանջարկ, որն ըստ էության նոր է սկսել ձևավորվել և ունի ընդլայնման մեծ հեռանկար: Այս առումով Հայաստանն ունի նախադրյալներ, որ նշանակալից դեր ունենա տվյալ ոլորտում:

20-րդ դարի վերջի և 21-րդ դարի սկզբի ուզմական հակամարտություններում տեխնոլոգիապես զարգացած պետությունները պատերազմական գործողությունների հիմնական խնդիրը լուծել են բարձր ճշգրտությամբ զենքը դարձել է սպառազինության զարգացման կարևոր ուղղություններից մեկը: Բարձր ճշգրտությամբ զենքի կիրառման շնորհիվ հակառակորդի կրակային խոցման արդյունավետությունը հասել է մինչև 60-90 %-ի [1]:

Անօդաշու թոշող սարքերը համարվում են բարձր ճշգրտությամբ զենքի տեսակ: Կարելի է պնդել, որ բարձր ճշգրտությամբ զենքին է պատկանելու գիշավոր դերը 21-րդ դարի սպառազինությունների ռազմական հակամարտություններում:

Պետք է նշել, որ թոշող սարքերը որպես թիրախներ անհրաժեշտ են նաև զինվորական օդաչուների պատրաստելու համար: ԱԹՄ-ներն օգտագործվում են նաև հակառակորդի հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միջոցների դեմ պայքարելու համար և կոչվում են նաև «ծուղակ-ԱԹՄ-ների»: Նման ԱԹՄ-ների մի խումբ էլ ստացել է «հակառադիոտեղորշումային ԱԹՄ-ներ» անվանումը [2]:

Ուզմագիտական և գիտատեխնիկական գրականության մեջ լայնորեն լուսաբանվում են թոշող սարքերի, անօդաշու «ծուղակ-ԱԹՄ-ների», օդային նշանակետների նմանարկիչների մշակման և օգտագործման հարցերը:

Իհարկե, պատերազմի դաշտում ԱԹՄ-ները չեն կարող լիովին փոխարինել օդաչուի կողմից դեկավարվող թոշող սարքերը: Սակայն դրանք կարող են օգտագործվել բազմաթիվ խնդիրների լուծման համար, որոնք օդաչուի կյանքի համար վտանգ են ներկայացնում, կամ այն դեպքում, երբ «մև գործի» կատարման համար նպատակահարմար չէ օգտագործել օդաչուի կողմից դեկավարվող ինքնարքիոններ:

Աշխարհում ԱԹՄ-ների մշակման և արտադրության առաջատարը ԱՄՆ-ն է: Միևնույն ժամանակ, 2012 թ. ամերիկացի գիտնականները (Տեխսասի համալսարան) ապացուցել են, որ գործնականում հնարավոր է «կոտրել» հեռադեկավարվող ԱԹՄ-ների դեկավարման համակարգը և «տիրանալ» դրան: Սակայն գիտնականները նաև նշել են, որ դա հնարավոր է անել միայն այն սարքերի դեպքում, որոնց դեկավարման համակարգում օգտագործվում են ոչ ծածկագրված ազդանշաններ:

3. Տրված դինամիկական հատկություններով թոշող սարքի դեկավարման համակարգի նախագծման խնդիրները

3.1 Թոշող սարքի շարժման դեկավարման հիմնական սկզբունքները և բաղադրիչները: Մթնոլորտում շարժվող թոշող սարքի վրա ընդհանուր դեպքում ազդում են շարժիչի քարշի, աերոդինամիկական և ծանրության ուժերը: Թոշող սարքի թոշչի հետագծի վրա ազդելու համար անհրաժեշտ է փոփոխել այդ ուժերի համազորի մեծությունը և ուղղությունը: Գործնականում դա կարելի է անել՝ փոփոխելով քարշի և աերոդինամիկական ուժերի համագորները, որոնք ընդունված է անվանել դեկավարող ուժեր:

Դեկավարող ուժը կարելի է տրոհել երկու բաղադրիչի՝ տաճակենցիալ՝ ուղղված թոշչի արագության վեկտորի երկայնքով, և նորմալ, որն ուղղահայաց է այդ վեկտորին: Թոշչի արագության մեծության վրա ազդելու համար պիտք է փոփոխել տաճակենցիալ բաղադրիչը՝ փոփոխելով շարժիչի քարշի կամ թոշող

սարքի ճակատային դիմադրության ուժը: Թոփչի ուղղությունը փոփոխելու համար պետք է բոշող սարքի վրա կիրառել նորմալ դեկավարող ուժ:

Թոչող սարքի շարժման ավտոմատ դեկավարման համակարգը ընդհանուր դեպքում բաղկացած է կայունացման, նշանառման և արագության դեկավարման համակարգերից [3]:

Կայունացման համակարգը բոշող սարքում տեղադրված այն սարքավորանքի (ներառյալ՝ ԹՍ) համախումքն է, որն ապահովում է պահանջվող անկյունային դիրքը կամ ԹՍ շարժումը՝ որոշված անկյունով:

Սովորաբար տարաշարքի հնարավորություն ունեցող ԱԹՍ-ն կայունացվում է կոռորդինատային առանցքների երեք ուղղություններով:

Նշանառման համակարգը բոշող սարքի զանգվածների կենտրոնի համար պահանջվող շարժման օրենքն առաջացնող և նորմալ դեկավարող ԹՍ շարժումն ապահովող սարքավորանքի համախումքն է: Այլ խոսքով՝ նշանառման համակարգը կարելի է սահմանել որպես նորմալ դեկավարող ուժերի փոփոխմանը ԹՍ զանգվածների կենտրոնի շարժման դեկավարման համակարգ:

Նշանառման համակարգը սովորաբար կատարում է հետևյալ գործառույթները.

– ստանում ու մշակում է բոշող սարքի և նշանակետի շարժումների վերաբերյալ տվյալները, ինչի հիման վրա նշակում է նշանառման ազդանշանները,

– նշանառման ազդանշանները հաղորդում է բոշող սարքին (եթե առաջին գործողությունը կատարող սարքերը ԹՍ-ում չեն տեղադրված),

– նշանառման ազդանշանները վերափոխում է նորմալ դեկավարող ուժերի ազդեցության:

Արագության դեկավարման համակարգը բոշող սարքի արագության փոփոխման ցանկալի օրենքը (դեկավարվող տանգենցիալ ուժերի համապատասխան փոփոխությամբ) ապահովող սարքավորումների համախումքն է: Քանի որ շարժվող նշանակետին բոշող սարքի նշանառման միջ շարք խնդիրների լուծման համար արագության դեկավարում չի պահանջվում, ապա այդ համակարգը, որպես կանոն, ներառված չէ բոշող սարքի թոփչի դեկավարման համակարգում:

Թոչող սարքի շարժման դեկավարման համակարգերը սովորաբար դասակարգվում են ըստ նշանառման համակարգերի տեսակների, որոնք իրենց գործունեության սկզբունքով էապես տարբերվում են մեկը մյուսից:

3.2 Թոչող սարքի դիմամիկայի և ինքնանշանառման համակարգի առանձնահատկությունները: Թոչող սարքի թոփչը դիտարկվում է որպես տարածության մեջ պինդ մարմնի շարժում, որն ունի ազատության վեց աստիճան: Այն դեպքում, եթե բոշող սարքի կառուցվածքում անհրաժեշտ է լինում դիտարկել նրա ձևախախտումները, հաշվի են առնվում նաև դրանցով պայմանավորված հատկությունները:

Թոչող սարքի շարժումը նկարագրվում է նրա զանգվածների կենտրոնի շարժման և զանգվածների կենտրոնի նկատմամբ նրա պտտական շարժման

(դինամիկական և կինեմատիկական) հավասարումներով [3, 4]: Նշանառման համակարգի առկայության դեպքում նաև ավելանում են նշանակետին նշանառման պայմանները: Այդ հավասարումները հիմնականում ոչ գծային են: Ղեկավարվող բոլշը դինամիկայի անմիջական ձևավորումն ու ուսումնասիրումը այդպիսի ոչ գծային հավասարումներով շատ բարդ է և համարվում է ոչ ուսումնական: Սովորաբար բոչող սարքի շարժման ուսումնասիրնան համար նրա բոլշը նկարագրող հավասարումները նախապես պարզեցվում են: Ոչ գծային հավասարումների պարզեցման մի ճև է որևէ զգրգուշ շարժման շուրջը շարժման պայմանների փոքր շեղումների նկատմամբ գծայնացումը:

Թոշող սարքի՝ շարժմի նշանակետին նշանառման, կամ դրա հետապնդման խնդիրը ունի մի շարք առանձնահատկություններ [3, 4], որոնցից հիմնականներն են.

1) Խնդիրը ունի տերմինալ բնույթ, այսինքն՝ վերջավոր ժամանակում պահանջվում է ապահովել վիճակի համար որոշակի պայմաններ, այն է՝ անհրաժեշտ է ժամանակի նույն պահի համար համատեղել բոչող սարքի (հրթիռի) և նշանակետի տարածական կոռորդինատները:

2) Խնդիրը կապված է նշանակետի շարժման վարքի մողելի ձևավորման հետ: Որպես կանոն, նշանառման մեթոդում ընդունվում է, որ նշանակետը տարաշարժուն չէ: Այդ պատճառով տարաշարժի հնարավորության առկայության դեպքում առաջացող հարցերը հետազոտվում են արդեն կառուցված դեկավարման համակարգի վերլուծության փուլում:

3) Ղեկավարման իներցիալ համակարգի և ինքնանշանառման ավանդական մեթոդների միաժամանակյա կիրառումը հանգեցնում է տարբեր կոռորդինատային համակարգերի միաժամանակյա օգտագործման անհրաժեշտության:

4) Անհրաժեշտ է հաշվի առնել ակտիվ նշանակետի կողմից հնարավոր հակազդեցության ինչպես կանխամտածված, այնպես էլ ոչ կանխամտածված դեպքերը:

Այս հարցերը պահանջում են հատուկ քննարկում: Սակայն ղեկավարման համակարգի դինամիկական հատկությունների փոփոխության տեսանկյունից ուշադրություն պետք է դարձնել երկու հիմնական հարցի վրա:

Նախ. անհրաժեշտ է հաշվի առնել, որ նշանառության ընթացքում հնարավոր է կորցնել նշանակետի մասին ստացվող տեղեկությունների մի մասը կամ ամբողջ տեղեկությը: Երկրորդ անհրաժեշտ է հաշվի առնել նշանակետի մասին խարութիկ (հատուկ նմանարկումային աղմուկների միջոցով ստեղծված) տեղեկությունների առկայության հնարավորությունը, ընդ որում, դրանց հայտնարերումը էլ ավելի բարդ խնդիր է:

Այսպիսով՝ ձևակերպված առանձնահատկությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ բոչող սարքերի ինքնանշանառման համակարգի դինամիկ նախագծման խնդիրը անհրաժեշտ է հետազոտել և լուծել ղեկավարման մաքենամատիկական տեսության ժամանակակից մեթոդներով, և այն պետք է

հիմնված լինի չափից սարքերում տեղեկությախն հոսքերի վերլուծության վրա:

3.3 Թոշող սարքի ինքնանշանառման համակարգի ձևավորումը: Թոշող սարքի ինքնանշանառման համակարգի նախագծման հիմնական խնդիրը նրա դեկավարող ազդեցության ֆունկցիայի ստացումն ու դեկավարման համակարգի ձևավորումն է:

Ինքնանշանառման ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս գործնականում իրականացնելու տեղեկույթի մշակման և դեկավարման ցանկացած բարդ ալգորիթմ:

Դիտարկենք դեկավարվող թոշող սարքի ինքնանշանառման ալգորիթմի ձևավորման խնդիրը, երբ պահանջվում է տարածության տրված սկզբնական կետից թոշող սարքը տրված ժամանակահատվածում օպտիմալ դեկավարման տեղափոխել վերջնական կետ:

Թոշող սարքի օպտիմալ դեկավարման խնդրի մաքեմատիկական ձևակերպման համար ենթադրվում է, որ՝

1. թոշող սարքի տարածական շարժումը դիտարկվում է որպես նյութական կետի (զանգվածների կենտրոնի) շարժում՝ նրա վրա կիրառված դեկավարող ազդեցությամբ (արագացմամբ),

2. դեկավարող ազդեցության վեկտորի մեծության և ուղղության վրա սահմանափակումներ չեն դրված,

3. թոշքի դեկավարման ժամանակահատվածը հայտնի է և ֆիքսված,

4. տրված է թոշող սարքի սկզբնական վիճակը,

5. թոշող սարքի վերջնական վիճակը որոշվում է նշանառման վերջնական պահին նշանակետի դիրքով:

Դիտարկենք թոշող սարքի օպտիմալ դեկավարման խնդիրը ընդհանուր դեպքում:

Դիցուք՝ թոշող սարքի դեկավարվող շարժումը նկարագրող գծային դիֆերենցիալ հավասարումը հետևյալն է՝

$$\dot{x} = A(t)x + B(t)u, \quad t_0 \leq t \leq T, \quad (1)$$

որտեղ x -ը n -չափանի ֆազային վեկտորն է, u -ն m -չափանի դեկավարող ազդեցությունների վեկտորն է, $A(t)$ -ն ($n \times n$), $B(t)$ -ն ($n \times m$)-չափանի մատրիցներ են, որոնց տարրերը կտոր առնդիատ ֆունկցիաներ են: $A(t)$ և $B(t)$ մատրիցների տարրերը նկարագրում են, համապատասխանաբար, թոշող սարքի և դեկավարող սարքի բնութագրերը:

Ենթադրենք, որ (1) համակարգի սկզբնական վիճակն է

$$x(t_0) = x_0,$$

իսկ վերջնական վիճակի վերաբերյալ պահանջը գրենք հետևյալ տեսքով՝

$$y(T) = Sx(T), \quad (2)$$

որտեղ $x(T)$ -ն թոշող սարքի ֆազային վեկտորն է ժամանակի $t=T$ պահին, իսկ $y(T)$ -ն, ժամանակի T պահի համար տրված պայմաններով, l -չափանի վեկտորն է ($l < n$), S -ը՝ $(l \times n)$ -չափանի հաստատում մատրից է:

Որպես որակի (օպտիմալության) հայտանիշ վերցնենք

$$J = \frac{1}{2} \int_{t_0}^t u^2(\tau) d\tau \quad (3)$$

ֆունկցիոնալը:

Պահանջվում է գտնել $u(t)$ օպտիմալ դեկավարումը, որը (1) հավասարման $x(t_0)$ սկզբնական կետից դուրս եկող $x(t)$ լուծումը տեղափոխում է (2) վերջնական դիրք՝ նվազարկելով (3) որակի հայտանիշը:

Դիտարկենք

$$y(t) = SX(T, t)x(t), \quad (4)$$

վեկտորը, որտեղ $X(T, t)$ -ն (1) համակարգի համասեռ մասի լուծումների ֆունդամենտալ մատրիցն է: Եթե $t=T$, (4)-ը համընկնում է (2)-ի հետ, քանի որ $X(T, T)=E$ -ն միավոր մատրից է: (4)-ի երկու կողմերը ածանցելով ըստ t -ի և հաշվի առնելով, որ

$$\dot{X}(T, t) = -X(T, t)A(t),$$

կունենանք՝

$$\dot{y}(t) = F(t)u(t), \quad (5)$$

որտեղ $F(t) = SX(T, t)B(t)$:

(5)-ից երևում է, որ $y(T)$ վերջնական վիճակի ապահովումը պետք է իրականացվի $y(t)$ -ի դեկավարման միջոցով:

Այսպիսով՝ պետք է նվազարկել (3) ֆունկցիոնալը՝ բավարարելով (5) պայմանը: Դրա համար կազմենք Համիլտոնի ֆունկցիան [5]:

$$H(\psi, u, t) = \frac{1}{2} u^2(\tau) + \psi^T F(t)u, \quad (6)$$

որտեղ ψ -ն համալրուծ վեկտոր ֆունկցիան է, որը բավարարում է $\dot{\psi} = \left(\frac{d}{dy} H \right)^T$

պայմանին:

Որոնվող $u(t)$ դեկավարումների օպտիմալության անհրաժեշտ պայմանը հետևյալն է՝

$$\frac{d}{du} H = 0,$$

համաձայն որի՝ օպտիմալ դեկավարման խնդրի լուծումը հանգեցնում է հետևյալ խնդրի լուծմանը՝

$$\begin{aligned} \dot{y} &= F(t)u, \quad y(t_0) = y_0 \\ \dot{\psi} &= 0, \quad y(T) = y_T \\ u &= -F^T(t)\psi : \end{aligned} \quad (7)$$

Նշենք, որ $y(t)$ -ի համար սկզբնական և վերջնական պայմանները տրված են, իսկ ψ ֆունկցիայի համար այդ պայմանները ազատ են:

Քանի որ $\psi(t) = \psi_0 = const$, ապա դրա որոշումը հետևում է (7)-ի առաջին հավասարման լուծումից: Ընդ որում,

$$y(T) = y(t_0) - \left[\int_{t_0}^T F(\tau) F^T(\tau) d\tau \right] \psi_0:$$

$$\text{Հետևաբար՝ } \psi_0 = M^{-1}(T, t_0)[y(t_0) - y(T)],$$

$$\text{որտեղ՝ } M(T, t_0) = \int_{t_0}^T F(\tau) F^T(\tau) d\tau:$$

Հաշվի առնելով (7)-ը՝ կունենանք

$$u(t) = F^T(t) M^{-1}(T, t_0)[y(T) - y(t_0)]: \quad (8)$$

Այսպիսով՝ (8)-ը որոնելի օպտիմալ ծրագրային դեկավարումն է, որը համակարգը տրված $y(t_0)$ սկզբնական վիճակից տեղափոխում է տրված $y(T)$ վերջնական վիճակի՝ ապահովելով որակի (3) հայտանիշի նվազագույն արժեքը:

Հաշվի առնելով ժամանակի t_0 պահի կամայական լինելը և այն ենթադրությունը, որ $y(t_0)$ վիճակը հայտնի է ցանկացած t_0 պահի, ապա (8)-ում t_0 -ն փոխարիմելով t -ով՝ այն կարելի է մեկնաբանել որպես՝

$$u(y(t)) = F^T(t) M^{-1}(T, t_0)[y(T) - y(t)] \quad (9)$$

հետադարձ կապով դեկավարման ծրագիր:

Այստեղից երևում է, որ ֆազային վեկտորի համար պահանջվող վերջնական վիճակի և ընթացիկ պահի համար նրա կանխատեսվող արժեքի տարրերությունը անհամաձայնության ընթացիկ պարամետր է:

Դեկավարող ազդեցության համար ստացված (9) արտահայտության գոյության անհրաժեշտ և բավարար պայման է: $\det M \neq 0$, որը համարժեք է (1) համակարգի լրիվ դեկավարելիության պայմանին:

Սեր տարածաշրջանի ռելիեֆի բարդ պայմանները թելադրում են, որ դեկավարվող թռչող սարքի դինամիկայի և ինքնանշանառման համակարգի նախագծնան ընթացքում պետք է հաշվի առնել որոշ կարևոր առանձնահատկություններ: Այդ առանձնահատկությունները մաքեմատիկորեն կարող են ծևակերպվել որպես թռիչքի միջանկյալ պահերին թռչող սարքի ֆազային կոռորդինատների մասերի վրա դրված սահմանափակումներ: Միջանկյալ պահերին ֆազային վեկտորի կոռորդինատների տարրեր մասերի վրա դրված սահմանափակումներով գծային դինամիկ համակարգերի դեկավարման և ժամանակի ամրող հատվածի վրա դրված որակի հայտանիշով օպտիմալ դեկավարման խնդիրները ուսումնասիրված են [6]: Դեկավարման խնդիրի համար կառուցված է դեկավարող ազդեցությունը և առաջարկված է դեկավարման խնդիրի օպտիմալ լուծման եղանակ: Լուծված է տիեզերական ճգողության դաշտում ուղղաձիգ հարթության մեջ նյութական կետի շարժման դեկավարման կոնկրետ խնդիր:

Ստացված արդյունքները կարող են օգտագործվել թռչող սարքի ինքնանշանառման համակարգի մշակման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. *M. Павлушкин, Г. Евстафьев, И. Макаренко.* Национальная и глобальная безопасность. Беспилотные летательные аппараты: история, применение, угроза распространения и перспективы развития. М., 2005.
2. *B. Киншин.* Беспилотные камикадзе. «Американский сборник», 1995, № 4.
3. *E. A. Федосов, B. T. Бобронников, M. H. Красильщиков, B. I. Кухтенко и др.* Динамическое проектирование систем управления автоматических маневренных летательных аппаратов. М., 1997.
4. *A. A. Лебедев, L. C. Чернобровкин.* Динамика полета беспилотных летательных аппаратов. М., 1973.
5. *L. С. Понтрягин, B. Г. Болтянский, P. B. Гамкрелидзе, E. F. Мищенко.* Математическая теория оптимальных процессов. М., 1969.
6. *B. R. Барсегян.* Управление линейными динамическими системами с ограничениями на значения частей координат фазового вектора в промежуточные моменты времени. «Доклады Национальной Академии Наук Армении», 2010, т. 110, № 3 (http://elib.sci.am/2010_3/07_3_2010.pdf).

УПРАВЛЯЕМЫЕ ЛЕТАТЕЛЬНЫЕ АППАРАТЫ И ПРОБЛЕМЫ
ДИНАМИЧЕСКОГО ПРОЕКТИРОВАНИЯ СИСТЕМ УПРАВЛЕНИЯ

*B. R. ԲԱՐԵԳՅԱՆ, դոկտօր ֆիզիկօ-մաթեմատիկական գիտություններ, պրոֆեսոր,
 начальник отдела Диаспоры Президиума НАН РԱ, պրոֆեսոր ԵԳՍ*

РЕЗЮМԵ

Важным аспектом обеспечения безопасности и оборонной мощи Республики Армения является развитие военно-промышленного сектора страны, в котором существенную роль имеет производство беспилотных летательных аппаратов.

В статье описаны разновидности беспилотных летательных аппаратов, основные направления их возможного применения и перспективы развития. Изложены основные принципы управления движением летательных аппаратов и компоненты их управления. С учетом особенностей динамики полета и системы управления летательных аппаратов, на основе теории оптимального управления, приведено решение задачи формирования алгоритма самонаведения управляемых летательных аппаратов при заданных условиях, который используется в процессе проектирования систем управления.

GUIDED AIRCRAFT AND PROBLEMS OF DYNAMIC DESIGN OF CONTROL SYSTEMS

*V. R. BARSEGHYAN, Doctor of Physical and Mathematical Sciences, Professor,
Head of the Diaspora Department of the NAS, RA Presidium, YSU Professor*

SUMMARY

An important aspect of ensuring the security and defense power of the Republic of Armenia is the development of the military-industrial sector of the country in which a significant role belongs to the production of unmanned aerial vehicles.

The article describes the types of unmanned aerial vehicles, the main areas of their possible use and development prospects. The basic principles of controlling the motion of aircraft and the components of their control are set forth. Given the nature of the flight dynamics and control system of aircraft, based on the theory of optimal control, the task solution of forming an algorithm for homing guided aircraft under the specified conditions is given which is used in the design process of control systems.

ՀԱԿԱՀՐԹԻՈՒՅՑԻՆ ԵՎ ՀԱԿԱՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

**Մ. Վ. ՍԱՐԿՈՍՅԱՆ, գեինմիկական գիրուրյունների դոկտոր,
«Երևանի կապի միջոցների գիրահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ
դնօրին, Եր ճ՛ՇՊՀ ինֆորմատիկա, հաշվողական գեինմիկա
և կառավարման համակարգեր ամբիոնի վարիչ**



Այսօր աշխարհի գրեթե բոլոր բանակներում կիրառվում են ճշգրիտ գեներերի տեսակներ, որոնց թվին են դասվում հեռակառավարվող հրթիռները և «խելացի» արկերը:

Եթե առաջինների վրա տեղադրված կառավարման սարքավորանքը հնարավորություն է տալիս հրթիռը ուղղորդելու դեպի տրված նշանակետը, ապա ականների դեպքում սարքավորանքը կառավարում է պայքարուն՝ պատճառելով ավելի մեծ վճառ:

ՈՒստի անհրաժեշտ է ստեղծել և կիրառել հակազդման այնպիսի տեխնիկական միջոցներ, որոնք հնարավորություն տան՝

– հրթիռների դեպքում՝ դրանք ոչ միայն շեղելու նշանակետից, այլև ուղղորդելու այլ նշանակետների վրա,

– արկերի դեպքում՝ դրանք պայքեցնելու ավելի շուտ կամ ուշ՝ նվազագույնի հասցնելով պատճառած վճառ:

Համապատասխան պաշտպանություն կազմակերպելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ կիրառվող գեների կառավարման եղանակների մասին: Հրթիռների կառավարումը կատարվում է մի քանի եղանակով: Դրանցից մեկը արբանյակային ռադիոռուղեվարական համակարգերի (ՁՊՍ, ԳԼՈՆԱՍՍ (GPS, ГЛОНАСС)) կիրառումն է: Դրանց միջոցով կառավարման համակարգն ստանում է տվյալ պահին հրթիռի գտնվելու կետի կոորդինատները և համապատասխան ծրագրապարատային միջոցներով կատարում է նրա բոլոր ուղղորդում դեպի նշանակետ: Մեկ այլ եղանակ կապված է տեսախցիկների օգտագործման և պատկերների մշակման հետ: Այս դեպքում ստացվող պատկերները մշակվում և համեմատվում են նշանակետի պատկերի հետ, և ըստ այդմ կատարվում է հրթիռի համապատասխան ուղղորդում:

Կան հրթիռներ, որոնց կառավարում են անմիջականորեն արբանյակները: Վերջիններս նշանակետների վերաբերյալ տեղեկույթն ստանում են հատուկ հեռադիտակների կամ համադրվող բացվածքով ռադարների (ՀԲՌ) միջոցով:


Կիրառվում են նաև հրթիռների կառավարման վերը նշված եղանակների համակցված տարրերակներ:

Ինչպես արդեն նշվել է, կան նաև կառավարվող տեսակի հրետանային արկեր: Դրանցում տեղադրված են ռադիոհեռաչափներ, որոնք գետնից որո-

շակի հեռավորության վրա պայքեցնում են արկը՝ պատճառելով առավելագույն վնաս: Որպես դրա օրինակ կարելի է հիշատակել ԱՌ-30 տիպի ռադիոպայքուցիչը, որը տեղադրվում է հասրիցների արկերի վրա:

Հրիոներից պաշտպանության կազմակերպում: Հայտնի են ԶՊՍ համակարգերի համար տարբեր խանգարիչ սարքեր, որոնք հեռարձակում են արբանյակային ազդանշանը ննանարկող հզոր ազդանշաներ: Դրա հետևանքով հրիոնի վրա տեղակայված ընդունիչը կատարում է սխալ հաշվարկներ և, համապատասխանաբար, տալիս թոփքի սխալ ծրագիր: Նման խանգարումները պետք է լինեն 3-ից ավելի, որպեսզի որոշակիորեն հավասարակշռեն արբանյակներից ստացվող ազդանշանները: Բայց նման խանգարումների ստեղծումը ամբողջովին չի լուծում պաշտպանության հարցը, քանի որ հրիոնի ուղեկարման խանգարումը կարող է նրան հաղորդել անկանխատեսելի ուղղություն:

Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում կառավարելի խանգարիչների կիրառումը, որոնք աշխատում են համատեղ և կարող են ազդանշաններ տալ այնպիսի հաջորդականությամբ, որ հրիոնի ուղեկարման համակարգը կհաշվարկի թոփքի մեր ցանկացած պլանը:



Նկ. 1. Համակարգի կառուցվածքը

Ինչ վերաբերում է արբանյակներից հրիոների անմիջական կառավարմանը խոչընդոտելուն, ապա այս դեպքում անհրաժեշտ է խանգարումներ ստեղծել հենց արբանյակի համար: Այդ նպատակով առաջարկվում են հատուկ տեխնիկական միջոցներ (նկ. 1), որոնք հենարավորություն են տալիս նախ հայտնաբերելու ՀԲՌ կրող արբանյակները, ապա նմանարկելու ՀԲՌ ազդանշանները

և որոշակի ձևով վերադարձնելու դրանք համապատասխան աղբյուրին: ՀԲՌ-ն, ստանալով խանգարիչի ազդանշանները, ստեղծում է կեղծ քարտեզներ, ինչի հետևանքով կատարվում է հրիոնի սխալ կառավարում:

Առաջարկվող համակարգը պետք է աշխատի հակառակեվարական համակարգի հետ համաձայնացված:

Ինչ վերաբերում է արբանյակի վրա տեղադրված օպտիկական հեռադիտակներին և դրանց միջոցով հրիոնների կառավարմանը, ապա դրանք տեսնում են միայն վրագետնյա օրյեկտները և չեն կարող հրիոններն ուղղորդել դեպի ստորգետնյա կամ քողարկված նշանակետեր:

Պաշտպանության կազմակերպումը «խելացի» արկերից: Նման արկերը, ինչպես արդեն նշել ենք, ունեն ռադիոկառավարվող պայքուցիչներ: Այդ պայքուցիչները դրավերյան ռադարներ են, որոնք որոշակի հեռավորության վրա հայտնաբերում են համապատասխան պինդ մակերևույթը և, կախված նախօրոք սահմանված չափից, պայքեցնում են արկը:

Այսպիսով՝ եթե կարողանանք ապակողմնորշել դռալերյան ռադարին, ապա այն կաշխատեցնի պայթուցիչը ժամանակից շուտ և, ցանկալի է, պայթյունի անվտանգ գոտում:

Առաջարկվում է ռադարի այնպիսի խանգարիչ, որը համապատասխան հաճախանային տիրույթում ճառագայթում է արկի վրա տեղադրված ռադարի արձակած ճառագայթները կրկնող ազդանշանները: Որպես արդյունք՝ ռադարը խանգարման ազդանշանն ընդունում է որպես «պատասխան»:

Այսպիսով՝ ժամանակակից գինակած բախումների փորձը ցույց է տալիս, որ «սրի և վահանի» մրցակցությունը շարունակվում է՝ փոխադրվելով տեղեկատվական տեխնոլոգիաների դաշտ և վերածվելով ռադիոէլեկտրոնային պայթարի, որի արդիական և արդյունավետ միջոցներից են «հակահրթիռային» և «հակահրետանային» արկերից պաշտպանության համակարգերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Радиовзрыватель АР-30» (<http://www.pirotek.info/Vspomogatelne/vzrivateli/ar30.htm>).
2. *Christopher Mims*. How Cruise Missiles Would Beat GPS Jammers in Libya. «MIT Technology Review», March 20, 2011 (<http://www.technologyreview.com/view/423363/how-cruise-missiles-would-beat-gps-jammers-in-libya>).
3. «Information About GPS Jamming». «GPS.GOV» (<http://www.gps.gov/spectrum/jamming>).
4. «Integrated system of radar (ADMS) protection against antiradiation missiles» (<http://www.kbradar.by/text/pages-view-42.html>).
5. *Lloyd E. Kinsey, Gregory C. Roush*. Time Delay Computer Using Fuze Doppler for Air-to-Air Missiles. United States Patent N 4135452, 23 Jan 1979 (<http://books.google.com.mx/patents/US4135452?printsec=claims#v=onepage&q=&f=false>).

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОРГАНИЗАЦИИ ПРОТИВОРАКЕТНОЙ И ПРОТИВОАРТИЛЛЕРИЙСКОЙ ЗАЩИТЫ

М. В. МАРКОСЯН, доктор технических наук, директор ЗАО «Ереванский научно-исследовательский институт средств связи», заведующий кафедрой информатики, вычислительной техники и систем управления ЕГУАС

РЕЗЮМЕ

Анализ современного вооружения показывает, что армиями многих стран в качестве средств нападения активно используются управляемые ракеты (в том числе, крылатые) и артиллерийские снаряды. В этой связи является актуальной организация защиты от указанных средств.

Организация защиты заключается в использовании средств, позволяющих симулировать обстановку и поставить помехи в виде выдвижения ложных целеуказаний для ракет и цели для артиллерийских снарядов.

Предлагаемые средства—помехопостановщики позволяют выводить из строя—обманывать навигационные системы ракет уводя их от цели, искашать спутниковые съемки с помощью САР, этим нарушая карты целей, и обманывать доплеровские радары снарядов, вследствие чего вызвать их досрочный взрыв на удаленных расстояниях от целей.

SOME ISSUES OF THE ORGANIZATION OF ANTI-BALLISTIC AND ANTI-ARTILLERY DEFENSE

M. V. MARKOSYAN, Doctor of Engineering, Head of «Yerevan Telecommunications Research Institute» CJSC, Head of the Chair of Computer Science and Control Systems, YSUAC

SUMMARY

The analysis of contemporary armaments indicates that armies of a considerable number of countries actively exploit guided missiles (including cruise missiles) and bombshells as offensive means. Thereupon, the organization of defense against the specified means becomes of actual importance.

The organization of defense embraces the means for simulating the situation and jamming in the form of false target designation for rockets and targets for artillery shells.

The proposed means—the noise jammers enable to put out of function, i. e., to mislead the missile navigation systems diverting from the target, distort the satellite images using the automatic control systems thus mistracking the target maps and deceive the Doppler missile radars, which causes their pre-term explosion at remote distances from the targets.

ՀԱԿԱՏԱՆԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱԾՈՒԱՆ ՓՈՐՁԲ ՂԱՐԱԲԱԴՅԱՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Է. Ա. ԱՊՐԻԱՍՈՎ, գեներալ-լեյտենանդ,
ՀՀ ԶՈՒ ԳԸ պետի առաջին լրեղակալ



Հրետանին հնագույն զորատեսակներից է: Այն միշտ համարվել է զորքերի կրակային հարվածի զիսավոր ուժը և ապահովել մարտի հաջողությունները օպերատիվ ու մարտավարական խնդիրների կատարման ժամանակ: Պատահական չէ, որ հրետանին անվանում են «պատերազմի աստված»:

Հրետանու բաղկացուցիչ մասն են կազմում հակատանկային հրետանային զորամասերը (ստորաբաժանումները), որոնք նախատեսված են առաջին մարտաշարակազմում գործող զորամասերի (ստորաբաժանումների)

հակատանկային պաշտպանությունը ուժեղացնելու, պաշտպանության խորքը միշրձված տանկային (զրահապատ) խմբավորումները ոչնչացնելու, մարտաշարակազմի թերի պաշտպանությունն ապահովելու, ինչպես նաև տանկավտանգ ուղղություններում առանձին գործող տանկերի և զրահապատ տեխնիկայի դեմ գործելու համար:

Հարաբաղյան հակամարտության ամբողջ ընթացքում հակառակորդի հարձակվող տանկերի և այլ զրահատեխնիկայի ոչնչացման գործում մեծ դեր են ունեցել ուղիղ նշանառությամբ կրակ վարելու միջոցները, հատկապես՝ հրետանային հակատանկային միջոցները: Այդ միջոցները կիրառվել են տարաբնույթ բարդ մարտական իրադրության արտակարգ իրավիճակներում և առավելագույնս արդյունավետ կերպով, ինչը պայմանավորված էր կիրառվող հակատանկային միջոցների մարտական հատկությունների լավ իմացությամբ և ռազմադաշտում անձնակազմի՝ առաջադրված մարտական խնդիրները արդյունավետ կերպով կատարելու ձգտմամբ:

Ռազմական գործողությունների ժամանակահատվածում կարևոր նշանակություն ունեցավ հակատանկային հրետանային զնի կազմավորումը, որը համարվեց ԽՍՀՄ-ից ժառանգված սպառազինությամբ: Գնդի՝ անձնակազմով համարումը կատարվեց հիմնականում ռուսական բանակում ծառայած հայ զինծառայողներով: Քանի որ չկային կահավորված զորավարժարաններ, ուսումնական լսարաններ և վարժաարքեր, անձնակազմի պատրաստումը կատարվում էր ինչպես մշտական տեղակայման վայրերում անցկացվող մարտավարական և մասնագիտական պարապմունքների ժամանակ, այնպես էլ մարտի դաշտում:

Թեև այդ ժամանակահատվածում չկային անձնակազմի համակողմանի պատրաստման համար անհրաժեշտ միջոցներ, այրուհանդերձ, մեզ պարտադրված պատերազմում մարտնչելու անհրաժշտության գիտակցումը ակտուա-

լացրեց անձնակազմի ներքին մղումների համակարգը, շարժադիթավորեց ակտիվ մասնակցությունը բոլոր նախաձեռնություններին:

Պատահական չէին հակառակորդին հակատանկային գնդի հասցրած կորուստները՝ 27 միավոր գրահատեխնիկա, որոնցից 26-ը՝ տաճկ: Գնդի անձնակազմի 6 զինծառայողներ պարզեցվեցին Մարտական խաչի տարբեր աստիճանի շքանշաններով, երկու տասնյակից ավելի զինծառայողներ՝ Արդիության ու Մարտական ծառայության մեղալներով և այլ կառավարական պարզներով:

Այդ ժամանակահատվածում L-72 զինված ուժերում կազմավորվեցին «Ֆագոտ» համալիրների և S-12 հրանոթների հակատանկային դիվիզիոններ: Տեղի ունեցած նաև կառուցվածքային փոփոխություններ, մասնավորապես՝ համագորային զորամասերի կազմում տարբեր ժամանակաշրջաններում (ըստ սպառագինության ձեռքբերման), կազմավորվեցին հակատանկային ստորաբաժանումներ:

Սկզբնական շրջանում որոշակի բարդություններ էր առաջացնում մասնագետների պակասը: Հարկ է նշել, որ հակատանկային ստորաբաժանումները հիմնականում համալրված էին կամավորներով: Այդ բավակազմի հետ գործնական պարապմունքների համար լայնորեն օգտագործվում էին Ասկերան-Ստեփանակերտ մայրուղով ընթացող մեքենաները՝ որպես նշանառման համար շարժվող օբյեկտ, որոնց օգնությամբ անձնակազմի մեջ ձևավորվում էր շարժվող նշանակենության ուղեկցման ունակություն, իսկ «հակատանկիստների» հիմնական կոփումը և հնտությունների համակարգի լիարժեք ձևավորումը տեղի էր ունենում մարտի դաշտում:

Պաշտպանության բանակի «Ֆագոտի» կառավարվող հրթիռների հակատանկային դիվիզիոններ սկզբնական շրջանում կազմավորվեց որպես հակատանկային կայանքներ ունեցող գումարտակ: Մասնակցելով մարտական գործողություններին՝ գումարտակը կարծ ժամանակամիջոցում ձեռք բերեց մարտական վարպետություն և, համալրվելով «Կոնկորս» ու «Շտում-Ս» հակատանկային համակարգերով, վերակազմավորվեց հակատանկային կործանիչ դիվիզիոններ:

Հակատանկային միջոցների մարտական կիրառումը պատերազմական գործողությունների սկզբնական շրջանում կատարվում էր իրենանու մարտական կանոնադրության հիմունքներով, սակայն հակառակորդի մարտավարության վերլուծության արդյունքները հնարավորություն տվեցին վերանայելու մեր հակատանկային միջոցների մարտական կիրառման և մարտավարության հիմնական ձևերը: Խոսքը վերաբերում է կրակային դիրքերի սարքավորմանը համակարգերի տարանջատված կիրառմանը: Այդ մարտավարության եռյունն այն էր, որ համակարգերը հաճախակի տեղափոխվում էին առաջնազդում նախօրոք սարքավորված մի դիրքից մյուսը, որի ուղղությամբ համակարգի հասանելիության գոտում գործում էր հակառակորդի գրահատեխնիկան: Կատարվում էր գրահատեխնիկայի «որսում»:

Այդ տարիներին հակառակորդի ամենալայնածավալ գրոհներին մասնակցած տանկային ստորաբաժանումներն իրենց կազմում ունեին 15-20 տաճկ:

Երկու տաճկի խոցումից հետո հակառակորդը հրաժարվում էր հետագա գրոհներից և նահանջում՝ մարտի դաշտում բողնելով խոցված տաճկերը: Մի քանի անհաջող փորձերից հետո հակառակորդը փոխեց իր մարտավարությունը: Տաճկերը օգտագործվում էին դարաներից՝ զույգերով: Առաջին տաճկը դրւում էր զալիս քարստոցից և մի քանի կրակոց արձակելով՝ անցկացնում էր կրակային հետախուզում, իսկ երկրորդը դարանում սպասում էր մեր հակատանկային միջոցների կողմից կրակոցի կամ հակատանկային հրթիռի արձակման, ինչից հետո անմիջապես հետևում էր դարանում գտնվող տաճկի կրակոցը մեր հակատանկային միջոցների կրակի ուղղությամբ:

Վերլուծելով հակառակորդի գործողությունները՝ մեր հակատանկային ստորաբաժանումները նոյեմբեր փոխեցին մարտավարությունը, այսինքն՝ հակատանկային ստորաբաժանումների դասական եղանակով կիրառումը հետին պլան մղվեց, և բնագծերում դրանք չբացազատվեցին դիվիզիոնների կամ մարտկոցների կազմով: Մեր ստորաբաժանումները կազմակերպում էին կրակային դարաններ, գրադենում էին առանձին դիրքեր կամ, այլ կերպ ասած, ստեղծում էին հակատանկային պաշտպանության հանգույցներ (օջախներ), ինչն էլ ավելի արդյունավետ միջոց էր հակառակորդի տաճկերի դեմ պայքարում: Համատեղվում էր «Ծոտում-Ա» և «Ֆագոտ» կայամքների կիրառումը, ինչը հնարավորություն էր տալիս խոցելու հակառակորդի գրահատեխնիկան և հեռավոր մատույցներում, և՝ մոտ տարածություններում:

Թաքստոցից կամ դրանից դուրս կրակ էր վարվում նախօրոք հետախուզված նշանակետերի ուղղությամբ: Որպեսզի հակառակորդը ստիպողական կրակ արձակեր, կատարվում էին մի քանի ցուցադրական գործողություններ՝ կապված քարստոց վերադառնալու և նորից դրանց տեսադաշտում հայտնվելու հետ: Հակառակորդի պատասխան կրակից հետո ճշգրտվում և անմիջապես խոցվում էին առաջնային գծում կամ մոտակա խորությունում գտնվող նշանակետերը:

S-12 համակարգերով սպառագինված ստորաբաժանումների մարտական կիրառման մարտավարության հիմնական ձևը ամբողջ մարտկոցով որևէ ուղղությունում ծածուկ տեղակայված մնալու ու անհրաժեշտության դեպքում հակառակորդի համար անսպասելի կրակ բացելու էր:

Հակատանկային միջոցների կիրառումը հատկապես արդյունավետ էր 1993–1994 թվականներին: Այդ ժամանակահատվածում հակառակորդը մարտի դաշտում բողեց մեծ քանակությամբ խոցված գրահատեխնիկա:

Ներկայումս հակատանկային ստորաբաժանումների անձնակազմի մասնագիտական պատրաստումը կատարվում է համակարգչային «Պանորամ», «Կարատ» և «Ծղբա» վարժասարքերի կիրառմամբ, իսկ մասնագիտական հմտությունները կատարելագործվում են մարտավարական գորավարժությունների ընթացքում: Նշված վարժասարքերի կիրառմամբ անձնակազմի մասնագիտական պատրաստումը հնարավորություն է տալիս լսարանային պայմաններում առավելագույնս նմանարկելու մարտական իրավիճակները և ապահովելու հակատանկային միջոցների հաշվարկի հրամանատարների, նշանառուների և հակատանկային կառավարվող հրթիռների համայնքների օպերատորների

բարձր մակարդակի մասնագիտական պատրաստություն՝ առանց մարտական արկերի և հրթիռների կիրառման:

Նշենք, որ ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի համաձայն՝ բոլոր հակատանկային ստորաբաժանումները ներկայում լրահամալրված են արդիական հակատանկային միջոցներով, ինչը հնարավորություն է տպիս մեծացնելու ՀՀ Զինված ուժերի հակատանկային կարողությունները և սահմանի ամրող երկայնքով ապահովելու արդյունավետ հակատանկային պաշտպանություն:

ОПЫТ ПРИМЕНЕНИЯ ПРОТИВОТАНКОВЫХ СРЕДСТВ НА ПРИМЕРЕ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

*Э. А. АПРИАМОВ, генерал-лейтенант,
первый заместитель начальника ГШ ВС РА*

РЕЗЮМЕ

В военный период Карабахского конфликта большую роль в деле уничтожения танков и бронетехники противника сыграли артиллерийские противотанковые средства, предназначенные для борьбы с бронетехникой путем стрельбы прямой наводкой. Эти средства обеспечивали эффективное поражение целей в различных экстремальных условиях боевой обстановки, что было обусловлено хорошим знанием личным составом боевых возможностей и тактико-технических характеристик этих средств и высоким боевым духом.

Изначально боевое применение противотанковых средств осуществлялось на основе боевого устава артиллерии, однако по результатам анализа были внесены корректировки в тактику их боевого применения. Благодаря специальным тактическим приемам с отступлением от классических подходов эффективность поражения бронированных целей противника существенно повысилась.

В настоящее время профессиональная подготовка личного состава противотанковых подразделений ВС РА осуществляется с учетом опыта, накопленного во время Карабахской войны, и с применением современных компьютерных тренажерных устройств «Панорама», «Карат», «Цепь», которые обеспечивают полную имитацию боевой обстановки. Система профессиональных навыков личного состава совершенствуется в ходе тактических учений.

Согласно государственной программе РА по развитию Вооружения и военной техники, все противотанковые подразделения ВС РА укомплектованы современными противотанковыми средствами, что позволяет существенно повысить противотанковые возможности ВС и обеспечить противотанковую оборону по всей линии границы.

THE EXPERIENCE OF USING THE ANTI-TANK WARFARE ON THE EXAMPLE OF THE KARABAKH CONFLICT

E. A. APRIAMOV, Lieutenant-General, First Deputy Chief of the RA AF Main Staff

SUMMARY

During the Karabakh war the artillery anti-tank warfare, designed to combat armored vehicles by direct fire, has played a great role in destructing enemy tanks and armored vehicles. These means provided an effective target engagement in various extreme combat situations, which depended on a good awareness of the personnel combat capabilities, the performance characteristics of these means, as well as the high morale.

Initially, the operational use of the anti-tank warfare was carried out upon the artillery field disciplines; however, according to the analysis adjustments were made in the tactics of the anti-tank warfare operational use. Thanks to the special tactical methods of retrieving from the classical approaches the efficiency of the enemy armored target engagement seriously rose.

At this moment the expert training of the anti-tank unit personnel in the RA AF is carried out with the account of the experience gained throughout the Karabakh war and with the use of modern computer simulators, namely «Panorama», «Carat», «Chain», which provide a complete imitation of the combat situation. The system of the personnel professional skills is developed in the course of tactical exercises.

In line with the RA state program on the Development of the Weapons and Military Equipment, all the anti-tank units in the RA AF are supplied with anti-tank weapons, which enables to significantly increase the anti-tank capacities of the AF and ensure the anti-tank defense along the entire border line.

**ԶՈՒ-ՈՒՄ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԵՎ ԿԱՐԳՈՒԿԱՆՈՒՆԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՆՈՐ ՈՐԱԿԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ԱՆՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԻ ՄՈԴԵԼ
Կ. Ռ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, գնդապետ, <<ԶՈՒ-ի Կապի զորքերի պետ-Կապի
և ԱՎՀ վարչուրյան պետ, Ա. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, մայոր, <<ԶՈՒ-ի ԱՀՏԱ
վարչուրյան զինվորական կարգապահուրյան և տղիալ-իրավական
աշխալաքների բաժնի սպա-իրավաբան, Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ,
փոխգնդապետ, պեխմանիկական զիկուրյունների քեկնածու, <<ԶՈՒ-ի Կապի
և ԱՎՀ վարչուրյան ԱՎՀ բաժնի ծրագրավորման բաժանմունքի պետ**



Զինծառայողների շրջանում կարգապահուրյան և կարգուկանոնի պահպանման ոլորտում բարեփոխումները անհրաժեշտ են ոչ միայն զինվորական ստորաբաժանումները բարձր մակարդակի նարտական պատրաստության վիճակում պահելու համար, այլև

այն հանգամանքի բերումով, որ զինվորական կանոնադրության դրույթների խախտումը կարող է հանգեցնել երիտասարդ զինվորների շրջանում զոհերի:

Խնդրո առարկա պրոբեմը շոշափում է այնպիսի հարցեր, որոնք կապված են օպտիմալացման պաշտպանական անվտանգային խնդիրների լուծման մերույթի հետ¹:

Կան այդ կարևոր խնդրի որակական լուծման տարբեր ռազմավարություններ, որոնք տարբերվում են կիրառվող մոտեցումներով և գնահատումներով: Մի շարք մերույթների հիմքում գորամասերում այնպիսի լարվածության ստեղծման հայեցակարգն է, որը կնպաստի ոչ միայն զինվորական կարգապահության մշտական պահպանման անհրաժեշտության ընթացմանը, այլև կանոնադրական դրույթները չխախտելու կայունացած սովորության ձևավորմանը: Այն անվանենք մշտական ճշշման ռազմավարություն (ՄՃՌ):

Բանակի գործունեությունը պայմանավորված է հրամանների ճիշտ և ժամանակին կատարմամբ: Հրամանը հստակ կերպով, ճշգրտորեն և տրված ժամ-

¹ Տես Կ. Ռ. Մուրադյան, Ա. Գ. Գևորգյան, Ա. Ա. Մուրադյան, Պետության ազգային անվտանգության ուղղված սպառնայիքների գնահատման, կամխատեման և դրանց հակադիեցության մոդել: «ՀԲ», 2010, հմ. 3, նաև՝ Կ. Ռ. Մուրադյան, Ա. Գ. Գևորգյան, Ա. Ա. Մուրադյան, Վերահսկման ընթացակարգների օպարման լայնության որոշման մի մերույթ մասին: «ՀԲ», 2010, հմ. 1, Կ. Ռ. Մուրադյան, Ա. Ա. Մուրադյան, Ազգային անվտանգության դեմ ուղղված համակարգչային սպառնայիք: «ՀԲ», 2011, հմ. 1–2:

կետներում կատարելու ունակությունը բնութագրում է կառավարման որակը և անմիջականորեն կախված է զինվորական կարգապահության վիճակից: Կառավարման գործընթացը բնութագրող բաղադրատարերի միջև տարրեր կախումների և պատճառահետևանքային կապերի պարզությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու դրանց յուրահատկությունը և ձևավորելու մեր խնդրի լուծման մեթոդը:

Կառուցենք մի մաթեմատիկական մոդել, որն արտապատկերի կախումներն ըստ բոլոր այն հիմնական կատեգորիաների, որոնք բնութագրում են զորամասերում զինվորական կարգապահության ու կարգուկանոնի ազդեցությունը դրանց մարտական պատրաստության ու իրավախախտումների թվի վրա: Այս մոդելը հնարավորություն կտա որոշելու հրամանի կատարման բնույթի և կարգապահության ու կարգուկանոնի վիճակի միջև կապը և հիմնավորելու մի շարք դրույթներ ու մերողներ, որոնք վերաբերում են բանակում այդ ոլորտում կատարվելիք բարեփոխումների մշակման և իրագործման հետ:

Բանակը բազմամակարդակ աստիճանակարգային $\Psi_A = \{\psi_i\}$, $i=1, 2, \dots, k_y$ կառույց է, որում i -րդ հիմներսի արժեքների նվազմամբ պայմանավորվում է նրա կառավարման Ψ_i -րդ մակարդակի առաջնահերթությունը: Յուրաքանչյուր Ψ_i մակարդակին համապատասխանում է զինվորական ստորաբաժանումների կամ զինվորական հաստիքների $Z(i) = \{z_1(i), z_2(i), \dots, z_n(i)\} \in \Psi_i$ բազմություն: Դրանք անվանենք օբյեկտներ: $H_t(i, s)$ -ով նշագրենք մի հրաման, որը ձևավորվել է Ψ_i -րդ մակարդակում և նախատեսված է մինչև Ψ_s -րդ մակարդակը հաջորդական կատարման համար: Այդ դեպքում կառույցի կառավարման Ψ_j -րդ ($i < j \leq s$, $j \leq k_y$) աստիճանակարգային մակարդակի համար այն կերածվի ժամանակի ու տարածության մեջ փոխկապված համապատասխան $H_t^j = h(H_t(i, s))$ կարգադրությունների համախմբի: Նպատակահարմար է դրանք ներկայացնել հետևյալ մատրիցի տեսքով.

$$H_t^j = \begin{vmatrix} h_{11}(t, j) & h_{12}(t, j) & \dots & h_{1q_t^j}(t, j) \\ h_{21}(t, j) & h_{22}(t, j) & \dots & h_{2q_t^j}(t, j) \\ \dots & & & \\ h_{r_t^j 1}(t, j) & h_{r_t^j 2}(t, j) & \dots & h_{r_t^j q_t^j}(t, j) \end{vmatrix}: \quad (1)$$

Այս մատրիցն արտապատկերում է հրամանի մանրամասնեցման և բաղկացուցիչ մասերի արողիւման բնույթը և հետագա կատարման համար այդ մասերի բաշխումն ըստ օբյեկտների բազմության: r_t^j պարամետրը որոշում է հրամանի համատեղ կատարման համար նախատեսվող օբյեկտների թիվը և որանով իսկ՝ նրա մասշտաբայնությունը: q_t^j պարամետրը բնութագրում է Ψ_j -րդ մակարդակում $H_t(i, s)$ հրամանի արողիւման ու զուգահեռացման յուրահատկությունը և ներկայացնում է նրա մանրամասնան խորությունը: Որքան բարձր է Ψ_j մակարդակը, այնքան մեծ են q_t^j և r_t^j արժեքները, քանի որ մեծանում են

ինչպես $H_t(i, s)$ կատարվող հրամանի մանրամասնման խորությունը, այնպես էլ դրա կատարման գործում ներգրավված զինծառայողների թվաքանակը:

H_t^j մատրիցի ձևավորման ժամանակ պետք է գոյություն ունենա

$$f_h(h_{c,e}(t,j)) : H_t^j \rightarrow Z(i) = z_l(i) \quad (2)$$

արտապատկերման ֆունկցիան, որը $h_c, e(t,j) \in h_t^j, c \leq q_t^j, e \leq r_t^j$ մատրիցի յուրաքանչյուր տարրին միանալու կերպով համապատասխանեցնի մատրիցում e ինդեքսով նշագրված $z_l(i), l \leq n$ օբյեկտը, որտեղ n_i -ը Ψ_i մակարդակում եղած օբյեկտների թիվն է: Կառավարման շղթա անվանենք բազմանակարդակ կառույցի տարրերի շարանը՝

$$V_r = \{v_1(i, r), v_2(i + k_z^i, r), \dots, v_s(i + s - 1 + k_z^{i+s-1}, r)\} \in \Psi_A, \quad \forall v_j(i, r) \in Z(i), \quad (3)$$

որը ձևավորված է լայտ i արժեքների աճման և ներկայացնում է հրամանի կատարման հնարավոր ուղղությունը Ψ_i մակարդակից դեպի Ψ_{i+s-1} մակարդակ: k_z^i պարամետրը, որն անվանենք շփումային ցուցանիշ, որոշում է, թե քանի մակարդակ կա կառավարման դիտարկվող օբյեկտի և հրամանն անմիջականութեան տված հրամանատարի մակարդակների միջև, և ստորաբար բավարարում է $k_z^i=1$ պայմանին: Տրվում է Ψ_A աստիճանակարգային կառույցի սահմանային մակարդակների օբյեկտների միջև ստորադասության հարաբերությունը՝

$$z_e(i + k_z^d) = \zeta(z_d(i), \theta(d, e)), \quad \theta(d, e) = (0, 1), \quad (4)$$

որտեղ $\theta(d, e)$ -ը կառավարման միևնույն շղթային պատկանելության ($z_d(i), z_e(i + k_z^d)$), $k_z^d \geq 1$ գույքի ցուցանիշն է: Դրանով իսկ որոշվում է $z_d(i)$ -ի տարրի նկատմամբ $z_e(i + k_z^d)$ տարրի ստորադաս դիրքը, եթե դրանք երկուսն էլ մտնում են կառավարման որոշակի V_m -ից շղթայի մեջ.

$$\theta(d, e) = 1 \rightarrow (Zd(i), Ze(i + k_z^d)) \in V_m: \quad (5)$$

$\theta(d, e)$ ցուցանիշը հնարավորություն է տալիս առանձնացնելու այն օբյեկտների գույքերի բազմությունը, որոնք հրամանատար-ստորադաս տիպի կառավարման շղթայի կապված օղակներն են, այսինքն՝

$$\forall(d, e) \quad \theta(d, e) = 1 \rightarrow \exists r, \quad v_j(i, r) = z_d(i),$$


$$v_{j+1}(i + k_z^d, r) = z_e(i + k_z^d), \quad (v_j(i, r), v_{j+1}(i + k_z^d, r)) \subseteq V_r: \quad (6)$$

Մոցնենք հրամանի կատարելիության աստիճանի ցուցանիշը՝ $0 \leq \xi_t(H_t(d, e)) \leq 1$: Այն հնարավորություն է տալիս օբյեկտիվ կերպով զնահատելու $z_s(i)$ օբյեկտից ստացված հրամանը կատարելու օբյեկտի $z_e(i + k_z^d)$ կարողությունը, եթե նրա կարգուկանոնը համապատասխանում է կանոնադրության կարգապահական պահանջներին: Այսպիսով՝ $\varepsilon_t(H_t(d, e)) = 0$ դեպքում հրամանը օբյեկտիվ պատճառներով հնարավոր չէ կատարել: Այդ դեպքում

$$0 \leq x(d, e, r, i + 1) \leq \varepsilon_t(H_t(d, e)), \quad z_e \in \psi_i, \quad (k_z^d = 1)-ով \quad (7)$$

նշագրենք փոխանցումային ցուցանիշը, որը բնութագրում է բանակի աստիճանակարգային կառույցվածքի ψ_{i+1} -ից մակարդակը ներկայացնող $v_{j+1}(i + 1, r) = z_e \in V_r$ -ն, այսինքն՝ օբյեկտի ունակ պատրաստությունը՝ կատարելու $v_j(i, r) = z_d$

$\in V_r$ -ից ստացված հրամանը: $x(d, e, r, i) = \varepsilon_i(H_t(d, e))$ դեպքում հրամանի կատարումը գոյություն ունեցող հաճախաբների հաշվառմամբ անթերի է, իսկ $x(s, e, r, i+1)=0$, $\varepsilon_i(H_t(d, e))>0$ իրավիճակին համապատասխանում է այն դեպքը, եթե հրամանը լիովին անտեսվում է:



Նկ. 1. Ψ_A աստիճանակարգային կառույցում ձևավորված կառավարման շղթայի օրինակ

Դիցուք $(z_d(i-1), z_e(i)) \in \Psi_A$ տարրերի զույգով անցնում է կառավարման շղթաների որոշ համախումբ, ընդունի դրանք ձևավորում են բազմությունների լուսանիք՝

$$\Omega(d, e) = \{V_1(d, e), V_2(d, e), \dots, V_j(d, e), \dots, V_{l_e^d}(d, e)\}, \quad (8)$$

որտեղ l_e^d -ն դրա տարրերի թվաքանակն է:

$$\varphi_0(d, e) : \Omega(d, e) \rightarrow X_e^d = \{x_j\}, x_j = x(d, e, j, i) \in V_j(d, e), j \leq l_e^d \quad (9)$$

արտապատկերման հետևանքով յուրաքանչյուր $V_j(d, e) \in \Omega(d, e)$ բազմության դիմաց կունենանք փոխանցումային ցուցանիշի համապատասխան արժեք՝ $x(d, e, j, i)$: Եթե $z_d(i-1)$ -ից ստացված հրամանը կատարում են մի քանի օրյենտում՝ $Z_t(i) = \{z_m(n, t)\}$, $z_m(n, t) = Z_n(i)$, $m = \overline{1, t_i}$, ապա անհրաժեշտ է ընդհանրացված ձևով գնահատել դրա կատարելիությունը: $Z_t(i)$ բազմությունը բաժանենք երկու չհատվող ենթաբազմություն՝

$$Z_t^k(i) = Z_t^k(i) \cup Z_t^d(i), Z_t^k(i) \cap Z_t^d(i) = \text{null}, \\ Z_t^k(i) = \{z_e^k(n_1, t)\}, e = \overline{1, m_1}, Z_t^d(i) = \{Z_e^k(n_2, t)\}, c = \overline{1, m_2}, m_1 + m_2 = t_i : \quad (10)$$

$Z_t^k(i)$ ենթաբազմությունը ձևավորել են այն օրյենտները, որոնց միջև կա իրավիճակային կախում, այսինքն՝ նրանցից յուրաքանչյուրի կողմից հրամանի չկատարումը համարժեք է բոլորի կողմից հրամանի չկատարմանը: Այդ դեպքում իրավիճակայնորեն ընդհանրացված ցուցանիշի արժեքը որոշվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$y_k(i, t) = \prod_{(e)} k_c(d, e) x(d, e, t, i), \quad (11)$$

որտեղ $k_c(d, e) \geq 1$ -ը հարթման գործակիցն է, որը կախված է մակարդակների

թվից և փոխանցումային ցուցանիշների սահմանային գույքերի արժեքների տարբերությունից:

$Z_t^d(i)$ ենթարազմության օբյեկտների միջև որոշարկված է դիզյունկտիվային (անջատիչ) կախումը, այսինքն՝ նրանցից որևէ մեկի կողմից իրամանի չկատարում կազմի դիզյունկտիվորեն ընդհանրացված ցուցանիշի արժեքի նվազման վրա, ընդ որում, այդ ցուցանիշը հաշվարկվում է ըստ հետևյալ արտահայտության՝

$$y_c(i, t) = \sum_{(e)} x(d, e, t, i) / m_2 : \quad (12)$$

Կառավարման դիտարկվող V_r -րդ շղթայի համար ψ_k մակարդակի նկատմամբ $y(k, r)$ ընդհանրացված ցուցանիշի համատեղ հաշվարկը ենթադրում է բոլոր իրավիճակային բաղադրատարերի հաջորդական միավորում որպես կառավարման միասնական օբյեկտի, որը կարող է մտնել իրամանի դիզյունկտիվային բաղադրիչի մեջ: Դիցուք իրամանը տրվել է Ψ_i -րդ մակարդակում և V_r կառավարման որոշ շղթայով հաջորդաբար անցնում է մի քանի աստիճան, որոնցից վերջինը Ψ_k -րդ մակարդակն է: Այդ դեպքում $\xi(i, k, r)$ -ը ընդհանրացված ցուցանիշը, որը բնուրագրում է ելակետային մտահրացմանը կառավարման V_r շղթայով կատարված իրամանի համապատասխանության աստիճանը, կորոշվի հետևյալ արտահայտությամբ՝

$$\xi(i, k, r) = \prod_{j=k}^{i-1} y(k, r), \quad k < i - 1 : \quad (13)$$

Եթե $i=1$, ապա իրամանը տրվել է գլխավոր իրամանատարը: $\xi(i, k, r)$ ցուցանիշը պատահական փոփոխական է, որի արժեքները փոփոխվում են տրված $0 \leq \xi(i, k, r) \leq 1$ տիրույթում: Ենթադրենք, թե իրամանը համարվում է ըստ որոշ $\tau(\delta_0, \delta_1)$ չափանիշի բավարար չափով կատարված, եթե $\xi(i, k, r)$ արժեքները գտնվում են համապատասխան սահմաններում՝ $\delta_0 \leq \xi(i, k, r) \leq \delta_1$: Այդ դեպքում $\tau(\delta_0, \delta_1)$ պահանջին կատարված իրամանի համապատասխանության հավանականությունը կարելի է հաշվարկել Լապլասի ֆունկցիայով՝

$$p(\delta_0 \leq \xi(i, k, r) \leq \delta_1) = \Phi((\delta_1 - m_0) / \sigma) - \Phi((\delta_0 - m_0) / \sigma), \quad (14)$$

որտեղ m_0 -ն $\xi(i, k, r)$ պատահական մեծության մաքենատիկական սպասումն է, իսկ σ -ն՝ նրա ցրումը: (δ_0, δ_1) գույքերի արժեքների փոփոխակումը հնարավորություն է տալիս գնահատելու իրամանի կատարման որակը, և $\delta_1=1$ -ի դեպքում կունենանք $\tau(\delta_0, \delta_1)$ չափանիշի առավելագույն արժեքը:

Կառավարման բոլոր $\Omega(d, e)$ շղթաներով ($z_d \in \psi_{i-1}, z_e \in \psi_i$) սահմանային գույքի ընդհանրացված փոխանցումային ցուցանիշը որոշվում է հետևյալ արտահայտությունից՝

$$\xi_e^d = \sum_{(r)} \xi(i-1, i, r) / l_e^d : \quad (15)$$

Կառավարման $z_e(i)$ օբյեկտով անցնող շղթաների բազմությունը կորոշվի որպես՝

$$\Omega(e) = \bigcup_{(d)} \Omega(d, e), \quad d = \overline{1, p_e} : \quad (16)$$

Այդ դեպքում z_e օբյեկտի ընդհանրացված փոխանցումային ցուցանիշը, որն անվանենք որակի փոխանցումային ցուցանիշ, հավասար կլինի՝

$$\xi_e(\varepsilon_t) = 1 - \varepsilon_t - \sum_{(d)} \xi_e^d / p_e, \quad \varepsilon_t \geq \sum_{(d)} \xi_e^d / p_e, \quad 0 \leq \xi_e \leq 1, \quad (17)$$

որտեղ ε_t -ն H_t հրամանի կատարվածության աստիճանի ցուցանիշն է (7) և սովորաբար $\varepsilon_t=1$:

ξ_e պարամետրը կարող է բնութագրել ինչպես առանձին զինծառայողի, այնպես էլ զորամասի կողմից հրամանը կատարելու պատրաստությունը և կարողությունը:

Բարձր աստիճանի կարգապահության և կարգուկանոնի հասնելու դեպքում որոշ H_t^s հրամանի համար $x_j \in X_e^d$ և $x_m \in X_e^m$, $j \leq l_e^d$ փոխանցումային ցուցանիշների ցանկացած զույգի արժեքները կլինեն համարժեք՝ d -ից, m -ից և s -ից անկախ: $z_e(i)$ օբյեկտով անցնող $\Omega(e)$ շղթաների բազմությունը ենթարկենք հետևյալ արտապատկերման՝

$$\varphi_0(e) : \Omega(e) \rightarrow y_e = \{y_j\}, \quad (18)$$

և ցրումը հաշվարկենք ըստ ստացված փոխանցումային ցուցանիշների արժեքների՝

$$\sigma(Y_e) = \sum_{(j)} (y_j - m_e)^2 / p_e, \quad m_e = \sum_{(j)} y_j / p_e : \quad (19)$$

$\sigma_e(Y_e) = 1 - \sigma(Y_e)$ ցուցանիշն անվանենք փոխանցումային ցրում: Հրամանի կատարման որակը պետք է կախված չինի այն բանից, թե ինչպես և որտեղ է հրամանը ձևավորվել, իսկ այդ որակը բնութագրող $\sigma_e(Y_e)$ ցուցանիշի արժեքի տատանումն ըստ հրամանի աղբյուրների պետք է լինի փոքր. որքան նրա արժեքը մոտ է 0-ին, այնքան $z_e(i)$ օբյեկտում բարձր է կարգուկանոնի մակարդակը:

Դիցուք տրված են դիտարկված ցուցանիշները ձևի $a = f_a(\sigma_e)$ պարամետրի և մասշտարի $b = f_b(\xi_e)$ պարամետրի կերպափոխելու ֆունկցիաները: Այդ կերպափոխման ֆունկցիաներն ապահովում են $z_e(i)$ օբյեկտի համար փիճակագրական տվյալների որոշ ընտրանքի համապատասխանությունը գամմաբաշխնան օրենքին.

$$f_e(x_0, a, b) = \begin{cases} (1/\Gamma(a))x_0^{a-1}(\tau)b^{-a} \exp(-x_0(\tau)/b), & x_0(\tau) > 0, \\ 0, & x_0(\tau) \leq 0 \end{cases} \quad (20)$$

որտեղ $x_0(\tau)$ -ը $z_e(i)$ օբյեկտի τ տիպի խանգարումների միջև եղած ժամանակամիջոցը որոշող պատահական փոփոխական է: Ընդամեն կատարվել է համաձայնության մասին վարկածի ստուգում Կոլմոգորովի կամ Միզեսի չափանիշներով:

Ցանկացած թվով անկախ գամմա-բաշխված $x_o(a_1, b) + x_o(a_2, b) + \dots + x_o(a_n, b)$ մեծությունների (մասշտարի միևնույն b պարամետրներով) գումարը նույնպես ենթարկվում է գամմա-բաշխման, սակայն՝ $a_1, a_2 + \dots + a_n$ b պարա-


մետրներով: $a=1$, $b>0$ դեպքում գամմա-բաշխումն ստանում է ցուցային բաշխման ձև, որը դրա մասնավոր դեպքն է.

$$F(x_o(\tau)) = \begin{cases} 1 - e^{-\lambda x_o}, & x_o \geq 0; \\ 0, & x_o < 0, \end{cases} : \quad (21)$$

Ցուցային բաշխման կարևոր հատկանիշ է մի քանի օրյեկտի մասին ընդհանուրացված տվյալների ստացման անհրաժեշտության դեպքում անկախ պատահական փոփոխականների ինտենսիվության λ պարամետրի արժեքների գումարման հնարավորությունը:

Դիցուք ունենք զինվորական ստորաբաժանումների $z_1(\lambda_1^\tau), z_2(\lambda_2^\tau), \dots, z_n(\lambda_n^\tau)$ բազմություն, որոնցից յուրաքանչյուրի համար որոշված է τ տիպի իրավախախտումների ինտենսիվության համապատասխան պարամետրը: Այդ դեպքում գումարային ինտենսիվությունը կլինի $\lambda_\Sigma = \lambda_1^\tau + \lambda_2^\tau + \dots + \lambda_n^\tau$, իսկ $z_E(\lambda_\Sigma^\tau)$ ընդհանրացնող կախումը կրնդունի նկ. 2-ում պատկերված տեսքը:

Կառավարման այն շղրաների բազմությունը, որոնցով հրամանների կատարումը կարող է հանգեցնել $z_e(i)$ օրյեկտի համար $\xi(i, k, r) < \delta_o$ պայմանին, անվանենք $G_e \subset G_R(G_R^0, G_R^1)$ խճերը: Այդ ոխուկը կարող են պայմանավորված լինել արտաքին G_R^0 և ներքին G_R^1 պատճառներով:



Նկ. 2. $z_1(\lambda_1^\tau), z_2(\lambda_2^\tau), \dots, z_n(\lambda_n^\tau)$
զինվորական ստորաբաժանումներում
τ տիպի խախտումների միջև
ժամանակամիջոցի ցուցային բաշխման
և նրանց $z_\Sigma(\lambda_\Sigma^\tau)$ ընդհանրացնող
բաղադրիչի օրինակ

Չորակոչիկների կյանքի պայմանների փոփոխումը հանգեցնում է օրգանիզմի այնպիսի հատուկ հարմարումային մեխանիզմների «գործարկմանը», որոնք ապահովում են գոյության՝ նոր իրադրությանը հարմարումը: Համարենք, որ զինվորական կարգապահության խախտմանը պայմանավորված պատահարները հարմարման խարարման հետևանք են: $p_a(b_k)$ -ով նշագրենք որոշ b_k -րդ զինծառայողի հարմարման խախտման հավանականությունը, որը ոխուկի խճքում զգալիորեն մեծ է, քան մնացած զորակոչիկների շրջանում և որոշվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$p_a(b_k) = f_R(G_R^0, G_R^1): \quad (22)$$

$0 \leq \eta(z_e) \leq 1$ -ով նշագրենք ընդհանրացված ցուցանիշը, որը բնութագրում է զորամասի հնարավորությունը նպաստելու զինծառայությանը զորակոչիկների արագ հարմարմանը հետևյալ պայմանով՝

$$\min p_a(b_k): \quad (23)$$


Զինծառայողի հարմարման գործընթացը ներկայացնենք կախումների համակարգի միջոցով՝

$$\begin{cases} f_1^{(d)}(b_k, t) = \lambda_d(k) e^{-\lambda_d(k)t}, & 0 \leq f_1^{(d)}(b_k) \leq 1; \\ f_2^{(g)}(b_k, t) = 1 - \lambda_g(k) e^{-\lambda_g(k)t}, & 0 \leq f_2^{(g)}(b_k) \leq 1 \end{cases} : \quad (24)$$

$f_1^{(d)}(b_k, t)$ ֆունկցիան ցույց է տալիս t պահին b_k -րդ զինծառայողի վրա գործադրվող ճնշումը, որը բնուրագրվում է $\lambda_d(k)$ ինտենսիվությամբ։ Համարենք, որ գործադրված ճնշման $f_{11}^{(d)}(b_k, t)$ բաղադրատարրը դրական է և կողմնորշված է զինծառայողին կարգուկանոնի և կարգապահության վարժեցմանը։

Դիցուք $\lambda_g(k)$ ինտենսիվությամբ կատարվող $f_2^{(g)}(b_k, t)$ հարմարման գործընթացի հետևանքով $f_1^{(d)}(b_k, t)$ ճնշման ուժն ըստ ժամանակի նվազում է (Ակ. 3): $R_1(b_k)$ -ի և $R_2(b_k)$ -ի արժեքներով տրված ուղիղները որոշում են գործադրվող ճնշման նկատմամբ երկու տարրեր ձևի b_k զայտնությունը։ Եթե այն որոշվում է $T_a(b_k)$ պահին $S_1(b_k)$ կետում $R_1(b_k)$ -ի ունեցած արժեքով, ապա կիրառված ճնշումը կլիմի ավելի ուժեղ, քան զինծառայողի դիմադրողականությունը, և բավական, որպեսզի տեղի ունենա պատահար՝ կապված կարգապահական բնույթի խախտման հետ։ Հատման $S_2(b_k)$ կետում b_k զինծառայողի վարքը համապատասխանում է կանոնադրության պահանջներին, և $T_G(b_k)$ պահից տեղի ունի (24) պայմանը, այսինքն՝ գործադրվող ճնշումն սկսում է նվազել։ Այն ունի երկու բաղադրիչ՝

$$f_1^{(d)}(b_k, t) = f_{11}^{(d)}(b_k, t) + f_{12}^{(d)}(b_k, t) : \quad (25)$$



Ակ. 3. b_k -րդ զինծառայողի հարմարման և դրա խաթարման պայմանների առաջացման գործընթացի գրաֆիկական պատկերումը

Եթե b_k զինծառայողին հատուկ են $\varepsilon_1^{(1)}(k, D_z)$ -ի և $\varepsilon_1^{(2)}(k, Y_z)$ -ի բարձր արժեքները, այսինքն՝ նա G_R^0 ռիսկի խմբում է, ապա $f_{11}^{(d)}(b_k, t)$ բաղադրիչը կարող է զգալի կերպով աճել:

$0 \leq q_k(\xi_k, \sigma_k) \leq 1$ -ով նշագրենք համախումք ցուցանիշը, որը կախված է որակի և ցրման (21) փոխանցումային ցուցանիշներից: Այն բնութագրում է անմիջականորեն b_k զինծառայողին կարգուկանոն սովորեցնող և նրա անհրաժեշտ հմտությունները ձևավորող Q_k հրամանատարական կազմի մասնագիտական ու հոգեբանական պատրաստվածությունը: Եթե q_k -ն փոքր է, Q_k հրամանատարական կազմը հենց ինքն է G_R^0 ռիսկի խումբ, քանի որ իր ստեղծած $f_{11}^{(d)}(b_k, t)$ ճնշումը ցանկացած գորակոչչի նկատմամբ այլափոխվում է $f_{12}^{(d)}(b_k, t)$ ձևի: Դա անվանենք այլափոխված ճնշման գործընթաց (ԱԾԳ) և այն դիտենք որպես կանոնադրության դրույթների խախտման հետ կապված պատահարների հիմնական պատճառներից մեկը: Հրամանատարական կազմի մասնագիտական պատրաստվածության $q_k(\xi_k, \sigma_k)$ ցուցանիշի և կիրառված ճնշման $f_{12}^{(d)}(b_k, t)$ բացասական բաղադրիչի միջև կա ուղիղ կախում:

Մոցնենք


$$\lambda_k = 1 - q_k(\xi_k, \sigma_k), \quad (26)$$

որով նշագրենք մի բաղադրիչ, որն անվանենք մասնագիտական պիտանիության պարամետր (ՄՊՊ), և այդ կախումը ներկայացնենք ցուցային տեսքով՝

$$f_{12}^{(d)}(b_k, t) = \exp(-\lambda_k t): \quad (27)$$

Մշտական ճնշման ռազմավարության կիրառումը հանգեցնում է երկակի էֆեկտի: Մի կողմից, աճում է այն գորամասերի թիվը, որտեղ կամ արդեն ապահովված է բարձր մակարդակի կարգապահություն և զինծառայության նկատմամբ վերաբերմունքում տեղի է ունեցել դրական արնատական բեկում (այդ գորամասերն անվանենք որակյալ՝ ՈՉՄ), կամ բարձր մակարդակի կարգապահությունն ու իրավակարգն ապահովվում են հարկադրանքի միջոցով: Մյուս կողմից՝ այն գորամասերը, որտեղ ճնշումը չի կարող կերպափոխվել կարգուկանոնի, նկատվում է ԱԾԳ-ի հետ կապված իրավախսումների թվի աճում: Այն գորամասերը, որտեղ բարձր մակարդակի իրավակարգի վիճակը պահպանվում է հարկադրանքով, անվանենք անկայուն (ԱՉՄ): Փաստորեն մշտական ճնշման ռազմավարությունը կարող է հանգեցնել մի տարիմաստության, եթե ճնշման մեծացումը նվազեցնում է այն գորամասերի թիվը, որտեղ արձանագրվում են խախտումներ, բայց ավելացնում է խախտումների թիվը հենց այդ գորամասերի հաշվին: Այդ երևույթն անվանենք աճման տարիմաստություն, իսկ այն գորամասերը, որոնց հաշվին արձանագրվում է իրավախսումների աճում, անվանենք պրոբլեմային (ՊՉՄ) (Ակ. 4): ԱՉՄ-ներում առկա անկայունության հետևանքով ստեղծվում է մի տատանողական գործընթաց, եթե իրեն դրական կողմերով դրսեւրած գորամասում հանկարծ տեղի են ունենում անկայութեան խախտումներ: Կարելի է ենթադրել, որ ԱՉՄ-ները առավել հեռանկարային են որակական բեկման համար, և եթե շարունակենք

պահպանել ճնշումը, ապա դրանք կվերափոխվեն $\Omega\Omega\Omega$ -ների: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ ճնշման ուժը պետք է համապատասխանի անցմանը պատրաստ լինելու աստիճանին և չանցնի կրիտիկական բնագիծը:



Նկ. 4. ՄՃՈ- ազդեցությունը զորամասերի որակական անցումների վրա

$F_d(z_e)$ -ն ճնշման ուժի համապատասխանեցումը կարող է կատարվել հիստագրի կառուցման ժամանակ կետային գնահատականների որոշման մեջությունով [3], այսինքն՝ յուրաքանչյուր z_e զորամասում անհրաժեշտ է այդ ուժի մեծության նկատմամբ ցուցաբերել ընտրողական մոտեցում՝

$$F_d(z_e) = f_G(G_p(z_e)), \quad (28)$$

որտեղ $G_p(z_e)$ -ն զորամասի պատրաստությունն է $\Omega\Omega\Omega$ -ին անցմանը: Առաջարկվող մերուդով նախորդ $t-1$ ժամանակաշրջանում կատարված ստուգումների $s = 1, b_t$ արդյունքներով հաշվարկված իրավախախտումների $\eta_j^{(e,s,t-1)}$ ցուցանիշների հիման վրա որոշվում է z_e օրյեկտի վերահսկման Δ_e ընդմիջակայքների օպտիմալ լայնությունը: Այսպիսով՝ մշտական ճնշման ռազմավարությունը կարող է ներկայացվել որպես

$$C_j(\psi_j) = \varphi_{U\vec{\alpha}N}(F_d(z_e, \Delta_e)) \quad (29)$$

արտապատկերում:

Զորամասերի նոր որակի անցման գործընթացը $\Omega\Omega\Omega-\text{ԱԶՄ}-\Omega\Omega\Omega$ շրբայի փուլերի հաջորդականություն է և պետք է դիտարկվի յուրաքանչյուր զորամասի համար առանձին՝ նրա առանձնահատկությունների և ուղեկից հանգամանքների հաշվառմամբ: Ընդամենք պետք է պահպանվի հետևյալ պայմանը՝

$$F_d(z_{\Omega\Omega\Omega}) > F_d(z_{\text{ԱԶՄ}}) >> F_d(z_{\Omega\Omega\Omega}): \quad (30)$$

2009–2011 թվականներին ՀՀ Զինված ուժերում ՄՃՈ կիրառման պայմաններում արձանագրված պատահարների վիճակագրական տվյալների վերլու-

ծուրյունը վկայում է, որ առաջարկվող մոդելը մի շաբթ բաղադրատարերի համար համապատասխանում է զորամասերում տեղի ունեցող ռեալ գործընթացներին: Այն զորամասերի թիվը, որոնցում տեղի են ունեցել մահացու ելքով (A) պատահարներ, նվազել է տարեկան մոտ 10 %-ով, սակայն նկատվել է պատահարների ընդհանուր (B) թվի փոքր աճ:

$\Omega_w(W(\varepsilon_1^{(1)}(k, D_z), \varepsilon_1^{(2)}(k, Y_z))$ -ով նշագրենք զորակոչիկների այն խումբը, որը, անցնելով բուժքնենում ($B\mathcal{Q}$), բաշխիչ կենտրոնում ($B\mathcal{C}$) ըստ մասնագիտությունների n_j որոշակի տեսակների $N = \{n_1, n_2, \dots, n_w\}$ (օրինակ՝ վարորդ կամ համակարգչային մասնագետ) պահանջարկի, բաշխվում է զորամասերի $Z = \{z_1, z_2, \dots, z_w\}$ բազմությունով: Եթե զորակոչիկների հիմնական մասի բաշխումը պատահական է, ապա z_j -ը դուրս կանունական է և պատահական է:

$$\Omega_w^{(j)} \subset \Omega_w(W(\varepsilon_1^{(1)}(j, D_z), \varepsilon_1^{(2)}(j, Y_z))) \quad (31)$$

մասը, և նրան կհամապատասխանի λ_j ցուցանիշով բնութագրվող Q_z հրամանատարական կազմը: $\varepsilon_j^\tau = \varepsilon_1^{(1)}(j, D_z^\tau) + \varepsilon_1^{(2)}(j, Y_z^\tau)$ -ով նշագրենք զորակոչիկների «պրոբլեմայնություն» ըստ խախտումների τ տիպի բնութագրող ընդհանուրացված ցուցանիշը:

Դիցուք զինվորական կարգապահության և կարգուկանոնի վիճակի պահանջվող որակի հավանականությունը հավասար է՝

$$p_0 < p_a^\tau(z_j, t): \quad (32)$$

Այդ դեպքում z_j օբյեկտի համար առանց τ տիպի պատահարների ծառայության $T_j^{(\tau)}$ ժամանակամիջոցը կորոշվի հետևյալ արտահայտությամբ՝

$$T_j^{(\tau)} < -In(p_0)/(m_k(\lambda_j - m_c \varepsilon_j^\tau)): \quad (33)$$

Որքան շատ է տեղի ունենում

$$\lambda_j > m_c \varepsilon_j^\tau \quad (34)$$

պայմանը, այնքան փոքր է հարմարման գործընթացի խաթարման հավանականությունը:

Դիցուք որոշ z_j զորամասի հատուկ է λ_0 ինտենսիվությամբ τ տիպի իրավախախտումների ցուցային բաշխումը (տես Ակ. 5, հոծ զիծը).

$$f_t^{(z)}(t) = \begin{cases} \lambda_0 e^{-\lambda_0 t}, & t \geq 0 \\ 0, & t < 0 \end{cases} : \quad (35)$$


z_j -ի նկատմամբ կիրարկված

$$f_1^{(d)}(z_j, t) \quad (36)$$

ճնշումը ենթադրում է իրավախախտումների ինտենսիվության նվազում մինչև λ_2 մակարդակը, որը համապատասխանում է արմատական բեկման պայմանին: Կարգապահության նոր որակի վիճակի հիմնական հատկանիշը նրա կայունությունն է, այսինքն՝ λ_2 -ի պահպանումը $f_1^{(d)}(z_j, t) = 0$ ճնշման գործադրման դադարեցման դեպքում: Ենթադրենք, թե իրավախախտումների ինտենսիվությու-

նը նվազել է մինչև $\lambda_1, \lambda_0 > \lambda_1 >> \lambda_2$, բայց արմատական թեկում տեղի չի ունեցել: Հետևաբար, եթե ճնշումը հաճվի, ապա ժամանակի ընթացքում z_j գորամասում τ տիպի իրավախախտումների ինտենսիվությունը կրկին կհասնի λ_0 -ի:

Վերադաս հրամանատարության կողմից z_j -ի հրամանատարական կազմի վրա գործադրվող ճնշումը սկզբնավորում է նրա համապատասխան $f_2^{(g)}(z_j, t)$ հարմարումային գործընթացը: Նկ. 3-ում դրական $f_1^{(d)}(z_j, t)$ ճնշման և $f_2^{(g)}(z_j, t)$ հարմարման կորերն ունեն տարրեր սահմաններ, որոնք միմյանցից հեռու են ΔR -ով և գործնականում չեն հատվում: Բավարար հոգեբանական ու մասնագիտական որակներ չունեցող z_j հրամանատարական կազմի վրա ճնշման մեծացումը կարող է հանգեցնել հարմարվողականության ձևավորմանը կամ $f_{11}^{(d)}(b_k, t)$ բաղադրիչի այլափոխմանը շարային կազմի զինծառայողների վրա z_j հրամանատարական կազմի ճնշման բացասական բաղադրատարրի $f_{12}^{(d)}(b_k, t), k = \overline{1, z_j}$, դրանով իսկ առաջ բերելով ԱՃԳ: Այսպիսով՝ ճնշման մեծացումը կարող է հանգեցնել կարգապահության իրավախախտումների թվի աճմանը, ինչը նկ. 5-ում պատկերված է ցուցային կորու՞ լա՞ ով:



Նկ. 5. Կարգապահական իրավախախտումների հավանականության խտության կախումը կիրառված ճնշումից

Իր հերթին $f_{12}^{(d)}(b_k, t)$ բացասական բաղադրատարրի աճումը կարող է նապաստել հրամանատարության կողմից եվլաստանդարտներով ժողովրդավարացման ձեռնարկմանը, իսկ դա ենթադրում է բանակում հասարակական հարաբերությունների բացուրում և դրանով իսկ զինվորներին հնարավորություն է տալիս դիմադրելու գորամափ հրամանատարական կազմի ոչ կանոնադրական հարաբերություններին: Տվյալ մոտեցումը հիմնված է այն սկզբունքի վրա, որ կարգապահություն և կարգուկանոն հնարավոր չեն հաստատել միայն ուժային և պատժի միջոցներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. В. И. Денисов, Б. Ю. Лемешко, С. Н. Постовалов. Прикладная статистика. Правила проверки согласия опытного распределения с теоретическим: Методические рекомендации. Часть I. Критерий типа χ^2 . Новосибирск, 2004.
2. С. М. Ермаков, Г. А. Михайлова. Статистическое моделирование. М., 2005.
3. Сергей Мельков. Дисциплина в армии: выход есть. «Военно-промышленный курьер», 8 февраля 2006 г., № 5 (121) (<http://vpk-news.ru/articles/3768>).
4. Марк Штейнберг. Преступление и наказание в армии США (<http://pentagonus.ru/publ/7-1-0-944>).

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

ОБ ОДНОЙ МОДЕЛИ ОПРЕДЕЛЕНИЯ УСЛОВИЙ И МЕТОДОВ ПЕРЕХОДА НА НОВЫЙ КАЧЕСТВЕННЫЙ УРОВЕНЬ ОБЕСПЕЧЕНИЯ ДИСЦИПЛИНЫ И ПОРЯДКА В ВС

К. Р. МУРАДЯН, полковник, Начальник Войск связи ВС РА – Начальник Управления связи и АСУ ВС РА, А. Р. ГРИГОРЯН, майор, юрист–офицер отдела военной дисциплины и социально-правовых работ Управления по работе с личным составом ВС РА, А. А. МУРАДЯН, подполковник, кандидат технических наук, начальник отделения программирования отдела АСУ Управления связи и АСУ ВС РА

РЕЗЮМЕ

Предложена математическая модель, отражающая существующие зависимости по всем основным категориям, характеризующим процесс влияния воинской дисциплины и порядка в войсках частях на их боеготовность и статистику правонарушений. Осуществлена классификация и разбиение воинских подразделений на группы риска на основании интенсивностей наблюдаемых правонарушений. Проанализирован характер воздействия стратегии постоянного давления на адаптационный процесс перехода состояния войсковых частей в новое качество с учетом их специфических особенностей и сопутствующих обстоятельств.

MILITARY ENGINEERING

A MODEL FOR DETERMINING CONDITIONS AND METHODS OF TRANSITION TO A NEW QUALITY LEVEL OF DISCIPLINE AND ORDER IN THE ARMED FORCES

K. R. MURADYAN, Colonel, Chief of the Signal Troops, Armed Forces, RA-Chief of the Department of Communications and ACS, Armed Forces, RA, A. R. GRIGORYAN, Major, Lawyer-Officer of the Military Discipline and Socio-Legal Activities Branch, Moral and Welfare Department, Armed Forces, RA, A. A. MURADYAN, Colonel, PhD in Engineering, Chief of the Programming Section, ACS Branch, Department of Communications and ACS, Armed Forces, RA

SUMMARY

A mathematical model is proposed which reflects the existing dependencies in all major categories characterizing the influence of the military order and discipline in the army units on their combat readiness and statistics of offenses. The army units are classified and subdivided into risk groups based on the intensity of the violations observed. The nature of the impact of the strategy of constant pressure on the adaptation process of transition of the state of the army units to a new quality in terms of their specific features and the concomitant circumstances is analyzed.

**ԿԻԲԵՇՈԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ**

**Ա. Գ. ՔԱՐԴՈՒՄՅԱՆ, պատմական գիտությունների բեկնածու,
ՀՀ Նախագահի աշխատակազմի արդարին կապերի վարչության
աշխատող, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի դասախոս**



21-րդ դարում՝ բուռն տեխնոլոգիական զարգացման պայմաններում, ի հայտ են եկել քաղաքակրթության համար ոչ միայն կարևոր դրական զարգացումներ, այլև մի շարք լուրջ խնդիրներ, որոնք այսօր իրական սպառնալիք են ինչպես առանձին պետությունների, այնպես էլ ամբողջ միջազգային հանրության համար։ Մասնավորապես՝ համացանցի կատարելագործությունը հանգեցրել է ազգային անվտանգության դեմ ուղղված որակական նոր սպառնալիքների առաջացմանը։ Կիրեռանվտանգության¹ հարցերը այսօր հատկապես արդիական են այն պատճառով, որ տեղի է ունենում

վիրտուալ ու ֆիզիկական աշխարհների փոխներթափանցում։ Վիրտուալ աշխարհում ծավալվող գործունեությունը կարող է լուրջ ազդեցություն գործել ֆիզիկական աշխարհի վրա՝ ինչպես նաև ստեղով, այնպես էլ էապես խարարելով պետության բնականու գրոծունեությունը։ Կիրեռամակարդերից ռազմական և տնտեսական գործունեության կախվածությունը պետությունների համար ստեղծում է խոցելի կողմեր, ինչից կարող են օգտվել միջազգային հարաբերությունների ոչ պետական մասնակիցները, ինչպես նաև որոշ պետություններ։ Հատկապես լուրջ վտանգ է ներկայացնում միջուկային գենքի կիրեռավահովածության հարցը։

Եվ այսպես. կիրեռտարածությունը դարձել է ազգային և միջազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների հիմնական աղբյուրներից մեկը, քանի որ արդի տեխնոլոգիական զարգացման պայմաններում կիրեռտարա-

¹ Ըստ Միջազգային Էլեկտրոնային կապի միության՝ կիրեռանվտանգությունը այն միջոցների, որազմակարգությունների, անվտանգության սկզբունքների, անվտանգության երաշխիքների, դեկավար սկզբունքների, ոխսելի կառավարման նկատմամբ մոտեցումների, գործողությունների, մասնագիտական պատրաստման, առաջավոր փորձի, վստահության և տեխնոլոգիաների հավաքածու է, որոնք կարող են օգտագործված լինել կիրեռմիջավայրի և կազմակերպության ու օգտագործողի ռեսուրսների պաշտպանության նպատակով (<http://www.itu.int/net/itunews/issues/2010/09/20-ru.aspx>) (տես «Կիբեռօպակունություն» հայերացությունը՝ <http://www.itu.int/net/itunews/issues/2010/09/20-ru.aspx>): Իսկ Օքսֆորդի անգլերեն բառարանում կիրեռանվտանգությունը ներկայացվում է որպես պաշտպանվածություն պետության էլեկտրոնային բազայի ըրեսական կամ ոչ արտոնված օգտագործումից (տես «Definition of Cybersecurity». «Oxford Dictionaries» (<http://oxforddictionaries.com/definition/english/cybersecurity>))։

ծուրյունում հարձակման բազմաբնույթ հնարավորություններն ավելի լայն են, քան պաշտպանությանը:

Քանի որ ժամանակակից աշխարհում հասարակական և պետական գործունեության մի զգայի մասը իրականացվում է հեռահաղորդակցության դաշտում, ուստի անշափ իրատապ է դառնում կիրեռհանցագործության և կիրեռահարեկչության խնդիրը: Այսօր կիրեռհանցագործությունը լուրջ վտանգ է ներկայացնում պետության Էներգահամակարգերին, օդային փոխադրումներին և նոյնիսկ միջուկային օրյեկտներին: Նշված վտանգներից ապահովագրված չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Հաշվի առնելով մեր երկրի աշխարհաքաղաքական դիրքը՝ կիրեռհանցագործությունները կարող են լուրջ սպառնալիք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը:

Փորձագետների շրջանում չկան կիրեռանվտանգության խնդիրնեկատմամբ միասնական մոտեցումներ: Մի շարք փորձագետներ կիրեռապատերազմները որակում են որպես պետությունների միջև մղվող «անարյուն պատերազմներ» բացառապես վիրտուալ աշխարհում: Սակայն անվտանգության հարցերով ամերիկացի հայտնի վերլուծաբան Ջոզեֆ Նայը արդարացիորեն նշում է, որ պետք է հաշվի առնել կիրեռութարածության և իրական՝ ֆիզիկական, աշխարհի միջև եղած կապը: Մասնավորապես՝ համակարգչային հարձակումները^{*} կարող են ունենալ միանգամայն իրական ֆիզիկական հետևանքներ²:

Այսօր կիրեռանվտանգությունը իր հաստատուն տեղում է զբաղեցրել մի շարք առաջատար պետությունների և միջազգային կազմակերպությունների ազգային անվտանգության հայեցակարգերում: ՆԱՏՕ-ի նոր ռազմավարական հայեցակարգում, որն ընդունվեց 2010 թ. Լիսաբոնի գագաթնաժողովում, նշված է հետևյալը. «Կիրեռհարձակումները հաճախակի և ավելի կազմակերպված են դարձել և ել ավելի մեծ ծավալների հասնող վնասներ են պատճառում պետական հիմնարկներին, բիզնեսին, տնտեսությանը, այդ թվում նաև կարող են հնարավոր վտանգ ներկայացնել ճանապարհային ու մատակարարման ցանցերի և այլ կարևոր ենթակառուցվածքների համար: Կիրեռհանցագործությունները կարող են հասնել այնպիսի շեմի, որ իրական սպառնալիք ներկայացնեն Եվրաստանային բարգավաճմանը, անվտանգությանն ու կայունությանը»³:

Այսպիսով՝ կիրեռհանցագործությունը ոչ միայն շարտունված տեղեկությին «տիրանալի» է, այլև այդ տեղեկությն ի վեաս պետական և հասարակական ենթակառույցների կիրառելը: Այդ իսկ պատճառով երկրի կիրեռանվտանգութ-

* Այսօր միջազգային ասպարեզում լայն տարածում է ստացել «կիրեռհարձակում» տերմինը, որը ներառում է լայնամասշտար գործողություններ՝ սկսած վեբ-կայքերին վնաս հասնելոց միջնորդությունում:

² See Joseph S. Nye. Cyber War and Peace, 10 April 2012 (<http://www.project-syndicate.org/commentary/cyber-war-and-peace>):

³ See «Active Engagement, Modern Defence». Strategic Concept for the Defence and Security of the Members of the North Atlantic Treaty Organization adopted by Heads of State and Government in Lisbon, 19 November 2010 (http://www.nato.int/cps/en/natolive/official_texts_68580.htm).

յունը չի կարելի դիտարկել իրական անվտանգությունից անկախ. դրանք պետք է դիտարկել որպես մեկ ընդհանուրություն:

Աշխարհի մի շարք առաջատար պետություններ արդեն պետական մակարդակով համակարգված գործունեություն են ծավալում կիրեռհանցագործությունները կանխելու և դրանցից ածանցվող սպառնալիքները չեզոքացնելու ուղղությամբ: Օրինակ՝ ԱՄՆ-ը բախվել է մի շարք կիրեռապառնալիքների, որոնց հաղթահարման համար ստեղծվել են պետական տարրեր կառույցներ: Այսպես, ըստ ամերիկյան պաշտոնյաների և վերլուծաբանների՝ ԱՄՆ-ի ազգային անվտանգությանը լուրջ սպառնալիքներ են ներկայացնում չինական ծրագրահենները, թեև պաշտոնական Պեկինը հերքում է դա⁴: Կիրեռհետախուզության միջոցով հասանելի են դառնում ոչ միայն պետությունների կողմից նախագծված տեխնոլոգիական ծրագրերը, այլև հեռանկարային սպառազինությունների մոդելները, որոնք կարող են հայտնվել ահարեւկական խմբավորումների ձեռքում:

Քրիտանիայի ազգային անվտանգության ծառայության (ՄԻ5) գլխավոր տնօրեն Ջննարան Էվանսի հավաստմամբ՝ Քրիտանիայի Ազգային անվտանգության ռազմավարության մեջ կիրեռհանցագործությունը դիտվում է որպես ահարեւկչությանը հավասար հանցագործություն, որը լուրջ սպառնալիք է երկրի ենթակառուցվածքների համար⁵: Վերջերս հայտնաբերված «Ստարսնետ», «Ֆլեյմ» և այլ վիրուսները հաստատեցին, որ վիրուսալ աշխարհի կարող է մեծ ազդեցություն ունենալ ֆիզիկական աշխարհի վրա: Ըստ մի շարք ռազմաքաղաքական վերլուծաբանների և որոշ պաշտոնական տվյալների՝ հենց «Ստարսնետ» վիրուսի միջոցով ԱՄՆ-ը և Իսրայելը կարողացան վճար հասցնել Իրանի միջուկային ծրագրին՝ շարքից հանելով ուրանի հարստացման ցենտրիփուզները⁶:

Ինչ վերաբերում է վերջերս հայտնաբերված «Ֆլեյմ» վիրուսին, ապա այն, ուստահատանի «Կասպերսկի» համակարգչային հակավիրուսային լարորատորիայի ներկայացուցիչների կարծիքով, մի քանի անգամ գերազանցում է «Ստարսնետին» և կարող է օգտագործվել որպես լուրջ կիրեռզենք՝ համակարգչներից տարրեր տեսակի տեղեկույթ կորզելու համար⁷: Այսինքն՝ «Ֆլեյմի» հիմնական գործառույթը կիրեռլստեսությունն է:

«Նորուսն բայ Միմենքեքսը», որը կիրեռհանցագործությունների ուսումնասիրության ոլորտում աշխարհի առաջատար կազմակերպություններից է, կիրեռ-

⁴ Տես *Anna Mulrine*. China is a lead cyberattacker of US military computers, Pentagon reports. «The Christian Science Monitor», 18 May 2012 (<http://www.csmonitor.com/USA/Military/2012/0518/China-is-a-lead-cyberattacker-of-US-military-computers-Pentagon-reports>); Derek Scissors and Steven P. Bucci. China Cyber Threat: Huawei and American Policy Toward Chinese Companies. «The Heritage Foundation», 23 October 2012 (<http://www.heritage.org/research/reports/2012/10/china-cyber-threat-huawei-and-american-policy-toward-chinese-companies>):

⁵ Տես *Tom Whitehead*. Cyber crime a global threat, MI5 head warns. «The Telegraph», 26 June 2012 (<http://www.telegraph.co.uk/news/uknews/terrorism-in-the-uk/9354373/Cyber-crime-a-global-threat-MI5-head-warns.html>):

⁶ Տես *Զողհիք Ս. Նայ, Նշ.* աշխ.:

⁷ Տես «Эксперты «Лаборатории Касперского» установили связь между Flame и Stuxnet», 11.06.2012 (<http://www.kaspersky.ru/news?id=207733777>):

հանցագործությունների մասին 2012 թ. հրապարակած իր ամենամյա զեկույցում, մասնավորապես, ներկայացնում է ուշագրավ տվյալներ: Համաձայն զեկույցի՝ ամեն օր աշխարհում կիրեռհանցագործությունների զոհ է դառնում մոտ 1,5 մլն մարդ, ինչի հետևանքով տնտեսական կորուստը կազմում է մեկ մարդու հաշվով միջինը 197 դոլար, իսկ ընդհանուր առնամբ՝ տարեկան 110 մլրդ դոլարի վճար⁸:

Հարկ է նշել, որ կիրեռհանցագործությունները դարձել են նաև այս կամ այն հակառակորդ կամ նղոակից պետությունների կողմից ապատեղեկույրի տարածման և իր գաղափարախոսության քարոզության մեխանիզմ: Կիրեռարածությունը վերածվել է հասարակության վրա ազդեցություն գործելու հզոր հոգեբանական զենքի: Դրա ականատեսն է նաև հայկական հասարակությունը, երբ աղբեջանական ծրագրահենների կողմից կիրառվող կիրեռհարձակումների միջոցով այս կամ այն հայկական կայրում ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ խեղաքյուրված տեղեկույթ: Հայ կիրեռվորձագետների շրջանում լուրջ մտահոգություններ կան, որ Հայաստանի պետական և լրատվական կայրերի վրա վերջերս կատարված մի քանի գրոհների հետևում կանգնած են Աղբեջանի հատուկ ծառայությունները⁹:

Այսօր ոչ միայն մեծ տերությունների ուսումնավարական դոկտրիններում, այլև Հայաստանի հարևան պետությունների ուսումնավարական փաստաթղթերում որպես ազգային անվտանգության կարևոր քաղաքիչ նշված է կիրեռանվտանգությունը: Վրաստանի «Ազգային անվտանգության հայեցակարգում» ի թիվս տվյալ պետության դեմ ուղղված սպառնալիքների նշվում է նաև կիրեռհանցագործությունը¹⁰: Աղբեջանը Միջազգային Էլեկտրոնային կապի միության հետ համատեղ աշխատանքներ է տանում կիրեռանվտանգության հոչակագրի մշակման ուղղությամբ:

Մի շարք զարգացած երկրներում կիրեռանվտանգության առաջնային խնդիր է կարևոր ենթակառուցվածքների պաշտպանությունը կիրեռհարձակումներից: Այդ ուղղությամբ համակարգված քաղաքականություն վարելու նպատակով ստեղծվել են մի շարք պետական կառույցներ՝

- ԱԱՆ-ում՝ Կիրեռանվտանգության և հաղորդակցության գրասենյակը,
- Մեծ Քրիտանիայում՝ ՄՔ կիրեռանվտանգության հարցերով գրասենյակը,
- Կանադայում՝ կիրեռպատահարների արձագանքման կենտրոնը,
- Ավստրալիայում՝ Ավստրալիական կիրեռանվտանգության քաղաքականության և համակարգման կոմիտեն,

⁸ Տես «2012 Norton Study: Consumer Cybercrime Estimated at \$110 Billion Annually». «Symantec», 5 September 2012 (http://www.symantec.com/about/news/release/article.jsp?prid=20120905_02):

⁹ Տես «Համացանցային պատերազմ. Փորձագետների խոսքով՝ Հայաստանի ՏՏ ոլրտը պաշտպանված չէ հերձակումից»: «ArmeniaNow.com», 24.07.2009 (http://armenianow.com/hy/news/10299/cyber_wars_experts_say_armenia_it):

¹⁰ Տես «National Security Concept of Georgia» (<http://www.nsc.gov.ge/files/files/National%20Security%20Concept.pdf>):

- Հարավային Կորեայում՝ Համացանցի և անվտանգության գործակալությունը,
- ԵՄ-ում՝ Եվրոպական ցանցային և տեղեկատվական անվտանգության գործակալությունը¹¹:

Հայաստանի Հանրապետությունը ևս մշակել է կիրեռանվտանգության առնչվող մի շարք հայեցակարգային փաստաթղթեր: Մասնավորապես՝ ՀՀ Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի կարգադրությամբ հաստատվեց «ՀՀ տեղեկատվական անվտանգության» հայեցակարգը, որում առաջին անգամ համակարգված ձևով ներկայացվում են տեղեկատվական ոլորտում ՀՀ պետական քաղաքականության հիմնադրույթները¹²: Դրան նախորդել էր ՀՀ Կառավարության 2008 թ. նոյեմբերի 6-ի որոշումը՝ ՀՀ Նախագահի աշխատակազմին կից «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ ստեղծելու մասին: Այդ կառույցի հիմնական գործառույթներն են՝ հանրային կապերի, պետական մարմինների գործունեության քափանցիկության, տեղեկատվության մատչելիության, տեղեկատվության հավաքման և տարածման վերաբերյալ ուսումնասիրությունները, զանգվածային լրատվության միջոցների ընդհանուր և թեմատիկ վերլուծությունը, զանգվածային լրատվամիջոցների շուկայի ուսումնասիրությունը՝ դրանց տպաքանակների, իրացման ժավալների և ծածկույթների, քազմազանության, քափանցիկության և այլ խնդիրներով, հանրային կապերի և տեղեկատվության ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրությունը և նախաձեռնություններով հանդես գալը՝ կապված զանգվածային լրատվամիջոցների գործունեության իրավական կարգավորման հետ¹³:

2010 թ. փետրվարի 25-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման (2010-2012 թթ.) հայեցակարգը», որում 21-րդ դարի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համատեքստում նշվում է քնակչությանը մասուցվող համացանցային ծառայությունների մատչելիության խնդիրը, այսինքն՝ էլեկտրոնային հասարակության ձևավորումը¹⁴: ՀՀ Կառավարության 2010 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» հմ. 7 արձանագրային որոշմամբ սահմանվել են ՀՀ կիրեռանվտանգության ապահովման օբյեկտները և ուղղութ-

¹¹ Տես «21st Georgia: «Cyber-Vardzia». «Integrated Cyber & Physical Security» for e-Government & e-Georgia». Tbilisi, 10th to 12 th November 2010 (<http://www.amcham.ge/photos/giti-2010-10-10/05.pdf>):

¹² Տես ՀՀ Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ հաստատելու մասին» հմ. ՆԿ-97-Ն կարգադրույթունը (http://www.dpf.am/uploads/C_Information%20Safety.pdf):

¹³ Տես ՀՀ Կառավարության 2008 թ. նոյեմբերի 6-ի ««Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտարային կազմակերպություն ստեղծելու մասին» հմ. 1324-Ն որոշումը (<https://www.e-gov.am/gov-decrees/item/14513/>):

¹⁴ Տես «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման (2010-2012 թթ.) հայեցակարգ», 25.02.2010 (http://www.dpf.am/uploads/C_E-Society%20Development.pdf):

յունները: ՀՀ Կառավարության այդ որոշմամբ կարևորվում է ոչ թե ընդհանուր տեղեկության անվտանգությունը, այլ միայն դրա առանձին բաղադրիչը՝ հնարավոր քիրախային օբյեկտների անվտանգության ապահովման ուղղությունները¹⁵:

Տեղեկատվության ոլորտում հանցագործությունները և դրանց համար նախատեսված պատժամիջոցները ամրագրված են նաև ՀՀ քրեական օրենսգիրի 24-րդ՝ «Համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում: Ըստ 24-րդ գլխի 251-257-րդ հոդվածների՝ կիրենիանցագործություն են համարվում, մասնավորապես, համակարգչային տեղեկատվության համակարգ առանց բույլտվության մուտք գործելը (ներքափանցելը), համակարգչային տեղեկույթը փոփոխելը, համակարգչային նենազգույթը, համակարգչային տեղեկույթին ապօրինի տիրանալը, համակարգչային տեղեկույթ ապօրինի մուտք գործելու (ներքափանցելու) համար նախատեսվող հատուկ միջոցներ պատրաստելը կամ իրացնելը, վճասարեր ծրագրեր մշակելը, օգտագործելն ու տարածելը, համակարգչային համակարգը կամ ցանցը շահագործելու կանոնները խախտելը¹⁶:

Հյաստանը նաև միացել է կիրենիանցագործություններին վերաբերող մի շարք միջազգային համաձայնագրերի, ինչպես նաև «Մեծ ուժնյակի»՝ համակարգչային հանցագործություններով գրաղվող ստորաբաժնման կոնտակտային պայմանագրին:

Այսօր ՀՀ-ում կիրենանվտանգությանը վերաբերող իրավական դաշտն աստիճանաբար ընդլայնվում է, այդ իսկ պատճառով առաջանում է այն համակարգելու անհրաժեշտություն: ՈԽոսունասիրելով ՀՀ տեղեկատվական անվտանգության ոլորտին առնչվող իրավական փաստաթրերը՝ հանգում ենք այն եզրակացության, որ կիրենանվտանգությունը ավելի լայն տեղեկությային անվտանգության բաղադրիչ է, որի շեշտադրումները կարծես ճապաղվում են այդ լայն տեղեկատվական դաշտում: Մինչեւ այսօր կիրենանվտանգության ոլորտում շեշտը պետք է դրվի հանցանցում քարոզչության, աղբեջանական խեղաթյուրված տեղեկատվության դեմ պայքարի և ՀՀ դիրքորոշումների ներկայացման վրա, ինչն ինքնին կարևոր հանգամանք է: Կիրենանվտանգությունը պետք է դիտվի որպես ազգային անվտանգության բաղադրիչ, որը ներառում է նաև ՀՀ կենական կարևոր ենթակառուցվածքների պաշտպանությունը հնարավոր վտանգներից:

Ըստ «Կասպերսկու» լարորատորիայի 2011 թ. օգոստոսի գեկրուց՝ Հյաս-

¹⁵ Տես ՀՀ Կառավարության 2011 թ. դեկտեմբերի 22-ի նիստի հմ. 50 արձանագրային որոշման հավելված հմ. 1 «Կիրենանվտանգության ընդհանուր շրջանակը Հյաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի վետրվարի 25-ի «Հյաստանի Հանրապետությունում էնեկտընային հասարակության ճնապետական հայեցակարգին հավանություն տալու մասին» հմ. 7 արձանագրային որոշմամբ սահմանված աշխատանքներում» (https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/12/qax50-12_1.pdf):

¹⁶ Տես «Հյաստանի Հանրապետության բրեական օրենսգիր», 18.04.2003 (<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1349&lang=arm>):

տանը կիրեռհարձակումների առումով առավել խոցելի երկրների շարքում է՝ աշխարհում գրադարձնելով 3-րդ տեղը Ռուսաստանից և Օմանից հետո¹⁷:

Այսօր անհրաժեշտություն է առաջացել մշակելու «ՀՀ կիրեռանվտանգության ազգային ռազմավարություն», որում պետք է ուշադրություն դարձվի հետևյալ հարցերի վրա.

- Կիրեռհարձակումների համար ՀՀ հնարավոր թիրախային կետերի պարզումը,
- Կիրեռանվտանգության ոլորտում ՀՀ Կառավարության առաջնահերթությունների սահմանումը,
- Կիրեռհարձակումներին ազգային համակարգված արձագանքման ապահովումը,
- տարրեր ուսումնական ծրագրերի միջոցով հասարակության ծանոթացումը կիրեռանվտանգության հիմնախնդիրներին և դրանց լուծման մեխանիզմներին,
- Կիրեռանվտանգության ոլորտում օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալը,
- միջազգային գործընկերների հետ պարբերաբար համատեղ քննարկումների և խորհրդակցությունների կազմակերպումը,
- ՀՀ կիրեռանվտանգության գոյություն ունեցող և հնարավոր սպառնալիքների, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման միջազգային միտումների խորքային հետազոտումը:

Միջազգային էլեկտրոնային կայլ միության տարածաշրջանային առաջնահերթություններում առանձնացվում է կիրեռանվտանգության ռազմավարության մշակման հարցում ՀՀ-ին մասնագիտական օգնության ցուցաբերումը¹⁸:

Այսպիսով՝ 21-րդ դարում պետությունները և հասարակությունները ստիպված են պայքարել ֆիզիկական և վիրտուալ սպառնալիքների դեմ: Ընդ որում, հետզհետեւ երևակայական ու իրական աշխարհների և դրանց ուղղված մարտահրավերների միջև սահմանագիծը դառնում է «անորսավի»: ՈՒստի յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության հիմնախնդիրները այսօր պետք է ուսումնասիրվեն երկու հարթություններում, և մշակվեն այդ երկու հարթություններում առևկա ու կանխատեսվող սպառնալիքների դեմ պայքարի համապարփակ մեխանիզմներ:

¹⁷ Տես «Monthly Malware Statistics: August 2011» (http://www.securelist.com/en/analysis/204792190/Monthly_Malware_Statistics_August_2011):

¹⁸ Տես «Деятельность зонального отделения МСЭ для стран СНГ» (<http://www.itu.int/ITU-D/partners/privatesector/CIS2012/Presentations/Kaiykov.pdf>):

ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ

КИБЕРБЕЗОПАСНОСТЬ КАК ВАЖНАЯ СОСТАВЛЯЮЩАЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*В. Г. КАРДУМЯН, кандидат исторических наук, работник управления
Внешних связей Аппарата Президента РА, лектор Российской-Армянского
(Славянского) университета*

РЕЗЮМЕ

В статье рассматриваются современные тенденции в сфере кибербезопасности, которая сегодня становится важной составляющей национальной безопасности, представлены различные концептуальные подходы развитых стран и международных институтов к противостоянию данному феномену. Анализируется влияние киберпространства на реальный мир и его возможные последствия для нормального функционирования государства. Предлагается ряд мероприятий по обеспечению кибербезопасности Республики Армения.

INFORMATION SECURITY

CYBERSECURITY AS AN IMPORTANT COMPONENT OF THE NATIONAL SECURITY

*V. G. QARDUMYAN, PhD in History, Department of External Relations of the Office
to the RA President, Official, Russian-Armenian (Slavonic) University, Lecturer*

SUMMARY

The article analyzes the new trends in the cybersecurity sphere, which is becoming an important component of the national security. Various conceptual approaches by developed countries and international institutes towards handling with this phenomenon have been rendered. The influences of cyberspace upon the real world, as well as its possible outcomes for the proper function of a state have been analyzed, too. A number of events have been set forth for ensuring the cyber security of the Republic of Armenia.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ԶՈՐԱՅԻՆ ՕՂԱԿՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

**Դ. Հ. ԴՈՒՄԱՆՅԱՆ, բժշկական գիտուրյունների ղոկղոր,
պրոֆեսոր, ՀՀ Առողջապահության նախարար,
Ա. Գ. ԽԱԶԱՏՐՅԱՆ, ՀՀ Առողջապահության նախարարի խորհրդական,
Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի
Համարային առողջություն և առողջապահության կազմակերպում
ամբիոնի հայցորդ**



20-րդ դարի վերջին և 21-րդ դարասկզբին դիտվել է պատերազմների վարժանական եղանակների ու դրա հետ կապված՝ պաշտպանական ենթակառուցվածքների զարգացման որակական թոփքային փոփխություն: Էական փոփխություններ են տեղի ունեցել նաև ուսումնական բժշկության ու գինված ուժերի բուժապահովման ոլորտում: Պատե-



րազմների ժամանակ տեղի են ունենում բնակչության կենցաղային պայմանների, մարդաչափական տվյալների, հաշմանդամության, ժողովրդագրական ու մանկական առողջության հետ կապված ցուցանիշների վատքարացում, միշարք հիվանդությունների ընթացքի փոփխություն¹: Մասնագիտական գրականության, մասնավորապես՝ Արցախյան պատերազմի ժամանակ ուսումնական կորուստների և հետպատերազմյան սանհտարական հետևանքների մասին պահպանված արխիվային փաստաթղթերի վերլուծությունը հիմք է տալիս եղակացնելու, որ արդի տեղային պատերազմների ժամանակ փոքր պետությունների զինված ուժերի բուժապահովման հարցերը, զինվորական ծառայության անվտանգության պահպանման գործում բժշկական գործոնի դերը գիտական առումով թիշ են ուսումնասիրված², ինչը չի կարող չանդրադառնալ այդ գործունեության կազմակերպման և արդյունավետության վրա:

ՀՀ պաշտպանության բնագավառում խաղաղ շրջանում բուժապահովման պլանավորման և իրականացման, զինվորական ծառայության անվտանգութ-

¹ Տես Հ. Մ. Դարբինյան, Ռազմական բժշկությունը համբաւետության առողջապահության համակարգում: «ՀԲ», 2011, հմ. 4:

² Տես նույն տեղում:

յան ապահովման գործում առանձնակի ուշադրության են արժանի հիվանդ և վիրավոր զինծառայողներին ցույց տրվող ամբողջատոր ու ստացիոնար բուժօգնության կազմակերպման, զինվորական անձնակազմի հիվանդացության և վնասվածքների առաջացման պատճառների ուսումնասիրության կանխարգելիչ միջոցառումների մշակման, կենցաղի, ջրամատակարարման, սննդի բարեկավմանն ու զորամասերի սանհիտարահանաճարակային իրավիճակի կայունացմանն ուղղված միջոցառումների մշակման և իրագործման, զինված ուժերում տարափոխիկ հիվանդությունների և վնասվածքների կանխարգելման, նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների, գույքի, տեխնիկայի, վիրակապական նյութերի և դեղամիջոցների անձեռնմխելի պաշարների ստեղծման ու պահպանման հարցերը:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը բժշկական սանհիտարական օգնության պետական և հասարակական բնույթի միջոցառումների շարքում կարևոր տեղ է հատկացնում քաղաքացիների ինքնուրույնությանն այն հիվանդությունների հարցերում, որոնք նրանք կարող են կանխել իրենց ուժերով։ Լ. Յանշինի կարծիքով՝ զինվորական անձնակազմի բուժկանխարգելիչ ապահովման՝ որպես բժշկական ծառայության գործունեության կազմակերպման պարտադիր նախապայմանի հարցերի ուսուցումը իր բովանդակությամբ և մեթոդիկայով զգալիորեն հետ է մնացել գործնական պահանջներից³:

Անհատի գործունեության անվտանգությունը պայմանավորված է ոչ միայն ինքնապաշտպանական միջոցների նրա իմացությամբ ու դրանք սովորական և արտակարգ իրավիճակներում օգտագործելու կարողությամբ, այլև բավարար մակարդակով այդ անհատի առողջության և աշխատունակության ապահովմամբ, ինչը նրան հնարավորություն կտա դրսւորելու տվյալ իրավիճակով բելարվող անհրաժեշտ վարքագիծ։ Ռազմաքաղաքան ոլորտում բուժկանխարգելիչ աշխատանքների հիմնական կենտրոնը գորամասային օդակն է, ուստի դրա բժշկական անձնակազմը պետք է խիստ հետևողական կերպով՝ համաձայնեցնելով թե՝ զորամասի, թե՝ ռազմաքաղաքան ծառայության դեկավարության հետ, վարի զինվորական անձնակազմի շրջանում վնասվածքների ու քունավորումների դեպքերի կանխմանը կամ կրծատմանը, այլ տարաբնույթ առողջական խնդիրների լուծմանը նպատակառությած քաղաքականություն։

Նման քաղաքականության բովանդակությունը ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները՝ զորամասի անձնակազմի ուսումնամարտական և ռազմամասնագիտական գործունեության անվտանգ պայմանների ապահովում, զինծառայողների ֆիզիկական վիճակի բժշկական վերահսկողության և ընդհանուր սանհիտարահանաճարակարանական հսկողության միջոցառումների իրականացում, այդ հարցերի վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական աշխատանք, հրամանատարության ու ռազմական բուժառայության ներկայացնությների հետ համատեղ կազմակերպամեթոդական գործունեություն՝ ուղղված զորային

³ Տես Լ. Ա. յանչին. Գигиенические аспекты обеспечения безопасности военной службы (Сообщение второе). «Военно-медицинский журнал» (ВМЖ), 2006, № 2:

օղակում անձնակազմի բժշկական պատրաստականության ապահովմանը, հիվանդություններից ու վնասվածքներից խուսափելու համար անհրաժեշտ միջոցառումների կատարմանը, ամենօրյա հիգիենայի պահանջների իմացությանը:

Զինված ուժերի բուժապահովման կառուցվածքում կարևոր օղակ է ստացիոնար բուժօգնության կազմակերպումը: Զինծառայողներին ստացիոնար բուժօգնություն է տրամադրվում գորամասերի բուժկետերում և զինվորական հոսպիտալներում, ինչպես նաև քաղաքացիական բուժմաստատուրյուններում: Այս առումով կարևոր է, որ գորային օղակի բժիշկներն ունենան համապատասխան գիտելիքներ և հմտություններ:

«ՀՀ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի» 342–357-րդ հոդվածներով սահմանվում են ՇՈՒ-ում բուժկանիսարգելիչ միջոցառումների կազմակերպման ու անցկացման ընթացակարգերը: Սահմանվորապես՝ նշվում է, որ հիմնական բուժկանիսարգելիչ միջոցառումներն են՝ զինծառայողների դիսպանսերացումը, ամբողատոր, ստացիոնար և առողջարանային բուժումը: Ընդմին դիսպանսերացման նպատակն է անձնակազմի առողջական վիճակի բժշկական հսկողությունը, հիվանդությունների վաղ հայտնաբերումը, զինծառայողների ծառայության ու կենցաղի պայմանների ուսումնասիրությունը և իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկությունների նշակումը, նրանց առողջության վրա բացասարար ազդող գործուների բացահայտումը, կանխարգելիչ և բուժառողջարարական միջոցառումների իրագործումը: Սահմանվում են նաև զինծառայողների առողջական վիճակի բժշկական հսկողության հիմնական եղանակները՝ անձնակազմի նկատմամբ ամենօրյա բուժեկողություն նարտական պատրաստման ընթացքում և կենցաղում, զինծառայողների բուժզննում, ինչպես նաև խորացված ու հսկչ-բժշկական քննություն, պլանային բուժզննումներ: Ըստ «ՀՀ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի»՝ զինվորական բուժիմնարկներում խորացված բժշկական քննության են ենթարկվում տարեկան 1 անգամ սպայական, ենթասպայական կազմերի և շարքային կազմի պայմանագրային զինծառայողները, ինչպես նաև պաշտպանության նախարարության համակարգի քաղաքացիական ծառայողները, իսկ պլանային բուժզննման տարեկան 2 անգամ ենթարկվում են շարքային կազմի պարտադիր ծառայության մեջ գտնվող զինծառայողները՝ ուսուցման ձմեռային և ամառային փուլերից առաջ⁴:

ՈՒ-Դ Զինված ուժերում զինվորական ծառայության անվտանգության հայեցակարգային դրույթները ներկայացված են «Ռուսաստանի Դաշնության զինված ուժերում զինվորական ծառայության անվտանգության ամրապնդման աշխատանքի կատարելագործման մասին» 1997 թ. հմ. Դ-10 հրահանգագրում: Այդ փաստարդում զինվորական ծառայության անվտանգությունը սահմանվում է որպես զինվորական ծառայության այնպիսի վիճակ, երբ ապահովվում է զինծառայողների, տեղական բնակչության և շրջակա միջավայրի պաշտպա-

⁴ Տես «ՀՀ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թ. դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-99 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1997, հմ. 1):

նուրյունը Ո՞Դ Զինված ուժերի գործունեության հետևանքով առաջացող բոլոր հնարավոր վտանգներից:

Զինվորական ծառայության անվտանգության բուժապահովման միջոցառումների շարրում առանձնացվում են.

— զորքերի (գրատեսակների) ամենօրյա գործունեության և կենցաղային պայմանների մշտական սանիտարահակահամաճարակային վերահսկողությունը,

— զորային օդակներում զինվորական անձնակազմի բուժկանխարգելիչ գործունեությունը,

— զինվորական ծառայության գորակոչվելիս և պայմանագրով զինվորական ծառայության անցնելիս քաղաքացիների ռազմաքաղաքական փորձաքննությունը*,

— ծառայողական պարտականություններ կատարելիս զինծառայողների հիվանդացության և վնասվածքներ ստանալու դեպքերի պարբերական վերլուծությունը և համապատասխան եզրահանգումները, և այլն⁵:

Զինվորական ծառայության բուժանվտանգության ապահովման գործում կարևոր դեր է վերապահված ռազմաքաղաքական ծառայությանը, որի գործունեության մեջ հատուկ տեղ ունի զորային օդակների աշխատանքների կազմակերպումը⁶: Միևնույն ժամանակ, զորամասերում բուժանձնակազմն ընդգրկված է զորամասի թվակազմում և ամբողջությամբ ենթակա է զորային օդակի դեկավարությանը: Այս համատեքսուում նրանց առջև դրված խնդիրների լուծման գործում կարևորվում է նաև մասնագիտական գործունեության առումով ռազմաքաղաքական ծառայությանը, իսկ զինվորական-ծառայողական պարտականությունների կատարման մասով՝ զորամասի հրամանատարությանը ենթակայության հարցերի համադաշտության ապահովումը:

Ծառայողական գործունեության անվտանգության ապահովման շրջանակներում լուծվում է զինված ուժերի ռազմաքաղաքական պատրաստման հիմնական խնդիրներից մեկը՝ անձնակազմի պատրաստումը կոտրվածքների և այլ բնույթի վնասվածքների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերմանը՝ ինքնօգնությունը:

* Հայաստանի Հանրապետությունում զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաքաղաքական փորձաքննության կարգը, հիվանդությունների և ֆիզիկական թերությունների ցանկը, դրանց առանձին հոդվածների ցանկի կիրառման պարզաբնակությունը, ըստ զինվորական մասնագիտությունների լրացուցիչ պահանջների, ըստ հիվանդությունների փորձաքննության ենթակա անձանց և փորձաքննություն իրականացնող մարմինների, պարտադիր զինվորական ծառայության գորակչվող անձանց, զինծառայողների, ռազմապատմնական հաստատությունների դիմորդների առողջական վիճակի և ֆիզիկական զարգացման սահմանափակումների աստիճանների ցանկերը և նշված գործընթացների հետ կապված մի շարք այլ կարգավորումները սահմանված են ՀՀ Պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի հմ. 175-Ն հրամանով (տես ՀՀ Պաշտպանության նախարարի 2010 թ. փետրվարի 26-ի «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաքաղաքական փորձաքննության կարգը հաստատելու մասին» հմ. 175-Ն հրամանը (<http://www.mil.am/files/175-N-1323764478-.pdf>):

⁵ Տես B. A. Гуляев, C. B. Полунин. Об оценке лечебно-диагностической работы в военном звене медицинской службы. «ВМЖ», 2004, № 7:

⁶ Տես B. B. Шаппо. Медицинское обеспечение Вооруженных сил России: итоги и перспективы. «ВМЖ», 2008, № 1:

յան և փոխօգնության տարրերակներով, ինչպես նաև իրականացվում են զինծառայողների հիգիենիկ ուսուցողական և դաստիարակչական, առողջ ապրելակերպի քարոզման միջոցառումներ: Դրանք կազմում են մի առանձին համակարգ, որի նպատակն է զինծառայողների շրջանում իրենց առողջության պահպանման ու ամրապնդման, սանիտարական կանոններին և նորմատիվներին հետևելու, շրջապատող միջավայրի պահպանության նկատմամբ գիտակից վերաբերունքի ձևավորումը:

Զորային օրակում ծառայության անվտանգության բուժապահովման հարցերը ռազմարժշկական ոլորտում իրագործվող քարեփոխումների առանցքն են, քանի որ անմիջականորեն ազդում են զինվորական անձնակազմի մարտական ու զորահավաքային պատրաստության մակարդակների վրա, ինչպես նաև պայմանավորում են ամրող ռազմարժշկական ծառայության գործառության արդյունավետությունը⁷:

Զորամասերում ծառայության անվտանգության բուժապահովման օպտիմացման համար կարևոր նշանակություն ունի զինծառայողներին բուժապահովման հարցերի հետևողական ուսուցումը և դաստիարակությունը, առողջ ապրելակերպի քարոզումը: Դրա անհրաժեշտությունը հատկապես մեծ է նորակոչիկների համար: Ընդ որում, զորամասերի բուժողորդում տեղ գտած և վերացված թերությունները պետք է լինեն այդ պարապմունքների գործնական մասի հիմքը՝ դրանով իսկ ուսուցանվող նյութը ավելի մատչելի դարձնելով զինվորական անձնակազմի համար: Բժշկական պարապմունքների կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է զորամասի հրամանատարության համաձայնությամբ օգտագործել զորամասում առկա տեխնիկական միջոցները, նույնիսկ կազմակերպել տեսալուսածայնային դիտումներ: Լսարանում կարևոր է ունկնդիրների գիտակցությանը հասցնել այն զարաֆարը, որ անձնակազմի բժշկական անվտանգությունն ապահովվում է ոչ թե ի հաշիվ ծառայողական գործունեության, այլ դրա հետ համադրմամբ՝ փոխապայմանավորված տարրերակով⁸:

Ինչ վերաբերում է զորային օրակում բժշկական ծառայության տեղեկատվավերութական աշխատանքին, ապա այն նույնպես ներկայացված համայիր միջոցառումների կարևոր բաղադրիչներից է: Այդ գործունեությունը կարևոր է նաև զորամասի դեկավարության և կենտրոնական կառավարման մարմինների համար՝ զինվորական ծառայության բժշկական անվտանգության ապահովման իրական գնահատականը որոշելու ժամանակը: Դա են վկայում նաև արտասահմանյան զրականության մեջ բերվող մի շարք գործնական օրինակների վերլուծությունները: Այսպես, օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսվերում զորամասի բժիշկն ունի հրամանատարության՝ զինծառայողների առողջության պահպանման հարցերով խորհրդականի կարգավիճակ, և նրա

⁷ Տես Ի. Յ. Եկով. Итоги деятельности и задачи медицинской службы Вооруженных Сил Российской Федерации. «ВМЖ», 2006, № 1:

⁸ Տես Բ. Բ. Ֆեսенкո. Профилактическая медицина и здоровый образ жизни. «ВМЖ», 2007, № 7:

գնահատականների վրա են հիմնվում ռազմաբժշկական ոլորտի հեռանկարային ու կարճաժամկետ ծրագրերը⁹: ԱՄՆ-ի ռազմաբժշկական համակարգում բուժկանչսարգելիչ միջոցառումների ապահովման հարցերում զինվորական բժիշկը ի պաշտոնե հանդես է գալիս որպես զորամասի հրամանատարի տեղակալ (կենտրոնական զորամիավորումների կառուցվածքներում՝ որպես հրամանատարի օգնական)` այդ կարգավիճակից բխող պարտականություններով և ավելի խիստ բնույթի պատասխանատվությամբ հանդերձ¹⁰:

Բժշկական ապահովման գործընթացի առաջնային կատարողները ռազմաբժշկական ծառայության սպաներն են, որոնցից էլ անմիջականորեն կախված է տվյալ զինվորական կառուցվածքային միավորի կազմում զինվորական ծառայության անվտանգության բժշկական ապահովման խնդրի լուծումը: Այս զործընթացում շատ հարցերի ոչ լիարժեք կարգավորվածությունը պայմանավորվում է զորամասային բժիշկների պատվությամբ, նրանք եռանդով չեն մոտենում իրենց մասնագիտական աշխատանքին, չեն ձգտում բարձրացնելու իրենց որակավորումն ու մեծացնելու հմտությունները, բավարարվում են միայն հոսպիտալային օղակներին դիմելով¹¹: Սինչդեռ զինվորական ծառայության անվտանգության բժշկական ապահովումը կարգավորող փաստաթորերի պահանջների ճիշտ կատարումը և դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը զինվորական բժիշկներից պահանջում են զորային օղակում ծառայության ապահովման արդյունավետ գործող մեխանիզմների առկայություն՝ չբացառելով, իհարկե, այդ գործընթացի անընդհատ կատարելագործման անհրաժեշտությունը:

Զինվորական ծառայության ընթացքում բժշկական անվտանգությունն ապահովելու նպատակով ծառայությունը պետք է կազմակերպել՝ խստագույնս առաջնորդվելով «ՀՀ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի» և այլ դեկավար փաստաթորերի պահանջներով, ուշադրության կենտրոնում պահել սահմանափակումներով և ոչ շարային զինծառայությանը պիտանի զորակոչված զինծառայողների ծառայության ճիշտ կազմակերպման, ըստ ստորաբաժանումների ու զինվորական մասնագիտությունների նրանց բաշխման հարցերը: Կարենոր է ճիշտ և ժամանակին իրականացնել վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուրված հակահամանարակային ու կանխարգելիչ միջոցառումները, հատուկ ուշադրություն դարձնել զինծառայողների անձնական և հասարակական իիգիենայի, անվտանգության կանոնների պահպանմանը, դրանց պատեհաժամ ծանոթացմանը և ճշգրիտ կատարմանը: Այս գործում առաջնային են նաև զինկոմիսարիատներում տարվող բացատրական աշխա-

⁹ Տես H. J. Stolze. Taschenbuch für den Sanitäts - und Gesundheitsdienst der Bundeswehr. Bonn, 1988:

¹⁰ Տես D. D. Deeter. Textbook of Military Medicine. Part 3: «Disease and the Environment». Vol. 2: «Occupational Health: The Soldier and the Industrial Base». US Department of the Army. Virginia, 1993, P. 143:

¹¹ Տես И. М. Чиж. Некоторые итоги и выводы из опыта медицинского обеспечения войск в вооруженных конфликтах. «ВМЖ», 2000, № 6:

տանքները՝ հայտնաբերված պլանային վիրահատությունների կարիք ունեցող գորակոչիկների բուժումը նախքան գորակոչը կազմակերպելու առումով: Զինծառայողների կողմից առողջական գանգատների դեպքում բուժծառայությանը ուշ դիմելը բացառելու նպատակով անհրաժեշտ է զինվորական անձնակազմի հետ անցկացնել հաստատված ու ռազմաքաջկական ծառայության ղեկավարության հետ համաձայնեցված գրաֆիկներով բուժպատրաստման պարապնունքներ, ապահովել զինծառայողների կողմից նախնական բժշկական զիտելիքների յուրացումը: Միջոցառումների կատարման արդյունավետությունը կախված է նաև գորամասերում կատարվող պարբերական բժշկական զննումների մակարդակից, դիսպաններ-դիմամիկ հսկողության տակ գտնվող զինծառայողների համար նախատեսված բոլոր բուժկանխարգելիչ միջոցառումների հատակիրականացումից:

Ներկայացված ուսումնասիրության արդյունքները հաստատում են, որ բժշկական ծառայությունը նշանակալի դեր ունի գորային օղակում զինվորական ծառայության անվտանգության ապահովման և զինված ուժերի մարտունակության ամրապնդման գործում: Այդ անվտանգության բժշկական ապահովումը ներառում է այնպիսի միջոցառումների լայն համայիր, որոնք առնչություն ունեն հետևյալ ենթաոլորտների հետ՝ մարտական (այդ թվում՝ ֆիզիկական) պատրաստման բժշկական ապահովում, սպառազինության ու ռազմական տեխնիկայի շահագործման ժամանակ զինծառայողների աշխատանքի պայմանների բժշկական վերահսկողություն, առողջապահական կառույցների շինարարական և տնտեսական աշխատանքներ, անհատական աշխատանք նյարդային, հոգեբանական անկայունության նախանշաններ ունեցող զինծառայողների հետ, բուժկանխարգելիչ ու սանիտարահակահամաճարակային միջոցառումների իրագործում, զինծառայողներին անհրաժեշտ բժշկական գիտելիքների ուսուցում և դաստիարակություն, առողջ ապրելակերպի քարոզում, ինչպես նաև զինվորական ծառայության անվտանգության ապահովման համար պատասխանատու հանձնաժողովների և պաշտոնատար անձանց արդյունավետ աշխատանք:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԱՀԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Ա. ԳԱԼԱՍՅԱՆ, բ/ծ գնդապետ, բժշկական զիվուրյունների ղոկուր,
պլոտինոր, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի պետ,

Ա. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, բժշկական զիվուրյունների
թեկնածու, ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զիվորական հոսպիտալի
առաջարկար թերապևտ



Զինված ուժերի անձնակազմի առողջական վիճակի կարևոր ցուցանիշներից են մահացությունը և մահաբերությունը: Դրանք մյուս ռազմաբժշկական ցուցանիշների (իիվանդացություն, վաղաժամկետ զորացրումներ, դիսպանսերացում և այլն) հետ մեկտեղ ցույց են տալիս ԶՈՒ-ի անձնակազմի բուժապահովման ոլորտում տիրող իրավիճակը և տեղի ունեցող փոփոխությունների ընթացքը: Զինված ուժերի անձնակազմի մահացության ու մահաբերության ինտեգրալային ցուցանիշներն արտահայտում են նաև անձնակազմի առողջության վերաբերյալ ավելի հավաստի տեղեկույթ:

Մինչդեռ վերջին 150 տարվա արխիվային փաստարքերի ու գրականության աղյուսների վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ հիմնախնդիրը բոլոր ժամանակների համար բավարար չափով ուսումնասիրված չէ¹:

Իսկ մահացության ու մահաբերության վերաբերյալ հրապարակված արվածները հիմնականում վերաբերում են պատերազմական ժամանակաշրջանին:

Այնուամենայնիվ, վերջին տարիներին հրապարակված մի շարք գիտական ուսումնասիրություններում այդ մասին կան որոշ տեղեկություններ: Մասնավորապես՝ Ն. Կրասիլովան բավականին հանգամանորեն վերլուծում է ՌԴ Զինված ուժերում մահացության հիմնախնդիրը՝ ըստ պաշտոնական տվյալների: 2008 թ. ՌԴ Զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս և ոչ աշխատանքային ժամերին զոհվել է 471 զինծառայող: Ընդ որում, նրանց գրեթե 50 %-ը (231 մարդ) ինքնասպանություն է գործել, դժբախտ պատահարների հետևանքով մահացել է 121 մարդ, ևս 50 զինծառայող դարձել է ավտոտրանսպորտային պատահարների զոհ: 26 մարդու մահվան պատճառը «սպանությունն է կամ անզգուշությունը»: 24 զինծառայողի մահը ոչ կանոնադրային փոխհարաբերությունների հետևանք է: 19 զինծառայող զոհվել է գենքի հետ ոչ ճիշտ վարվելու պատճառով:

¹ Տե՛ս Ա. Է. Մկրտչյան, Լ. Ա. Ժամագործյան, Ա. Գ. Գալապյան, Ա. Ա. Ամիրյան և ուրիշներ, Պատերազմների և բնական աղետների ժամանակ մարդկային կորուստների մասին: Ե., 2000:

Հեղինակը եզրակացնում է, որ յուրաքանչյուր ամիս ՈՒ-ում զոհվել է մոտ 40 զինծառայող: 2008 թ. դեկտեմբերին զոհվել է 4 զինծառայող, 16 զինծառայող իմբասապան է եղել:

Ներկայացված տվյալները կրում են զուտ նկարագրական բնույթ՝ վկայելով, որ ՈՒ-ում նման հիմնախնդիր զոյտրյուն ունի, սակայն չեն քննարկվում դրանց բուն պատճառները, չեն առաջարկվում լուծման ուղիներ և մերոդարձություն²:

Որոշ հետազոտողներ, մահացությունը զինծառայողների շրջանում համեմատելով բնակչության շրջանում մահացության հետ, չեն ներկայացնում դրա մակարդակը և կառուցվածքը, այլ հիմնականում քննարկում են հետազոտության մերոդները, ինչպես նաև տվյալների բանի ստեղծելու անհրաժեշտությունը³:

Ուսումնասիրվել է մահացությունը պաշտոնաթող զինծառայողների շրջանում: Որպես հետազոտման առարկա ընտրվել են 55 և ավելի տարեկան 1268 անձ, որոնցից 491 մարդ հետազոտման շրջանում արդեն մահացել էր, իսկ 748-ը ողջ էր: Մահացության հիմնական պատճառները եղել են քաղցկեղը, սրտի իշեմիկ հիվանդությունը, զիսուլենի հեմոռօքիկ կամ իշեմիկ ինսուլտը: Կենդանի մնացածների համար ոխիլի գործոններ են եղել արյան բարձր ճնշումը, գիրությունը, դիսլիալիտմիան, ֆիզիկական ոչ ակտիվ կյանքը⁴:

Մահացության ու մահաբերության հիմնախնդիրը գործնականում ուսումնասիրված չէ նաև ՀՀ Զինված ուժերում և ներկայում հանրապետության ռազմական բժշկության համար ունի հասուն կարևորություն: Հայաստանի Հանրապետության համար թենայի արդիականությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով ու նկատառումներով:

- մարդկային և նյութական ռեսուրսների խիստ սահմանափակություն,
- տարածաշրջանում ընթացող պատերազմներն ու ռազմական գործողությունները կարող են ընդունել տևական ու ճգճգիռ բնույթ,
- հանրապետությունը դեռ գտնվում է անցումային շրջանում:

Իհարկե, չի բացառվում, որ նախկին ԽՍՀՄ-ում և նի շարք այլ պետություններում նման հետազոտություններ, այդուհանդերձ, կատարվել են, սակայն դրանց արդյունքները չեն հրապարակվել: Սիևնոյն ժամանակ, մեր կողմից առաջ քաշված խնդիրներն իրենց մասշտարմերով ու նպատակներով էապես տարբերվում են այդ պետությունների պայմաններից, քանի որ տվյալների առկայության դեպքում էլ չի կարելի կատարել պարզ արտածում. բոլոր դեպքե-

² Стат H. Красилова. За год в казармах солдат погибло в несколько раз больше, чем на Кавказской войне. «Новые известия», 20 января 2009 г. (<http://www.newizv.ru/politics/2009-01-20/104430-poteri-bez-boev.html>):

³ Стат R. McLaughlin, L. Nielsen, M. Waller. An evaluation of the effect of military service on mortality: quantifying the healthy soldier effect. «Annals of epidemiology», December 2008, Vol. 18, N 12 (http://www.cmvh.org.au/docs/DHSP/Paper_McLaughlin_2008.pdf):

⁴ Стат X. Y. Sai, Y. He, K. Men, B. Wang et al. All-cause mortality and risk factors in a cohort of retired military male veterans, Xi'an, China: an 18-year follow up study. «BMC Public Health». 2007, Vol. 7 (<http://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC2213668/pdf/1471-2458-7-290.pdf>):

րում էլ փոքր պետությունների համար դրանք բավականին բարդ և հակասական երևույթ են: Բացի այդ.

– նման ուսումնասիրությունները, դրանց արդյունքները և հետևանքները ՀՀ-ի համար ունեն ոչ թե մարտավարական, այլ ռազմավարական նշանակություն, ընդ որում, իմանախնդրի նկատմամբ մոտեցումը պետք է լինի համապարփակ, պարտադիր կարգով ընդորվի Զինված ուժերի մարդկային կորուստների նվազեցման հիմնախնդիրը,

– պետք է հաշվի առնել նաև, որ ՀՀ-ն մի շաբթ վարակիչ, այդ բվում՝ մահարեր, իիվաճնդությունների օջախ է: Այս պայմաններում ոչ համակարգված մոտեցումը ԶՈՒ-ի անձնակազմի բուժապահովման գործում կարող է հաճացնել հարաբերական դինամիկ անկայունության և, ի վերջո, մարդկային կորուստների կառուցվածքում բացասական որակական տեղաշարժերի:

Այսպիսով՝ ՀՀ-ի համար ԶՈՒ-ում գոյություն ունի մահացության ու մահաբերության հիմնախնդիր, իսկ դրա ռազմաքիչկական գնահատականը, լինելով խիստ կարևոր, դեռ տրված չէ: Մասնավորապես՝ խնդիրը վերաբերում է ինչպես մահացության և մահաբերության ընդհանուր պատկերին, այնպես էլ դրանց որակական ու պատճառական կառուցվածքին, վերջինիս փոփոխություններին՝ ըստ բանակային գորամիավորումների, տարիքային խմբերի, գորատեսակների, մահվան անժիշտական տեղի ու բնույթի և այլն:

Նման հետազոտության արդյունքներով հնարավոր կինի մշակել համալիր ծրագիր՝ նպատակադրված ՀՀ ԶՈՒ-ի գինծառայողների շրջանում մահացության և մահաբերության կառուցվածքի փոփոխմանը և նակարդակի նվազեցմանը:

ВОЕННАЯ МЕДИЦИНА

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ МЕДИЦИНСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ ВОЕННОЙ СЛУЖБЫ В ВОЙСКОВОМ ЗВЕНЕ ВООРУЖЕННЫХ СИЛ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Д. Г. ДУМАНЯН, доктор медицинских наук, профессор, Министр здравоохранения
РА, Р. Г. ХАЧАТРИЯН, советник Министра здравоохранения РА,
соискатель кафедры «Общественное здоровье и организация здравоохранения»
Ереванского государственного медицинского университета им. М. Гераци

РЕЗЮМЕ

Результаты проведенного исследования подтверждают, что медицинская служба имеет существенную роль в обеспечении безопасности военной службы в воинском звене и укреплении боеспособности вооруженных сил. Медицинское обеспечение безопасности службы включает широкий спектр мероприятий в следующих сферах: медицинское обеспечение боевой (в том числе – физической) подготовки; медицинский контроль за условиями работы военнослужащих в процессе эксплуатации военной техники и

вооружения; экономическая и строительная деятельность структур здравоохранения; осуществление лечебно-профилактических и санитарно-эпидемиологических мероприятий; воспитание и обучение военнослужащих в целях привития им необходимых знаний в области медицины; пропаганда здорового образа жизни, а также обеспечение эффективной деятельности комиссий и должностных лиц, ответственных за обеспечение безопасности военной службы.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИССЛЕДОВАНИЯ СМЕРТНОСТИ И ЛЕТАЛЬНОСТИ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ

*С. Г. ГАЛСΤՅԱՆ, полковник м/с, доктор медицинских наук, профессор, начальник
ВМФ ЕГМУ, А. А. ГРИГОՐՅԱՆ, полковник м/с, кандидат медицинских наук,
главный терапевт Центрального клинического военного госпиталя МО РА*

РЕЗЮМЕ

Важными показателями состояния здоровья личного состава ВС являются смертность и летальность, представляющие особое значение для разработки программы развития военной медицины. Однако в ВС РА этот вопрос в достаточной степени не изучен. Предлагается проведение исследований смертности и летальности в целях выявления общей картины, качественной и причинной структуры и ее изменений по войсковым соединениям, родам войск, возрастным группам, месту и характеру смерти и т. д.

Подобные исследования дадут возможность разработать комплексную программу, нацеленную на изменение структуры и минимизацию уровня смертности и летальности в ВС РА.

MILITARY MEDICINE

SEVERAL ISSUES ON MEDICAL SECURITY PROVISION OF MILITARY SERVICE IN THE TROOPS LEVEL OF THE ARMED FORCES OF THE REPUBLIC OF ARMENIA

*D. H. DUMANIAN, M. D., Professor, Health Minister, RA,
R. G. KHACHATRYAN, Advisor to the Health Minister, RA,
Applicant at the Public Health and Health Organization Academic Department,
Yerevan State Medical University after M. Heratsi*

SUMMARY

The results of the study confirm that the medical service has an important role in ensuring the security of military service in the troops level and reinforcing combat capability of the Armed Forces. The medical security of the military service includes a wide range of activities in the following spheres: medical provision of combat (including-physical) training; medical control over the

working conditions of servicemen during the usage of arms and military hardware; economic and construction activity of health care structures; therapeutic-preventive and sanitary-epidemiologic measures; education and training of servicemen for inculcating necessary medical knowledge in them; advocacy of healthy life-style; as well as efficiency of commissions and officials responsible for ensuring the security of military service.

SOME ISSUES OF STUDYING MORTALITY AND LETHALITY IN THE ARMED FORCES

*S. G. GALSTYAN, Colonel of Medical Service, M.D., Professor,
Head of the Faculty of Military Medicine, YSMU,*

*A. A. GRIGORYAN, Colonel of Medical Service, PhD in Medicine,
Chief Therapist of the Central Clinical Military Hospital, MOD, RA*

SUMMARY

Important health indicators of the Armed Forces personnel are mortality and lethality which are of particular significance for the elaboration of a development program for the military medicine. However, this issue is not sufficiently studied in the RA Armed Forces. The article proposes scientific study of mortality and lethality to identify the overall picture, qualitative and causal structure, and its changes according to military units, corps, age groups, place and nature of death, etc. Such studies will provide an opportunity to develop a comprehensive program aimed at changing the structure and shrinking the mortality and lethality in the RA Armed Forces.

**ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ՈՒ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ**

**Ա. Ռ. ՂՈԽԱՅԱՅԱՆ, գնդապետ,
ՀՀ ՊՆ Ռազմական ուղիկանության պետ**



Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության երաշխիքը մարտունակ, ռազմական անվտանգության ապահովման խնդիրների լուծմանը մշտապես պատրաստ Զինված ուժերն են¹: Ներկայումս Հարավկովկասյան տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումները և դրանց հետևանքով ռազմաքաղաքական իրադրության անկայունությունը մեզ պարտադրում են ունենալու հգոր բանակ:

Բանակաշխնությունը բավական բարդ ու շարունակական գործընթաց է, սակայն ուժեղ բանակ ունենալը դեռ չի նշանակում, որ լուծված են բոլոր խնդիրները, և չկան բարդություններ ու թերացումներ:

ՀՀ Պաշտպանության նախարարը 2012 թ. տարեմուտի ուղերձում գրել է. «Մենք մեր ժողովրդին պարտք ունենք տալու. այնպես պիտի անենք, որ 20 տարին լրացած հայոց բանակը որակապես տարբերվի նախորդներից և ապացուցի արդեն հասուն ու առավել կայացած լինելը»²: Այս մոտեցմանը այսօր պաշտպանական համակարգում պլանաշափ ծնով իրականացվում են որակական փոփոխություններ:

ՉՈՒ-ի բարձր մակարդակի մարտական պատրաստության պահպանման կարևոր նախադրյալներից են անձնակազմի կարգավարժությունը, զինծառայողների գիտակցական վերաբերմունքը կարգապահության նկատմամբ: Ուստի ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքստում ՉՈՒ-ի գերակա խնդիրներն են զորային կառույցի անձնակազմի պատշաճ մակարդակով կարգապահության ապահովումը, միջանձնային հարաբերություններում գժտայնության մակարդակի նվազեցումը, զինվորական կոլեկտիվներում առկա սոցիալ-հոգեբանական երևոյթների ու զործընթացների վերլուծությունը և, ըստ այդմ, զինվորական կոլեկտիվների կառավարումն ու դրանց ներդաշնակեցումը: Գաղտնիք չէ, որ տարեցտարի նկատմամբ է զորակոչիկների ոչ միայն ֆիզիկական, հոգեֆիզիոլոգիական և ընդհանուր առմամբ առողջական վիճակի ցուցանիշների վատքարացում, այլև արժեքային կողմնորոշումների ձևախախ-

¹ Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ»: «ՀԲ», 2006, հմ. 2, էջ 44:

² «ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի 2012 թվականի տարեմուտի ուղերձը ՀՀ ՉՈՒ անձնակազմին»: Ե., 2011, էջ 6:

տում: Այս հանգամանքը չի կարող բացասարար չազդել առավելագույնս կարճ ժամանակահատվածում զորային կենսազործունեության պայմաններին ու խիստ պահանջներին նրանց հարմարման վրա: Ապահարմարությ հաճգեցնում է բազմաթիվ կարգապահական խախտումների, որոնք իրենց հերթին պատճառ են դառնում զինվորական կոլեկտիվում հակամարտությունների ծագման, ոչ մարտական անդառնալի կորուստների, ինչն անընդունելի է: Չենք կարող չընել, որ կարգազնցությունների կանխարգելման գործում թերացումներ ունեն նաև ՀՀ ՊՆ ուղանական ոստիկանության ստորաբաժանումները: Ի վերջո, նպատակը պետք է լինի ոչ թե կարգազնցին պատժելը, այլ համապատասխան դաստիարակչական ներգործությունների միջոցով նրա արժեքային կողմնորոշումների վեկտորի ուղղությունը փոխելը, նրան պատրաստակամ մարտիկ դարձնելը: Այս ուղղությամբ ՀՀ ՊՆ դեկավարության կողմից իրազործվող բարեփոխումների շրջանակներում նախկին կարգապահական մեկուսարանների փոխարեն ստեղծվել են կարգապահական վաշտեր:

Թեև վերջին մի քանի տարիների ընթացքում զորային կառույցում կարգապահության մակարդակի բարձրացմանն ուղղված մերուդական ու մերուդաբանական ապահովման խնդիրները եղել են հրամանատարական կազմի ուշադրությամբ կենտրոնում, այդուհանդերձ 2012 թ. առաջին կիսամյակում գրանցվել են շուրջ 4788 կարգապահական խախտումներ: Ըստ որում, 2012 թ. 4 ամիսների կտրվածքով 1351 ժամկետային զինծառայողներ ենթարկվել են կալանքի: Փաստերն ու թվերը, իրոք, մտահոգիչ են: Ըստ ծառայության ժամկետի կարգապահական խախտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ խախտումների 35 %-ը կատարվում է մինչև 6 ամիս, 25 %-ը՝ մինչև 12 ամիս, 40 %-ը՝ 18-24 ամիս ծառայած զինծառայողների կողմից: Ընդունակ դրանցում նկատվում են որոշակի օրինաչափություններ: Այսպես, զինծառայողների շրջանում հակամարտածին և ազրեսիվ վարքը միտում ունի վերափոխվելու քրեածին վարքի³:

Հայրենական զինվորական հոգեբանության բնագավառի մասնագետները ոչ կանոնադրական հարաբերությունների պատճառները բաժանում են երկու խմբի:

1. պատճառներ, որոնք պայմանավորված են մինչ զորակոչը անձնավորության ոչ ճիշտ ձևավորմամբ (մանկավարժական բարձրիրողիություն),

2. պատճառներ, որոնք պայմանավորված են ստորաբաժանումներում քողարկված ոչ կանոնադրական հարաբերությունների համակարգի առկայությամբ⁴:

Կարգապահական խախտումների կանխարգելման կարևոր պայման է զորային կառույցում հոգեբանների առկայությունը, որոնք, իմանալով իրենց ենթակայության տակ գտնվող զինծառայողների անհատական-հոգեբանական

³ Տես Զ. Դ. Ալավրյան, Ժամկետային զինծառայողների քրեածին վարքի սոցիալ-հոգեբանական պատճառները և դրանց հարահարման ուղիները: Հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Ե., 2007, էջ 83-86:

⁴ Տես Վ. Հ. Մարգարյան, Հ. Մ. Մարտիրոսյան, Զինվորական կոլեկտիվում ոչ կանոնադրական հարաբերությունների սոցիալ-հոգեբանական պատճառները: «ՀՔ», 2010, հմ. 2:

առանձնահատկությունները, կարող են կանխատեսել հնարավոր բացասական զարգացումները: ՈԽսումնափրությունները ցույց են տալիս, որ ստորին օղակի անմիջական իրամանատարները հաճախ ենթակաների հետ աշխատանքի ընթացքում չեն կարողանում հստակ կերպով կողմնորոշել կոլեկտիվում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական երևոյթների, պրոցեսների բազմազանության մեջ, առաջանում են մի շարք հարցեր, օրինակ, մարդու և նրա արարքների գնահատման ժամանակ չխսպելու համար ո՞ր հոգեբանական բաղադրիչներն ուսումնասիրել, ինչի վրա հասուկ ուշադրություն դարձնել⁵: Այս տեսանկյունից գորային կառույցում բարձր մակարդակի կարգապահության պահպանման նպատակով կարևոր է ենթակա անձնակազմի անհատական-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման ժամանակ ուշադրությունը կենտրոնացնել նրանց վարքի կամ գործունեության անտեսանելի, այսինքն՝ դրդիչ, մասի վերլուծության վրա⁶: Մեր ունեցած տվյալների ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ ԶՈՒ-ում միանգամայն հակառակ պատկերն է, այսինքն՝ ուշադրության կենտրոնում է կատարողական մասը, ինչը հնարավորություն չի տալիս կանխատեսելու գինծառայողի վարքը, գնահատելու նրա շարժառիթավորման ուղղվածությունը:

Վերը ներկայացվածից կարելի է եզրակացնել, որ գորային կառույցում ժամկետային պարտադիր գիննվորական ծառայության գորակոչվածների կարգապահական խախտումները, գիննվորական կենսագործունեության խիստ պահանջներին դժվարությամբ հարմարվելը քաղաքացիական կյանքում նրանց ոչ համապատասխան սոցիալականացման հետևանք են:

Սոցիալականացման ընթացքում աճող սերնդի ձևավորման, նրանց զարգացման գործում յուրաքանչյուր բացրողում բացասարար է ազդում անձնավորության ձևավորման հաջորդ փուլի վրա⁷: ՈԽսոի իրավիճակը շտկելու համար, մեր կարծիքով, նպատակահարմար է.

ա) սկզբունքորեն վերանայել հանրակրթական դպրոցում «Նախնական գիննվորական պատրաստություն» ուսումնական առարկայի դասավանդման մեթոդիկան: Խոսքը վերաբերում է 8-12-րդ դասարաններում պարտադիր ուսուցման խնտերականիվ մեթոդների կիրառմանը՝ գորային կառույցին բնորոշ կենսական իրավիճակների մոդելավորմամբ, դեռային խաղերի կիրառմամբ, պլորեներների համատեղ լուծմամբ: Ընդ որում, այս ուսումնական առարկայի դասավանդմամբ զբաղվող անձինք պետք է ունենան մանկավարժական որակավորում,

բ) ՀՀ ՊՆ գիննկոմիսարիատներում մինչ կցագրումը կցագրվողների համար կազմակերպել երկարաբյա խորացված դասալսումներ, որոնց նպատակը պետք է լինի գիտակցված կարգապահություն պահպանելու դիրքորոշման ձևավորու-

⁵ Տես Վ. Հ. Մարգարյան, Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը: Ե., 2009, էջ 92:

⁶ Տես Բ. Փ. Կուլակով. Военная психология и педагогика. М., 1998, с. 18:

⁷ Այդ մասին ավելի հաճամանորեն տես Լ. Խելլ, Դ. Զիգլեր. Теории личности (Основные положения исследования и применение). СПб., 1997, с. 608:

մը, գորային կենսագործունեության առանձնահատկությունների հաշվառմամբ մի շարք տարրական պահանջների իմացությունը և այլն,

գ) մտցնել կցագրվողների պարտադիր բնութագրման համակարգ: Ընդ որում, կցագրվող աշակերտների դեպքում այդ բնութագիրը պետք է լինի 8-12 դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչների կողմից ներկայացված բնութագրերի ընդհանրացված* տարրերակը՝ առաջադիմության թերթիկի կցմամբ,

դ) մշակել ուսումնական պահանջներում դաստիարակության հայեցակարգ, ինչպես նաև ուսումնական պահանջներում դաստիարակության հայեցակարգ:

Այսպիսով՝ բանակում ծառայությանը նախագորակոչային տարիքի դեռահասների ու պատանիների համակողմանիորեն պատրաստման աշխատանքի ռացիոնալ պլանավորումն ու կատարումը, կրթօջախներում այդ թվակազմի ուսումնական պահանջներում դաստիարակությունը և այդ տեսակետից մանկավարժական ու հոգեբանական ներգործության համակարգը պասիվ վիճակից ակտիվ վիճակի թերելը գերակա խնդիրներ են, որոնք զինվորական ծառայության առանձնահատկությունների հաշվառմամբ հնարավորություն կտան ձևավորելու.

1. Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության համար անհրաժեշտ նախնական գիտելիքներ և զինվորական ծառայության նկատմամբ ներքին դրական տրամադրվածություն, գիտակցված կարգապահություն դրսևորելու և կշռադատված ոխակի դիմելու հակում,

2. Այն անհրաժեշտ նախադրյաները, որոնց հիման վրա գորային կառույցում առավելագույնս կարծ ժամանակահատվածում նպատակային կձևավորվեն մասնագիտական գիտելիքներ և այդ գիտելիքները գործնականում կիրառելու ունակություն, ինչպես նաև պարտքի և պատասխանատվության զգացում:

* Խոսքը վերաբերում է անկախ բնութագրերի ընդհանրացման մեթոդի վիճակում, որը հնարավորություն է տալիս առավելագույն գերծ մնալու ոչ օրյեկտիվ գնահատումներից, հետևաբար և ոչ օրյեկտիվ բնութագրումից:

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОБЛЮДЕНИЯ И УКРЕПЛЕНИЯ АРМЕЙСКОЙ ДИСЦИПЛИНЫ

C. M. ГУКАСЯН, полковник, начальник Военной полиции МО РА

РЕЗЮМЕ

Одной из важных предпосылок сохранения высокого уровня боеготовности личного состава ВС является сознательное отношение к воинской дисциплине. Исследованы социально-психологические причины нарушений дисциплины в военном звене, а также некоторые упущения со стороны подразделений Военной полиции с точки зрения профилактики этих нарушений.

Результаты анализа данных исследований показали, что причины правонарушений в основном обусловлены трудностью адаптации военнослужащих срочной службы к строгим требованиям армейской жизни, а также конкретными упущениями в работе с подростками в процессе их социализации в допризывном возрасте. С этой точки зрения предлагаются: пересмотреть методику преподавания курса начальной военной подготовки в общеобразовательных школах; организовать в военных комиссариатах для призывников двухнедельные курсы лекций с целью формирования установки на осознанное соблюдение воинской дисциплины; разработать концепцию военно-патриотического воспитания молодежи и программы военизованных игр, что может стать основой для формирования у них необходимых начальных знаний для обязательной срочной военной службы в ВС, положительной ориентированности к воинской службе, а также склонности к проявлению сознательной воинской дисциплины и обдуманного риска.

MILITARY PSICOLOGY AND EDUCATION

SOME ISSUES OF ADHERENCE TO AND REINFORCEMENT OF THE ARMY DISCIPLINE

S. M. GHUKASYAN, Colonel, Chief of the Military Police, MoD RA

SUMMARY

One of the main preconditions for maintaining high level combat ability of the AF personnel is the conscious approach to the army discipline. The socio-psychological causes of breaches of discipline in the military echelon, as well as some oversights by the units of the Military Police in terms of preventing these breaches have been examined. The analysis results showed that the causes for the breaches are mainly determined by the conscripts' adapting difficulty to the harsh requirements of the army life, as well as certain omissions in working with teenagers in the process of their socialization at the pre-induction age.

From this perspective it is suggested that: the methodology of basic military education teaching course in secondary schools should be revised; two-week courses should be organized for the conscripts in military commissariats aimed at shaping certain guidelines for conscious adherence to the army discipline; a conception of military-patriotic education of the youth and paramilitary games programs should be worked out, which may become the basis for giving them the necessary elementary knowledge for the compulsory military service in the Armed Forces, positive orientation towards the service, as well as attitude to displaying a conscious army discipline and premeditated risk.

**ՀԵՏԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՏԵԳՐՈՒՄԱՅԻՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
(1991–1994 թթ.)**

L. L. ՈՒԼՈՒԹԱԲՅԱՆ, ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դասախոս



ԽՍՀՄ փլուզումից հետո նրա նախկին տարածքում առաջացավ ռազմաքաղաքական ու տնտեսական վակուում, վերացավ անվտանգության ապահովման միութենական համակարգը, խզվեցին նախկինում սերտ տնտեսական կապերը, որոց տարածաշրջաններում երևան եկան ժամանակին խորհրդային կարգերով ճնշվող միջերնիկական հակամարտությունները¹: Իրավիճակը բարդանում էր նաև այն պատճառով, որ աշխարհի՝ նախկինում հաստատված երկրներ մողելը քայլայվեց՝ միջազգային անվտանգության միջավայրում առաջ բերելով անորոշությունները²: Մինչդեռ նորանկախ հանրապետությունների դեկավարների մեծ մասը չուներ ինքնուրույն ներքին ու արտաքին քաղաքականություն մշակելու և վարելու փորձ:

Իրավիճակը շտկելու, մասնավորապես՝ վակուումը լցնելու, և հանրապետություններին հնարավորինս նվազ կորուստներով այդ դժվարությունները հաղթահարելու առումով զգայի դեր խաղաց Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) ստեղծումը 1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելառուսի, Ռուսաստանի և ՈՒկրաինայի դեկավարների ստորագրած համաձայնագրով: Դեկտեմբերի 21-ին Ալմա Արայում ստորագրված հոչակագրով Համագործակցության այդ 3 հիմնադիր պետություններին որպես ԱՊՀ համահիմնադիրներ միացան նախկին խորհրդային միութենական հանրապետություններից ևս 8-ը, այդ թվում նաև Հայաստանը: ԱՊՀ ստեղծման գործում վճռորոշ դերը պատկանում էր Ռուսաստանին:

Անկախության սկզբնական շրջանում նախկին խորհրդային հանրապետություններն ապրում էին կենտրոնախույս միտումների և գործնարարության նոր ինքնուրյան և տնտեսական, սոցիալական, քաղաքական զարգացման նոր ուղիների

¹ Տես Հ. Քորանջյան, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման հիմունքները Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում: «Հակամարտության էքնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքանության և ազգային անվտանգության հիմունքները», Ե., 2010, էջ 673:

² Տես Հ. Քորանջյան, Լեռնային Ղարաբաղի վտարանդիական կառավարության մասին (1991 թ. ապրիլ – դեկտեմբեր, Մոսկվա): «Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում – Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս – Աֆղանստան»: Ե., 2009, էջ 41:

ու կողմնորոշիչների որոնումների շրջան։ Նրանց դեկավարներից շատերը ձգտում էին հնարավորինս հեռու մնալու Ռուսաստանից և նրա հետ նոյնացվող կայսերական անցյալից։ Հետխորհրդային տարածքում ինտեգրումը կատեցնող գործոններից էին «անկախության իրեալների վերածնունդը և Ռուսաստանի քաղաքական միտումների նկատմամբ անվստահության հայտանիշի առկայությունը»³։

Սակայն անկախ պետականության ստեղծման ճանապարհին առաջացած բազմաթիվ ու բազմապիսի խնդիրները և բարդությունները աստիճանաբար հանգեցրին այն համոզնան, որ պիտույքուններից յուրաքանչյուրը միայնակ ընդունակ չէ հաղթահարելու սոցիալական և տնտեսական խոր համակարգային ճգնաժամը։ «Նախսկին խորհրդային հանրապետությունների անկախ զարգացման առաջին խոր տարիները հանդիչ կերպով ցույց տվեցին, որ ազգային ինքնիշխանությունն ինքնին չդարձավ նրանց սոցիալ-տնտեսական վերածնուի երաշխիք, խոր միմյանցից հեռացումը ոչ միայն չամրապնդեց նրանց սոցիալ-տնտեսական ներուժը, ինչպես նրանք ենթադրում էին, այլև հանգեցրեց հասարակության կենացործունեության կարևորագույն ոլորտներում իրադրության կտրուկ սրման»⁴։

Տնտեսական կապերի խօսումը, անցումն ազատական շուկայական հարաբերություններին, այդ թվում՝ սեփականության նոր ձևերին, բնականարար, ավելի մեծ չափով անդրադարձան փոքր հանրապետությունների վրա, քանի որ ԽՍՀՄ-ում գործել էր արտադրության միջանրապետական կոռպերացիայի համակարգը։ Տնտեսական ճգնաժամը «դոմինոյի էֆեկտով» առաջ բերեց ճգնաժամներ սոցիալական ու բարոյահոգերանական ոլորտներում և չէր կարող էական ազդեցություն չունենալ նաև քաղաքական գերակայությունների ընտրության վրա։ Ուստի կենտրոնախույս ճգնաժամների հետ մեկտեղ հետզհետե ձևավորվեց ինտեգրման անհրաժեշտության գիտակցում⁵։

Ըստիանուր շահերի ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների քաղաքականությունը համակարգելու և փոխգործության արդյունավետության մակարդակը բարձրացնելու նպատակով 1991 թ. դեկտեմբերի 30-ին Մինսկում կազմակերպության անդամ պետությունների դեկավարների նիստում որոշվեց ստեղծել կազմակերպության ընդհանուր համակարգող հաստատություններ։ ԱՊՀ պետությունների դեկավարների խորհուրդ՝ որպես Համագործակցության բարձրագույն մարմին, և Կառավարությունների դեկավարների խորհուրդ՝ 1992 թ. ստեղծվեցին համակարգող նոր մարմիններ՝ Արտաքին գործերի նախարարների

³ А. Гаспарян. Концепция национального интереса (Россия и постсоветское пространство). М., 2000, с. 11.

⁴ Л. Б. Москвин. Многоуровневая система интеграции в СНГ (причины, проблемы, тенденции развития). «Вестник Московского университета», сер. 12, Политические науки, 1999, № 1.

⁵ Shu A. Ирхин. Реинтеграция постсоветского пространства: условия, теоретическое осмысление, возможные сценарии (rusprostranstvo.com/article/view/337):

⁶ Shu «Временное соглашение о Совете глав государств и Совете глав правительств Содружества Независимых Государств от 30 декабря 1991 года». «Дипломатический вестник», 1992, № 2–3:

խորհուրդ և Պաշտպանության նախարարների խորհուրդ⁷: ԱՊՀ կազմակերպական շինարարությունը համակարգող նոր հաստատությունների ստեղծումը շարունակվեց նաև հաջորդ տարիներին:

ԱՊՀ տարածքում ձեռնարկված քայլերը նպաստեցին ոչ միայն ընդհանուր քաղաքական մքննողորդի առողջացմանը, այլև պայմաններ ստեղծեցին կազմակերպության անդամ պետությունների միջև տարբեր ոլորտներում համագործակցության գարգացման համար:

Կազմակերպության անդամ պետությունների միջև առավել արդյունավետ կերպով գարգանում էր ռազմաքաղաքական համագործակցությունը: Դա քացատրվում է նրանով, որ ԽՍՀՄ վիլուգումից հետո, չնայած երկրում տիրող խորը ճգնաժամին, Ռուսաստանը, այնուամենայնիվ, պահպանում էր աշխարհում իր առաջատար դիրքերը՝ ռազմական տեխնիկայի ու տեխնոլոգիաների և ընդհանրապես ռազմական (հատկապես՝ միջուկային) ներուժի առումով: Հետխորհրդային տարածքում Ռուսաստանը ձգտում էր պահպանելու իր ազդեցությունը իմաստանում ռազմաքաղաքական մեխանիզմների ստեղծման միջոցով:

Մյուս կողմից՝ նորանկախս պետությունները հատկապես խոցելի էին և անպատրաստ ինքնուրույն գործողությունների՝ ռազմական, պաշտպանական խնդիրների լուծման առումով, քանի որ Խորհրդային Միության գոյության տարիներին այդ ոլորտն ամբողջությամբ գտնվում էր Մոսկվայի տօնինության տակ, և հանրապետություններն այդ հարցերում պետական քաղաքականության համապատասխան փորձ չունեին:

Խորհրդային Միության վիլուգմանը հաջորդած առաջին ամիսներին հետխորհրդային մի շարք պետություններում, այդ թվում նաև Հայաստանում, ընդունվելի էր համարվում ԱՊՀ-ում միացյալ գինված ուժերի պահպանումը⁸: Դա, ինչպես նշվեց, պայմանագործական էր այն հանգամանքով, որ նորանկախ պետություններում չկար բանակաշնուրական փորձ, ինչպես նաև անհրաժեշտ էր դիմակայել արտաքին սպառնալիքներին: Միացյալ գինված ուժերը, ըստ Էության, գտնվելու էին Ռուսաստանի հրամանատարության ներքո: Միացյալ գինված ուժերի ըստ էության, պահպանումը նշանակում էր նորանկախս պետությունների ինքնիշխանության գգալի սահմանափակում, քանի որ ազգային գինված ուժերի առկայությունը անկախ պետականության կարևորագույն տարրերից է:

Հետագայում միացյալ գինված ուժերի դեկավարման, ֆինանսավորման, համալրման, տեխնիկական ապահովման հետ կապված խնդիրները հանգեցրին այն քամին, որ ԱՊՀ անդամ պետությունները հրաժարվեցին այդ զաղափարից: Դրա փոխարեն որոշվեց անցումային շրջանի համար կազմավորել ընդհանուր նախանշանակման միացյալ ուժեր: Այդ մասին համաձայնագիրը 1992 թ. փետրվարի 14-ին Մինսկում ստորագրեցին ԱՊՀ անդամ ութ պետություններ, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը⁹:

⁷ Տես Վ. Տողամյան, ԱՊՀ կազմակերպական կառուցվածքը: Ե., 1996, էջ 3–7:

⁸ Տես Ա. Հարանց. Պանտորք մեջ գործությունները համագործակցության մեջ և անդամության մեջ. Երևան, 2002, էջ 270:

⁹ Տես «Соглашение между Республикой Армения, Республикой Беларусь, Республикой Казахстан, Республикой Кыргызстан, Российской Федерации, Республикой Таджикистан,

Ընդհանուր նախանշանակման ուժերի մեջ ներառված էին այն գորամիավորումները, խմբավորումները, զորամասերը, հիմնարկությունները, ռազմառումնական հաստատությունները, ռազմական օրյեկտները, որոնք չէին մտնում Համագործակցության ռազմավարական ուժերի^{*}, ինչպես նաև անդամ պետությունների գինված ուժերի կազմի մեջ և նրանց համաձայնությամբ գտնվելու էին միացյալ գինված ուժերի գիշավոր հրամանատարության օպերատիվ ենթակայության տակ: Այդ ուժերի կարգավիճակը, նյութատեսնիկական և ֆինանսական ապահովման հարցերը կարգավորվելու էին առանձին համաձայնագրերով:

Ի լրումն այս համաձայնագրի՝ 1992 թվականի մարտի 20-ին Կիևում ստորագրվեց մեկ այլ՝ «Անցումային շրջանում Միացյալ գինված ուժերի մասին համաձայնագիր», որտեղ նշվում էր, որ այդ ուժերն ուղղված չեն այն պետությունների դեմ, որոնք տվյալ Համաձայնագրի մասնակից չեն¹⁰: Ըստ փաստաթրիփ՝ Միացյալ գինված ուժերը կազմավորվում էին անցումային շրջանում Համագործակցության անդամ պետությունների անվտանգության ապահովման, զորքերի դեկավարման պահպանման, հականարտությունների կանխարգելման և նախկին ԽՍՀՄ Զինված ուժերի համաձայնեցված բարեփոխման նպատակով: Միացյալ գինված ուժերը ներառելու էին Համագործակցության ռազմավարական ուժերը և ընդհանուր նախանշանակման ուժերը:

Նոյն օրը Կիևում ստորագրվեց նաև «Անկախ Պետությունների Համագործակցության անդամ պետությունների պետական սահմանների և ծովային տնտեսական գոտիների պահպանության մասին համաձայնագիրը», որով նախատեսվում էր Սահմանապահ զորքերի միացյալ հրամանատարության ստեղծում¹¹:

Այս համաձայնագրերը կարևոր էին նորանկախ պետությունների անվտանգության ապահովման, նախկին Խորհրդային Միության ռազմական ժառանգության համակարգված և համաձայնեցված տնօրինման, անկառավարելի գործընթացներից խուսափելու առումով: Սակայն 1990-ական թթ. սկզբին հետխորհրդային տարածքում ապահնտեգրումը տեղի էր ունենում բավական արագ, և ձեռք բերված պայմանավորվածությունները չհաջողվեց իրագործել: Ռազմավարական ուժերն ամբողջությամբ անցան Ռուսաստանի Դաշնության տնօրինության տակ, իսկ ընդհանուր նախանշանակման ուժերն այդպես էլ

Туркменистаном и Республикой Узбекистан о Силах общего назначения на переходный период». «Содружество» (Информационный вестник Совета глав государств и Совета глав правительств СНГ). Минск, 1992, № 2:

* Ռազմավարական ուժերի միջուկային գենքի կառավարման, վերահսկողության, սպասարկման ռազմական ուժերն են, որոնց հետ կազմակերպությունների համաձայնեցված լուծման վերաբերյալ ԱՊՀ անդամ պետություններն ստորագրել են առանձին համաձայնագիր (տես «Соглашение между государствами-участниками СНГ по Стrатегическим силам». «Содружество», 1992, № 1):

¹⁰ Տես «Соглашение об Объединенных Вооруженных Силах на переходный период». «Дипломатический вестник», 1992, № 7:

¹¹ Տես «Соглашение об охране государственных границ и морских экономических зон государств-участников Содружества Независимых Государств». «Содружество», 1992, № 4:

շկազմավորվեցին: Հետխորհրդային պետություններն իրենց ուժերը կենտրոնացրել էին ազգային քանակների ստեղծման վրա, հատկապես որ դրանցից մի քանիսը, ինչպես, օրինակ, Հայաստանը, գտնվում էին պատերազմական վիճակում, և ազգային զինված ուժերի ստեղծումը դարձել էր կենսական անհրաժեշտություն:

Եթին գործում նաև տնտեսական համագործակցության բնագավառում ձեռք բերված պայմանափորձանությունները: Այդ է նշվում ԱՊՀ անդամ պետությունների դեկավարների 1992 թ. դեկավարի 14-ին ընդունած համատեղ հայտարարության մեջ¹²: Ծովայական տնտեսության անցման պայմաններում անհրաժեշտ էր հաշվի առնել նաև շուկայի օրյենտիվ օրենքները, հնարավոր չեր միջավետական տնտեսական փոխգործություն կազմակերպել միայն հրահանգներով: Անհրաժեշտ էր նաև սահմանել փոխադարձ հաշվարկների հստակ համակարգ, հետխորհրդային տարածքում հաստատել քաղաքական կայունություն, ապահովել հաղորդակցության ուղիների անխափան աշխատանք, իսկ այդ ամենը ժամանակ էր պահանջում:

Ինտեգրման նման մակարդակը չեր համապատասխանում ոչ միայն Ռուսաստանի, այլև Հայաստանի և ԱՊՀ անդամ այն պետությունների շահերին, որոնք ծովում էին իրական փոխահավետ ինտեգրման և նպատակ ունեին Համագործակցությունը վերածելու արդյունավետ ու օպերատիվ կերպով գործող միջավետական կառույցի:

Չնայած վերը նշված դժվարություններին՝ ԱՊՀ անդամ պետությունները շարունակեցին ինտեգրման և համագործակցության մեխանիզմների մշակումը: Ռազմաքաղաքական համագործակցության բնագավառում շրջադարձային էր 1992 թ. մայիսի 15-ին Տաշքենդում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի (ՀԱՊ) ստորագրումը¹³: Պայմանագրին ստորագրեցին ԱՊՀ անդամ վեց պետություններ, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը: 1993 թ. պայմանագրին միացան Աղրբեջանը, Վրաստանը, Բելառուսը: Պայմանագրին ուժի մեջ մտավ այն ստորագրած պետությունների կողմից վավերացվելուց հետո՝ 1994 թ. ապրիլի 20-ից, իննու տարի ժամկետով՝ հետագա երկարաձգմամբ: 1995 թ. նոյեմբերի 1-ին այն գրանցվել է ՍԱԿ-ի Քարտուղարությունում¹⁴:

ՀԱՊ-ի ստորագրումը սկզբունքորեն նշանակում էր պաշտպանական դաշինքի ստեղծում: Պայմանագրի համաձայն՝ «մասնակից ցանկացած պետության դեմ ազրեափայի գործողության կատարման դեպքում մնացած բոլոր մասնակից պետությունները նրան կտրամադրեն անհրաժեշտ օգնություն, ներառյալ՝ ուղամական, ինչպես նաև իրենց տրամադրության տակ եղած միջոցներով աջակ-

¹² Տես «Заявление глав государств о согласовании действий в проведении экономической реформы». «Дипломатический вестник», 1992, № 4–5:

¹³ Տես «Договор о коллективной безопасности». «Содружество», 1992, № 5:

¹⁴ Տես «Договор о коллективной безопасности (справка)» (ՀՀ Արտաքին գործերի նախարարության արխիվ, ց. 1, գ. 121, թ. 90):

ցուրյուն կցուցաբերեն՝ կոլեկտիվ պաշտպանության իրավունքի իրականացման կարգով՝ ՍԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան»¹⁵:

Պայմանագիրն ուղղված չէր երրորդ երկրների դեմ, չէր շոշափում մասնակից պետությունների՝ ազրեսիայից ՍԱԿ-ի Կանոնադրությանը համապատասխան անհատական պաշտպանության իրավունքը: Այն բաց էր, և բոլոր շահագրգիռ պետությունները, որոնք ընդունում էին պայմանագրի նպատակներն ու սկզբունքները, կարող էին միանալ նրան:

Պայմանագիրն էապես բարձրացրեց այն ստորագրած նորանկախ պետությունների անվտանգության մակարդակը, ամրապնդեց նրանց դիրքերը համապատասխան տարածաշրջաններում և միջազգային ասպարեզում ընդհանրապես: Հարավկովկասյան բարդ տարածաշրջանում գտնվող Հայաստանի համար այն առավել ևս կարևոր էր, եթե հաշվի առնենք Ադրբեյջանի կողմից սանձագերծված և այդ ժամանակահատվածում ընթացող չհայտարարված պատերազմն ու Թուրքիայի պանթյուրքական նկրտումները:

Ակնհայտ էր, որ պայմանագրով ատեղծվող անվտանգության համակարգը գործելու էր Ռուսաստանի ղեկավարությամբ: Տնտեսական, գաղափարախոսական և այլ կարգի լծակների բուլացման կամ դրանց չփնելու պարագայում Պայմանագիրը Ռուսաստանին հմարավիրություն էր տալիս հետխորհրդային տարածքի մի օգալի մասում պահպանելու իր ռազմաքաղաքական ազդեցությունը, ինչն էլ կարևոր նշանակություն ուներ գերտերության կարգավիճակի պահպաննանը ճգոտող Ռուսաստանի Դաշնության համար, հատկապես ՆԱՏՕ-ի՝ դեպի Արևելք ընդարձակման պայմաններում:

Այսպիսով՝ նախկին խորհրդային հանրապետությունները կոլեկտիվ անվտանգության ապահովման խնդիրներում նախընտրեցին առաջնորդվել ժամանակակից աշխարհում կիրառվող եղանակներով: Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ստորագրումը համապատասխանում էր միջազգային շափանիշներին ու պրակտիկային և չէր սահմանափակում նորանկախ պետությունների ինքնիշխանությունը:

ԱՊՀ շրջանակներում ռազմաքաղաքական ինտեգրման խորացմանն էին ուղղված 1992 թ. հովհակի 6-ին Մոսկվայում ստորագրված «Հակաօդային պաշտպանության համակարգի մասին համաձայնագիրը» և նոյն թվականի հոկտեմբերի 9-ին Բիշկեկում ստորագրված «Համագործակցության անդամ պետությունների արտաքին սահմաններին կայուն դրության պահպանան ուղղված համագործակցության մասին համաձայնագիրը»¹⁶: ԱՊՀ անդամ պետությունների արտաքին սահմանների պաշտպանության ամրապնդմանն ուղղված քայլեր արվեցին նաև հետագայում: 1994 թ. սեպտեմբերի 9-ին Մոսկվայում ստորագրվեց «Համագործակցության մասնակից պետությունների Սահմանա-

¹⁵ «Договор о коллективной безопасности».

¹⁶ Տես «Соглашение о системе противовоздушной обороны». «Содружество», 1992, № 6; «Соглашение о сотрудничестве государств-участников Содружества по обеспечению стабильного положения на их внешних границах». «Содружество», 1992, № 7:

պահ գործերին հատուկ տեխնիկայի և այլ նյութական միջոցների արտոնյալ մատակարարությունների մասին համաձայնագիրը»¹⁷:

ԱՊՀ շրջանակներում համագործակցության մեխանիզմների կատարելագործման և դրանց արդյունավետության մակարդակի բարձրացման, այն ավելի միասնական և գործուն կառույցի վերածելու նպատակով 1993 թ. հունվարի 22-ին Սինկուս Համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդի նիստում ընդունվեց ԱՊՀ Կանոնադրությունը, որն ուժի մեջ մտավ 1994 թ. հունվարի 22-ին¹⁸: Կանոնադրության ընդունումը ևս մեկ քայլ էր Համագործակցությունը միջազգային շափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հետխորհրդային տարածքում ավելի ու ավելի լայն տարածում էր ստանում քաղաքական, գիտատեխնիկական, մշակութային և հատկապես տնտեսական վերաբենեգրման գաղափարը: Անկախության առաջին փուլի փորձը նախկին խորհրդային հանրապետություններին ցույց տվեց, որ Արևմուտքի հետ կապված հոյսերն արդարացված չին, արևմտյան շուկաները փակ էին ԱՊՀ երկրների արդյունաբերական ապրանքների համար, շարունակում էին ուժի մեջ մնալ նորանկախ պետությունների նկատմամբ մի շարք խտրական նորմեր:

1990-ական թթ. սկզբին հետխորհրդային տարածքում ինտեգրումային գործընթացները առաջին քայլերն էին համագործակցության մեխանիզմների կատարելագործման և ԱՊՀ-ն արդյունավետ կերպով գործող կազմակերպության վերածելու ուղղությամբ:

Հետագա տարիներին ԱՊՀ անդամ պետությունների միջև համագործակցությունն էլ ավելի ամրապնդվեց, միջպետական կապերը գնալով համակարգված քնույթ էին ստանում և ընդգրկում նոր ոլորտներ: ԱՊՀ անդամ պետություններն աստիճանաբար հարթահարում էին անկախության առաջին տարիների դժվարությունները, մտնում զարգացման համեմատարար ավելի կայուն փուլ և հստակեցնում իրենց քաղաքական դիրքորոշումներն ու առաջնահերթությունները: Այդ առումով զգալի նշանակություն ունեցան 2000 թ. Վ. Պուտինի իշխանության զալուց հետո Ռուսաստանի տնտեսական դրույթը բարելավումը, միջազգային դիրքերի ամրապնդումը և հետխորհրդային տարածքում ուսանուան քաղաքականության ակտիվացումը՝ նպատակատրության մեջ համագործակցությունը գործընթացների զարգացմանը: 21-րդ դարի սկզբին ԱՊՀ անդամ պետությունները զարգացնում են համագործակցությունը տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ ռազմաքաղաքական ոլորտում: 2002 թ. մայիսին ՀԱՊ-ի մասնակից պետությունների բարձրագույն քաղաքական մարմնի՝ Հավաքական անվտանգության խորհրդի (ՀԱԽ) հորելյանական նստաշրջանում որոշում ընդունվեց այդ պայմանագրի հիման վրա ստեղծել միջազգային տարածաշրջանային կազմակերպություն՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության

¹⁷ Տես «Соглашение о льготных поставках Пограничным войскам государств-участников Содружества специальной техники Пограничных войск и других материальных средств». «Бюллетень международных договоров», 1995, № 5:

¹⁸ Տես «Устав Содружества Независимых Государств». «Действующее международное право», т. 1. М., 1996, сс. 719–730:

յունը (ՀԱՊԿ)¹⁹: ՀԱՊԿ-ի անդամ պետությունների անվտանգության հետազա ամրապնդման նպատակով ՀԱԽ-ի 2009 թ. ընդունած որոշումներով ստեղծվեցին կազմակերպության Արագ արձագանքման հավաքական ուժերը, որոնց ստորաբաժանումների առաջին գորավարժություններն անցկացվեցին 2009 – 2010 թք.²⁰: ՀԱՊԿ-ի արագ արձագանքման ուժերի «Փոխսպառակցություն-2012» համատեղ գորավարժությունները, որոնք անցկացվեցին 2012 թ. սեպտեմբերին Հայաստանում²¹, զգալիորեն ամրապնդեցին կազմակերպության անդամ պետությունների համագործակցությունը:

21-րդ դարի սկզբին ԱՊՀ անդամ պետությունների համագործակցությունը զարգանում է նաև տնտեսական ոլորտում: Հետխորհրդային տարածքում Ռուսաստանի քաղաքականության ակտիվացման շնորհիվ 2000 թ. ստեղծվեց Եվրասիական տնտեսական ընկերակցությունը (ԵվրԱզԷՄ), որի հիմնադիր պետություններից է Ռուսաստանի Դաշնությունը: Հայաստանը միջազգային այդ կազմակերպությունում ունի դիտորդի կարգավիճակ²²:

Հետխորհրդային պետությունների համագործակցությունը ԱՊՀ և ՀԱՊԿ-ի շրջանակներում այսօր էլ զգալի դեր է խաղում նրանց անվտանգության և կայունության ապահովման, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման և միջազգային ասպարեզում դիրքերի պահպանման ու ամրապնդման գործում:

Ամփոփելով այս համառոտ վերլուծությունը՝ հարկ ենք համարում նշել, որ, մեր կարծիքով, ԱՊՀ կազմավորման շնորհիվ նախկին խորհրդային հանրապետությունները հիմնականում զերծ մնացին պատերազմներից և հումանիտար աղետներից, ընդհանուր առմամբ պահպանվեցին միջհանրապետական առևտրատնտեսական կապերը, իսկ միջպետական հարաբերությունները կարգավորվում էին բազմաթիվ իրավական փաստաթղթերով:

¹⁹ Տես «Вопросы формирования системы коллективной безопасности» (<http://www.dkb.gov.ru/start/index.htm>):

²⁰ Տես «Коллективные силы оперативного реагирования Организации Договора о коллективной безопасности». ПРЕСС-РЕЛИЗ 2010 (<http://www.dkb.gov.ru/ksor/ksor.pdf>):

²¹ Տես «Учение КСОР ОДКБ «Взаимодействие-2012» в Армении завершилось победой союзников», 19.09.2012 (http://odkb-csto.org/news/detail.php?ELEMENT_ID=1135&phrase_id=1333):

²² Տես «Евразийское экономическое сообщество» (<http://center.gov.by/evrazes.html>):

ВОЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ИСТОРИЯ

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИСТОРИИ ИНТЕГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ НА ПОСТСОВЕТСКОМ ПРОСТРАНСТВЕ: УЧАСТИЕ АРМЕНИИ И РОССИИ (1991–1994 гг.)

Л. Л. УЛУБАБЯН, лектор кафедры истории армянского народа ЕГУ

РЕЗЮМЕ

После распада СССР на постсоветском пространстве образовался политический вакуум, для заполнения которого было создано Содружество Независимых Государств.

В 1991–1994 гг. государствами СНГ был подписан ряд многосторонних договоров и соглашений, касающихся различных сфер межгосударственных отношений. Однако большинство из них в силу объективных и субъективных причин не выполнялось. Наиболее успешно сотрудничество между государствами Содружества развивалось в военно-политической сфере. В этой связи важно отметить подписание шестью государствами организации 15 мая 1992 г. в Ташкенте Договора о коллективной безопасности. Это сыграло существенную роль в деле сохранения стабильности и обеспечения безопасности на постсоветском пространстве.

Для Армении, находящейся в сложном Южно-кавказском регионе, этот договор был особенно важен, так как республика в этот период находилась в состоянии необъявленной войны, спровоцированной Азербайджаном, а также в связи с пантюркистскими притязаниями Турции. России Договор давал возможность сохранить свое военно-политическое влияние на большей части постсоветского пространства, что было особенно важно в условиях расширения НАТО на восток.

Хотя в начале 1990-х гг. интеграционные процессы на постсоветском пространстве проходили болезненно, часто не приводя к желаемому результату, тем не менее они имели важное значение в деле формирования атмосферы сотрудничества на этом пространстве, мирного урегулирования целого ряда сложных проблем, существующих между бывшими советскими республиками, сохранения накопленного в прошлом положительного опыта двусторонних и многосторонних связей. Это были первые шаги интеграции постсоветских государств на новой основе, нацеленные на создание базы для совершенствования механизмов сотрудничества между ними в последующие годы и превращения СНГ в эффективно действующую организацию.

MILITARY POLITICAL HISTORY

SOME HISTORIC ISSUES OF THE INTEGRATION PROCESSES IN THE POST-SOVIET SPACE: ARMENIA'S AND RUSSIA'S PARTICIPATION (1991–1994)

L. L. ULUBABYAN, Lecturer, Chair of the Armenian History, YSU

SUMMARY

After the USSR breakup a political vacuum emerged in the post-Soviet space, and to fill it the Commonwealth of Independent States was organized.

In 1991–1994 the CIS member states signed a whole number of multilateral treaties and agreements, touching on various spheres of interstate relations. However, for some objective or subjective reasons many of them have never been put into force. The most successful cooperation among the CIS members has been developed in the military sphere. In this regard it is worthwhile to mention the signing of the Collective Security Treaty in Tashkent on 15 May, 1992 by six members of the organization. It has played a serious role in maintaining stability and guaranteeing security in the post-Soviet space.

For Armenia, situated in the complicated South-Caucasian region, this treaty was of utmost significance, since in that period the republic was in the state of undeclared war provoked by Azerbaijan, as well as due to Turkey's Pan-Turkic ambitions. The Treaty enabled Russia to keep its military-political hold on a greater part of the post-Soviet space, which was in particular important in terms of NATO expansion to the East.

Although at the beginning of 1990s the integration processes in the post-Soviet space went painful, often missing the desirable outcomes, nevertheless, they had a serious importance in shaping the atmosphere of cooperation in this very space, the peaceful settlement of a whole number of complicated issues existing among the former Soviet republics and in keeping the accumulated positive experience by bilateral and multilateral relations in the past. These were the first integration steps by the post-Soviet states on this background, targeted at the creation of a basis for improving cooperation mechanisms among them in the years to come and transformation of the CIS into an effectively functioning organization.

ՀՀ ԶՈՒ-Ի ՍՏԵՂԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (1990-1994 ԹԹ.)

**Է. Վ. ՊՈՂՈՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի ղոցելիք**



Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը՝ Հայոց բանակը, անցել է հաղթանակների ու նվաճումների փառահետ ուղի: Այդ իրադարձությունների վերաբերյալ աղբյուրագիտական նշանակություն ունեցող իրավական փաստարդերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ոչ միայն վերախմաստավորելու անցյալը, զնահատելու ներկան, այլև մշակելու նոր հաղթանակների ուղենիշները:

Աղբյուրագիտական փառական պատմագիրը պատերազմի մեջ ներքաշված նորանկախ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի համար ավելի քան իրատապ դարձավ

իրենց բնակչության գոյության ապահովման խնդիրը: ՈՒստի և Զինված ուժերի ստեղծումը հավասարագոր էր լինել-չլինելու երկնտրանքին: Այս բարդ իրավիճակում Հայաստանի իշխանությունները կայացրին անվտանգության պահովման ուղղված այնպիսի իրավական ու քաղաքական որոշումներ, որոնք կարևոր նշանակություն ունեցան հետազյում ազգային բանակի ստեղծման համար: Այսպես, հայրենական գինուժի ստեղծմանն էր միտված հանրայիտությունում գարնանային գորակոչը ժամանակակրորապես դադարեցնելու մասին ՀԽՍՀ ԳԽ 1990 թ. մայիսի 3-ի որոշումը¹: Այս պատմական որոշմանը հնարավորություն ստեղծվեց գորակոչային տարիքի երիտասարդներին մնալու հայրենիքում և հետազյում իրենց ներդրումն ունենալու երկրի պաշտպանության գործում:

ԽԽՍՀ վիրում գուգարձել էր խորհրդային բանակի նկատմամբ վերահսկողությունը, սպայական կազմի մի զգալի մասը ակնհայտորեն ոչ օրյեկտիվ էր վերաբերվում հայազգի ժամկետային պարտադիր զինծառայողներին, ինչի հետևանքով մեծ թվով հայ գորակոչներ ստիպված լրում էին իրենց գորամաները: Ծիշտ կողմնորոշվելով ստեղծված իրավիճակում՝ խորհրդարանը նույն թվականի մայիսի 3-ի որոշմանը խորհրդային բանակի գորամաներից հարկադրաբար հեռացած հայ զինծառայողներին ազատեց քրեական պատասխանատվությունից և իրավունք տվեց ծառայությունը շարունակելու Հայկական

¹ Տես «ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը Հայկական ԽԽՍՀ-ում 1990 թվականի գարնանային գորակոչի ժամանակակիր դադարեցման մասին», 3 մայիսի 1990 թ.: «Խորհրդային Հայաստան», 1990 թ. մայիսի 12:

ԽՄՀ տարածքում տեղակայված գորամասերում²: Այդ որոշումը կարևոր էր ոչ միայն իրավական առումով, այլև բարոյահոգեբանական կլիմայի բարելավման տեսանկյունից:

1990 թ. օգոստոսի 21-ին ՀԽՄՀ Նախարարների խորհուրդը որոշում ընդունեց ՆԳ նախարարության առընթեր պաշտպանության ստորաբաժնումներ ստեղծելու մասին³:

Հայաստանը ավելի ակտիվ գործնական քայլերի դիմեց Անկախության հոչակագրի ընդունումից հետո: 1990 թ. հոկտեմբերի 5-ին ձևավորվեց Հայաստանի Հանրապետության հատուկ գունդը⁴: ՀՀ ԳԽ ընդունած որոշմամբ հանրապետության տարածքում դադարեցվեց համընդիանուր զինապարտության մասին ԽՄՀՍ օրենքի գործողությունը⁵: Խորհրդարանի որոշման հիման վրա 1990 թ. նոյեմբերի 10-ին Նախարարների խորհրդի ընդունած որոշմամբ անցկացվեց ժամկետային զինվորական ծառայության գորակոչ⁶: Դրա նպատակն էր հանրապետությունում տեղակայված գորամասերը համարել բացառապես հայ գորակոչիկներով: Հասկանալի է, որ Հայաստանի իշխանությունները, մեծացնելով ՀՀ տարածքում տեղակայված ԽՄՀՍ բանակային ստորաբաժնումներում ժամկետային ծառայություն անցնող հայ երիտասարդների թիվը, ցանկանում էին դմել ապագա հայոց ազգային բանակի հիմքը: Այդ նպատակով ՀՀ Կառավարության որոշումներով հանրապետության տարածքում տեղակայված գորամասերում անցկացվում էին նաև պահեստազորի սպաների, սերժանտների ու շարքայինների ուսումնական հավաքներ⁷ և այլն: Սակայն իրադարձություններն այլ կերպ զարգացան: Ինչպես նշվեց, ՀՀ Զինված ուժերի ստեղծումը տեղի էր ունենում ռազմական գործողություններին զուգահեռաբար: ՈՒստի և Հայոց բանակի հիմքը դարձան նաև հանուն Արցախ աշխարհի գոյամարտի ելած շուրջ 8 տասնյակ երկրապահ կամավորական ջոկատները⁸:

Միևնույն ժամանակ, ակնհայտ դարձավ, որ գոյություն ունեցող պաշտպա-

² Տես ՀԽՄՀ Գերագույն խորհրդի 1990 թ. մայիսի 3-ի «Խորհրդային բանակի գորամասերից հարկադարձար հեռացած հայ զինծառայողների հետագա ծառայության մասին» որոշումը («Հայեական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1990, հմ. 9 (965)):

³ Տես Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 113, ց. 163, գ. 398, թ. 1-3:

⁴ Տես «ՀՀ ստեղծման տարեգրությունից»: «Հայաստանի Հանրապետություն», 1990 թ. հոկտեմբերի 9:

⁵ Տես «ՀՀ ԳԽ որոշումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների 1990 թվականի գորակոչ մասին», 17 հոկտեմբերի 1990 թ.: «Հայաստանի Հանրապետություն», 1990 թ. հոկտեմբերի 19:

⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 487, թ. 1-5:

⁷ Տես «Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի որոշումը Հայաստանի Հանրապետության տարածքում տեղաբաշխված զինվորական մասերին կից պահեստի սպաների, սերժանտների և զինվորների ուսումնական հավաքի և պատրաստման միջոցառումների վերսկսման մասին», 12 փետրվարի 1991 թ.: «Հայաստանի Հանրապետություն», 1991 թ. փետրվարի 13:

⁸ Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ Զինված ուժերի կազմավորման 10-րդ տարեկան նվիրված հանդիսավոր նիստում»: «ՀԲ», 2002, հմ. 1-2:

նական համակարգը չէր կարող լինել հանրապետության անվտանգության ապահովման և նրա քաղաքացիների կյանքի անձեռնմխելիության հուսալի երաշխիք: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ՀՀ Նախարարների խորհուրդը 1990 թվականի դեկտեմբերի կարգադրությամբ ձևավորեց կառավարական հանձնաժողով, որը պետք է մշակեր կոնկրետ առաջարկություններ պաշտպանության համապատասխան պետական մարմին ստեղծելու վերաբերյալ⁹: Դեռ 1990 թ. օգոստոսից ՀՀ ԳԽ-ում գործում էր պաշտպանության և ներքին գործերի հանձնաժողովը, որի նախագահն էր Վ. Սարգսյանը¹⁰: Հետագայում Վ. Սարգսյանը դարձավ նոր կառույցի՝ հանրապետության գինվորական գերատեսչությունների աշխատանքների համադաշան կոմիտեի նախագահը¹¹:

1991 թ. մայիսի 4-ին ՀՀ Կառավարության որոշմամբ ստեղծվեց Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության պետական կոմիտե¹², որն իրականացնում էր ոլորտի բարձրագույն պետական գերատեսչության գործառույթները:

1991 թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Անկախ պետականության հիմնադրույթների նախին» սահմանադրական օրենքը, որտեղ, մասնավորապես, ասվում էր, որ երկրի պաշտպանության և ազգային անվտանգության ավահովման նպատակով Հայաստանի Հանրապետությունը կազմափորում է Զինված ուժեր և հայտարարում համբողիանոր գինապարտությունը¹³: Հանրապետության Զինված ուժերի համակարգի ձևավորման տրամաբանական շարունակությունն էր նորանկախ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հիմնադրումը: Այդ ուղղությամբ առաջին քայլը դարձավ խորհրդարանի կողմից 1991 թ. դեկտեմբերի 4-ին կառավարության կազմն ու կառուցվածքը սահմանող օրենքի ընդունումը, որի համաձայն ՀՀ Կառավարության կառուցվածքում նախատեսված էր ստեղծել նաև պաշտպանության նախարարություն¹⁴:

⁹ Տես «ՀՀ նախարարների խորհրդի կարգադրությունը»: «Հայաստանի Հանրապետություն», 1990 թ. դեկտեմբերի 7:

¹⁰ Տես ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990 թ. օգոստոսի 16-ի «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պաշտպանության և ներքին գործերի հարցերի մշտական հանձնաժողովի կազմն ընդունելու մասին» որոշումը («Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1990 թ. օգոստոսի 23, հմ. 15 (971)):

¹¹ Տես «ՀՀ նախարարների խորհրդի որոշումը գինվորական գերատեսչությունների աշխատանքի կոմիտե ստեղծելու մասին»: «Հայաստանի Հանրապետություն», 1991 թ. փետրվարի 19:

¹² Տես «ՀՀ նախարարների խորհրդի որոշումը ՀՀ նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության կոմիտե ստեղծելու մասին», 1991 թ. մայիսի 4: «Հայաստանի Հանրապետություն», 1991 թ. մայիսի 7:

¹³ Տես «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ 1991 թ. սեպտեմբերի 25-ի սահմանադրական օրենքը (Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր հմ. 8 (998), 1991 թ. սեպտեմբերի 30):

¹⁴ Տես «ՀՀ Կառավարության կազմի և կառուցվածքի մասին» ՀՀ 1991 թ. դեկտեմբերի 4-ի օրենքը («Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», 15 դեկտեմբերի 1991 թ., հմ. 23 (1003)):

ՀՀ Նախագահի 1991 թ. դեկտեմբերի 5-ի հրամանագրով ձևավորված կառավարությունում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար նշանակվեց Վ. Սարգսյանը¹⁵, որն էլ, ըստ էության, ձեռնամուխ եղավ նորանկախ Հայաստանի համար հույժ կարևոր նշանակություն ունեցող գերատեսչության կայացմանը:

Հայաստանի անկախացմանը անմիջականորեն հաջորդած ժամանակահատվածում բանակաշինության բնագավառի կարևորագույն իրադարձություններից էր ՀՀ ԳԽ 1991 թ. դեկտեմբերի 9-ի «Զինապարտության մասին» օրենքը, որով հանրապետությունում մտցվեց պարտադիր զինվորական ծառայությունը¹⁶:

Նոյն թվականի դեկտեմբերի 27-ին ՀՀ ԳԽ-ն հաստատեց ՀՀ ԶՈՒ-ի զինծառայողների երդման տեքստը¹⁷: Իրավական բոլոր հիմքերն ստեղծելուց հետո ՀՀ Կառավարությունն արդեն 1992 թ. հունվարի 28-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության մասին» հմ. 62 պատմական որոշումը՝ դրանով իսկ ազդարարելով Հայոց ազգային բանակի ստեղծումը¹⁸: Հայ ժողովրդի համար այդ բախտորոշ որոշմանը Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի հիմքը դարձան համակարգի դեկավար գերատեսչության ենթակայությանը համանված հանրապետական զինվորական կոմիսարիատը, քաղաքացիական պաշտպանության գունդը, հանրապետական քաղաքացիական պաշտպանության հրամանատարական դիտակետը, Կիրովականում տեղակայված ՀՀ շինարարության նախարարության հմ. 606 շինվարչության հիմքի վրա ստեղծված զորամասը, ՀՀ ՆԳ նախարարության միջիցիայի պարեկապահակային գունդը, հատուկ նախանշանակման օպերատիվ գունդը¹⁹ և այլն: Եվ այսպես. մի կողմից՝ ինտենսիվորեն ընթանում էր բանակային կառուցվածքի ծնավորումը, նրա իրավական ամրագրումը, մյուս կողմից՝ նորաստեղծ բանակային կազմավորումները գտնվում էին փաստացի պատերազմական վիճակում:

Հետագայում էլ անկախ պետության կայուն զարգացումը ուղղակիորեն կապված էր Հայոց բանակի մարտունակության հետ: Պետական ինքնիշխանության որակապես նոր մակարդակ էր նշանավորում Հայոց բանակի համալրման նպատակով ՀՀ Նախագահի 1992 թ. ապրիլի 18-ի հրամանագրով հան-

¹⁵ Տես ՀՀ Նախագահի 1991 թ. դեկտեմբերի 5-ի «Վ. Զ. Սարգսյանին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար նշանակելու մասին» հրամանագիրը («Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1991, հմ. 23 (1003)):

¹⁶ Տես «Զինապարտության մասին» ՀՀ 1991 թ. դեկտեմբերի 9-ի օրենքը («Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990–1995 թթ.)»: Ե., 1995, էջ 194–206):

¹⁷ Տես ՀՀ Գերագույն խորհրդի 1991 թ. դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում ծառայողի երդման տեքստը որպես հիմք ընդունելու մասին» հմ. Ն.-0500-1 որոշումը (<http://95.140.200.36/views/act.aspx?aid=3334&sc=r1>):

¹⁸ Տես ՀԱԱ, ֆ. 113, գ. 167, գ. 62, թ. 1–3:

¹⁹ Տես ՀԱԱ, ֆ. 113, գ. 167, գ. 62, թ. 2–3:

րապետությունում անցկացված առաջին գորակոչը (1992 թ. մայիս-հունիս)՝²⁰ Այդ գործընթացը հաջողությամբ դեկավարում էին ձևավորված գորակոչային կենտրոնական հանձնաժողովն ու գորակոչային քժշկական հանձնաժողովը²¹:

Նորանկախ Հայաստանի ազգային բանակի առաջին գորակոչիները, որոնք համալրել էին դեսանտագրողային հմ. 1 գունդը, մարտի 22-ին իրենց երդումը տվեցին խմբովի, իսկ գունդը հետագայում համալրած մարտիկները, ինչպես կարգն էր, երդում էին տալիս առանձին-առանձին՝²² Հանրապետության նախագահի հրամանագրով աշնանը անցկացվեց նաև առաջին խմբի պահեստագորի սպաների գորակոչ, որոնց ծառայության ժամկետը ազգային բանակում սահմանվեց 2 տարի՝²³ Պաշտպանական կառույցի առանձնահատկություններով պայմանավորված իրավահարարերությունների կարգավորման նպատակով 1992 թ. օգոստոսին ՀՀ դատախազության համակարգում ստեղծվեց զինվորական դատախազություն՝²⁴ ՀՀ Նախագահի 1992 թ. նոյեմբերի հրամանագրով Հայաստանի Զինված ուժերում մտցվեց նաև պայմանագրային զինվորական ծառայություն՝²⁵:

Հայոց հզոր բանակի կայացումը նշանավորվեց նորանկախ Հայաստանի՝ 1993 թ. մայիսի 28-ին Հանրապետության հրապարակում տեղի ունեցած առաջին գորահանդեսով՝²⁶ Հայաստանի Զինված ուժերի կայացման, նրա մարտունակության ամրապնդման ուղղությամբ ձեռնարկված կարևորագույն միջոցառումներից էր պահեստագորի սպաների և զինապարտների վարժական, եռամսյա պարբերական հավաքների անցկացումը, որի մասին ՀՀ Կառավարության համապատասխան որոշումը կայացվել էր 1993 թ. հուլիսի 15-ին՝²⁷ Բանակաշինության գործընթացում կարևոր քայլ էր 1993 թ. հունվարին «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքի ընդունումը: Այդ օրենքով սահմանվեցին ՀՀ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաքոշակային ապահովման, ինչպես նաև սո-

²⁰ Տես ՀՀ Նախագահի 1992 թ. ապրիլի 18-ի «1992 թվականի գարնանային գորակոչ անցկացնելու մասին» հրամանագիրը («Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1992, հմ. 8 (1012)):

²¹ Տես ՀԱԱ. ֆ. 113, գ. 167, գ. 248, թ. 1-2:

²² Տես «Երրում զնդի դրոշի ներքո»: «Հայաստանի Հանրապետություն», 1992 թ. մայիսի 26:

²³ Տես ՀԱԱ. ֆ. 113, գ. 167, գ. 511, թ. 1-2, նաև՝ ՀՀ Նախագահի 1992 թ. հոկտեմբերի 18-ի «1992 թվականի աշնանային գորակոչ անցկացնելու մասին» հրամանագիրը («Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1992, հմ. 20 (1024)):

²⁴ Տես «ՀՀ դատախազության համակարգում զինվորական դատախազություն ստեղծելու մասին» ՀՀ 1992 թ. օգոստոսի 10-ի օրենքը («Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1992, հմ. 15-16 (1019-1020)):

²⁵ Տես ՀՀ Նախագահի 1992 թ. նոյեմբերի 24-ի «ՀՀ Զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայության մասին» հրամանագիրը («Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1992, հմ. 21-22 (1025-1026)):

²⁶ Տես «Կա՛ Հայոց ազգային բանակը»: «Հայաստանի Հանրապետություն», 1993 թ. մայիսի 29:

²⁷ Տես ՀԱԱ. ֆ. 113, գ. 171, գ. 278, թ. 1-2:

ցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական դրույթները²⁸: Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում ամբողջությամբ պահպանվեցին զինծառայողների՝ խորհրդային բանակում գոյություն ունեցած զինվորական կոչումները²⁹: ՀՀ ԳԽ 1994 թ. ապրիլի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության պետական պարզեցների մասին» օրենքով սահմանվեցին ՀՀ զինվորական պարզեցները՝ Հայրենիքի շքանշան, Մարտական խաչի 1-ին աստիճանի և Մարտական խաչի 2-րդ աստիճանի շքանշանները, Արիության մերայլ, Մարտական ծառայության մերայլ³⁰: Նորանկախ Հայաստանի Հանրապետության պարզեցներն առաջին անգամ շնորհվեցին 1994 թվականին Հայաստանի Հանրապետության անկախության տոնի առթիվ: ՀՀ Նախագահի մայիսի 28-ի հրամանագրով ՀՀ Զինված ուժերի ավելի քան երեք տասնյակ ավագ և կրտսեր սպաներ, շարքայիններ և ազատամարտիկներ պարզեցների Մարտական խաչի 1-ին և 2-րդ աստիճանի շքանշաններով, Արիության և Մարտական ծառայության մերայլներով³¹:

Նորանկախ ինքնիշխանության հետագա ամրապնդման առումով հույժ կարևոր էր նաև զինվորական ուսումնական հաստատությունների հիմնումը: Հայաստանի Հանրապետության Կառավարության 1994 թ. հունիսի 24-ի հմ. 279 որոշմամբ ԵՊՀ ուսումնագիտական ամբիոնի հենքի վրա կազմավորվեց ՀՀ ՊՆ բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարանը³², որը 1998 թ. վերակազմավորվեց ուսումնական հիմնարկությունից՝ 1994 թ. սեպտեմբերին Կառավարության որոշմամբ ստեղծվեց ՀՀ պաշտպանության նախարարության ուսումնավիացիոն բոլիչքատեխնիկական ուսումնարանը³³, իսկ 1994 թ. մայիսի 19-ի հմ. 232 որոշմամբ Երևանի պետական բժշկական ինստիտուտի

²⁸ Տես «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պահովության մասին» ՀՀ 1993 թ. հունվարի 7-ի օրենքը («Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», հմ. 1-2 (1029-1030), 1993 թ.):

²⁹ Տես «ՀՀ զինված ուժերի զինծառայողների զինվորական կոչումների մասին» ՀՀ 1992 թ. մարտի 23-ի օրենքը («Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1992, հմ. 6 (1010)).

³⁰ Տես «Հայաստանի Հանրապետության պետական պարզեցների մասին» ՀՀ 1994 թ. ապրիլի 22-ի օրենքը («Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», հմ. 8 (1060), 1994 թ. ապրիլի 30):

³¹ Տես «Հայրենիքի առաջին պետական պարզեցները»: «Հայաստանի Հանրապետություն», 1994 թ. մայիսի 31:

³² Տես ՀԱԱ, ֆ. 113, գ. 171, գ. 264, թ. 1-2:

³³ Տես ՀՀ Կառավարության 1998 թ. հունվարի 16-ի «ՀՀ պաշտպանության նախարարության բազմաբնույթ ուսումնական հրամանատարական ուսումնարանը ՀՀ պաշտպանության նախարարության ուսումնական ինստիտուտի վերակազմավորելու մասին» որոշումը («Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», 1998, հմ. 3 (36)): 2000 թ. փետրվարին ՀՀ Նախագահի հրամանով ուսումնական ինստիտուտը անվանակոչվեց Վազգեն Սարգսյանի անունով:

³⁴ Տես ՀԱԱ, ֆ. 113, գ. 171, գ. 428, թ. 1-2: Այն 2001 թ. կերպավոխվեց ՊՆ բարձրագույն ուսումնական հաստատության՝ ուսումնավիացիոն ինստիտուտի, որը չորս տարի անց պաշտպանության նախարարի հրամանով կոչվեց մարշալ Արմենակ Խանիքերյանցի անունով:

բուժծառայության կազմակերպման և էքստրեմալ բժշկության ամբիոնի հիմքի վրա ստեղծվեց ուսումնաբժշկական ֆակուլտետը³⁵:

ՀՀ Պաշտպանության նախկին նախարար, ներկայումս՝ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը Զինված ուժերի կազմավորման 10-րդ տարելիցին նվիրված հանդիսավոր նիստում անդրադարձել է խաղաղ պայմաններում նորաստեղծ բանակի հետագա անելիքներին. «Արդեն խաղաղ պայմաններում նորաստեղծ բանակը, նրա հրամանատարական կազմը հնարավորություն ստացան լծվելու բանակաշինության գրքին՝ ուշադրություն դարձնելով առավելապես բանակի ներքին խնդիրներին: Բանակաշինության գործընթացն ընդգրկեց ուսումնական համակարգի առանց բացառության բոլոր ոլորտները՝ սկսած բանակային ենթակառույցների ստեղծումից մինչև անհրաժեշտ օրենսդրական հիմքի ապահովում»³⁶:

Այսօր արդեն ՀՀ Զինված ուժերը թևակոյին են զարգացման որակական նոր փուլ: ՀՀ պաշտպանական բարեփոխումների շրջանակներում երկու փաստարդերի՝ «ՀՀ ազգային անվտանգության ուսումնականության»³⁷ և «ՀՀ ուսումնական դոկտորին»³⁸ մշակումը հնարավորություն ընձեռուց ուրվագծելու պաշտպանության նախարարության և Զինված ուժերի բոլոր ստորաբաժանումների զարգացման խնդիրները: ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը ներկա փուլի համար կարևորում է «ժամանակակից սպառազինությամբ համալրված, մարտական բարձր պատրաստությամբ, բարձր բարոյահոգեբանական հատկանիշներով օժտված Զինված ուժերը ունենալը, ինչը հնարավորություն կտա համարձակորեն նայելու Հայաստանի ու Արցախի ներկա և ապագա սպառնալիքներին ու մարտահրավերներին»³⁹:

³⁵ Տես ՀՀ Կառավարության 1994 թ. մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների՝ պահեստազորի սպասների ծրագրով ուսումնական պատրաստության հիմնարույրները և այդ բուհերի ցանկը հաստատելու մասին» հմ. 232 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5467>):

³⁶ «ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույրը Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կազմավորման 10-րդ տարելիցին նվիրված հանդիսավոր նիստում»: «ՀՔ», 2002, հմ. 1-2:

³⁷ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ուսումնականության»: «Հայկական բանակ» ուսումնական հանդեսի հաստուկ բողարկում, 2007:

³⁸ «Հայաստանի Հանրապետության ուսումնական դոկտորին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

³⁹ Ս. Ս. Օհանյան, Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի անցած ուղին, ներկան և ապագան: «ՀՔ», 2012, հմ. 1-2:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

К ВОПРОСУ О ПРАВОВОМ ОБЕСПЕЧЕНИИ СОЗДАНИЯ ВС РА (1990–1994 ГГ.)

Э. В. ПОГОСЯН, кандидат исторических наук,
доцент кафедры Армянской истории ЕГПУ им. Х. Абовяна

РЕЗЮМЕ

С первых дней обретения независимости Армения оказалась в состоянии жесткой конфронтации с Азербайджаном, а затем подверглась военной агрессии с его стороны. В подобных условиях более чем актуальной стала задача обеспечения безопасности населения. С этой целью в 1990–1994 гг. был принят ряд политico-правовых актов, которые в то же время стали основой для формирования ВС РА: в частности: 3 мая 1990 г.–«Постановление Верховного Совета АрмССР о временном приостановлении весеннего призыва 1990 г. в Армянской ССР», 3 мая 1990 г.–«О дальнейшем прохождении службы военнослужащих армянской национальности, вынужденно покинувшими войсковые части Советской армии», Решение Совета Министров РА от 4 мая 1991 г.–«О создании Комитета по обороне при Совете Министров РА», 25 сентября 1991 г. Верховный совет РА принял «Конституционный закон Республики Армения об основах независимой государственности», 9 декабря 1991 г.–«О воинской обязанности» и ряд других законов, которые сформировали прочную правовую базу для создания ВС. 28 января 1992 г. Правительство РА приняло историческое решение «О Министерстве обороны Республики Армения», тем самым юридически закрепив создание армянской национальной армии. В дальнейшем, совершенствование нормативной правовой базы, регулирующей отношения в сфере обороны, было продолжено и уже затрагивало отдельные сферы жизнедеятельности ВС РА.

MILITARY HISTORY

ON THE ISSUE OF LEGAL SUPPORT TO THE FORMATION OF THE RA ARMED FORCES (1990–1994)

E. V. POGHOSYAN, PhD in History, Associate Professor, Armenian
History Chair, ASPU after Kh. Abovyan

SUMMARY

Since the first days of its independence Armenia has been in tough confrontation with Azerbaijan, and then subjected to military aggression by the latter. In such circumstances, the task to ensure the public security became more than just topical. To this end, in 1990–1994 a number of political-legal acts was

adopted which at the same time became the basis for the formation of the RA Armed Forces. In particular, May 3, 1990 «The Decree of the Supreme Soviet of the Armenian SSR on the suspension of the spring draft in 1990 in the Armenian SSR», May 3, 1990 «On further service of the military personnel of Armenian nationality forced to leave the military units of the Soviet Army», the RA Council of Ministers Decision, May 4, 1991 «On the establishment of the Defense Committee under the RA Council of Ministers» 25 September, 1991. The RA Supreme Soviet adopted on December 9, 1991 «Constitutional Law of the Republic of Armenia on the fundamentals of independent statehood», «On duty of service» and a number of other laws that created a strong legal basis for the creation of the Armed Forces.

On January 28, 1992 the RA Government accepted the historic decision «On the Ministry of Defense of the Republic of Armenia»; thereby validating the creation of the Armenian National Army. Later, the improvement of the normative legal framework regulating the defense relations was continued and already touched upon particular spheres of the RA Armed Forces' activity.

**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ
ՄՈՎՍԵՍ ՍԻԼԻԿՅԱՆ**

Մ. Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր

Այս տարի լրացավ տաղանդավոր գորապետ, մեծ հայրենասեր Մովսես Սիլիկյանի ծննդյան 150-րդ տարեդրամը:

Մովսես Բաբայի Սիլիկյանը (Սիլիկով) ծնվել է 1862 թ. սեպտեմբերի 14-ին Ելիզավետպոլի նահանգի Նուխիի գավառի Վարդաշեն գյուղում, կադրային գինվորականի ընտանիքում (ծագումով՝ ուղի): Սկզբնական կրթությունն ստացել է Մոսկվայի 1-ին գինվորական գիմնազիայում: 1882 թ. գիմնազիան ավարտելուց հետո 20-ամյա Մովսես Սիլիկյանը ուսումն շարունակել է Ալեքսանդրյան 3-րդ գինվորական ուսումնարանում: 1884 թ. օգոստոսին Սիլիկյանն ստացել է պոդարությունիկի կոչում, գործուղվել Կովկասյան գինվորական օկրուգ և ծառայության է նշանակվել 155-րդ Կուրանյան հետևակային գնդում: 7 տարի և 7 ամիս եղել է վաշտի հրամանատար, ապա 2 տարի և 5 ամիս՝ գումարտակի հրամանատար: 1888 թ. օգոստոսի 14-ին նրան շնորհվել է պորությունի, 1895 թ. մարտի 15-ին՝ շտարս-կապիտանի, իսկ 1900 թ. մայիսի 6-ին՝ կապիտանի գինվորական կոչում¹:

1904 թ. հոնվարին Սիլիկյանը գերազանցությամբ ավարտել է Օրենքուրզի սպայական հրաձգային դպրոցը: 1905 թ. փետրվարի 26-ին նրան շնորհվել է վոլովանդապետի գինվորական կոչում: 1910 թ. անբախի ծառայության համար Սիլիկյանը պարգևատրվել է Սք. Ստանիլավի 2-րդ աստիճանի շքանշանով²:

1910 թ. դեկտեմբերի 6-ին Սիլիկյանին շնորհվել է գնդապետի գինվորական կոչում: 1911 թ. դեկտեմբերին Սիլիկյանը ուսուական Էքսպեդիցիոն գորաջոկատի կազմում գործուղվել է Պարսկաստան և ծառայության անցել Թավրիզում:

Սիլիկյանը առաջին համաշխարհային պատերազմին նախ՝ որպես 2-րդ հրածգային դիվիզիայի 8-րդ գնդի հրամանատար, ապա՝ Վանի գորախմբի պետ, մասնակցել է Կովկասյան ուղղամասակատում թուրքական գորքերի դեմ մղված մարտական գործողություններին, մասնավորապես՝ Մուշի և Բիթլիսի համար մղվող մարտերին: Էրգրումի գրավման օվերացիայի ժամանակ Սիլիկյանը դեկավարել է վերջապահ գորքը: Քաղաքի գրավումից հետո Սիլիկյանը



¹ Տես «ՕբЩий спиСокъ офицерскими чинамъ Русской Императорской Армии. Составленъ по 1-е Января 1910 г.». СПб., 1910, с. 789 (<http://book2191.narod.ru/1910spisokofficeram/Indexfr.html>):

² Տես նույն տեղում:

նշանակվել է Էրգրումի զինվորական պարետ: Մարտական ծառայությունների համար պարզևատրվել է մի շարք ռազմական շքանշաններով և Գեորգիյան գեներով³: 1917 թ. օգոստոսի 22-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում⁴:

Ռուսական Կովկասյան ռազմաճակատի փլուզումից և ռազմական գործողությունների թատերաբնակությունը ռուսական բանակի զորամասերի հեռանալուց հետո Սիլիկյանը վերադարձել է Թիֆլիս: 1918 թ. հունվարին գեներալ Մովսես Սիլիկյանը նշանակվել է Հայկական կորպուսի 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար⁵: Իր եռանդուն և վճռական գործողությունների շնորհիվ կարծ ժամանակում ստեղծել է մարտունակ, կանոնավոր հայկական զորամասեր, որոնք հետագայում կարողացել են դիմակայել բուրքական արշավանքին:

1918 թ. մայիսին իրադրությունը ռազմաճակատում կտրուկ կերպով վատրարացավ: Թուրքական գործքը մեկը մյուսից հետևից գրավեց ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Էրգրում, Սարիդամիշ, Կարս, Ալեքսանդրապոլ հայկական քաղաքները և հիմնական հարվածն ուղղեց Արարատյան դաշտավայրի վրա: Մայիսի 21-ին թուրքական 36-րդ դիվիզիան ներխուժեց Արարատյան դաշտավայր և գրավեց Սարդարապատ կայարանն ու Սարդարապատ գյուղը: Բաշ-Ապարանի ճակատում թուրքերի հայտնվելը անմիջական սպառնալիք էր դարձել Երևանի համար: Ակնհայտ էր, որ թուրքական հրամանատարության նպատակը ոչ միայն Հայաստանի քոնազարդումն էր, այլև հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը: Ստեղծված իրավիճակում Հայաստանի ճակատագրի համար հատուկ պատասխանատվություն էր կրում Երևանյան զորախմբի հրամանատար գեներալ Սիլիկյանը: Եվ նա կարողացավ փայլուն կերպով լուծել իր առջև դրված խնդիրը: 1918 թ. Սարդարապատի և Բաշ-Ապարանի մայիսյան հերոսամարտերում թշնամին ջախչախիչ պարտություն կրեց: Այդ դժվարին և հակասական պայմաններում Սիլիկյանի գործողությունները մարտավարության և ռազմավարության տեսանկյունից հանգամանորեն վերլուծել և բարձր է գնահատել Սարդարապատի ճակատամարտի մասնակից, հետագայում՝ Խորհրդային Սիլիկյան մարշալ, Խորհրդային Սիլիկյան կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանը, որը գրել է. «հրամանատարը այն ժամանակ ընտրեց գործողությունների ամենաբանական և



Գեներալ-լեյտենանտ
Մովսես Սիլիկյան

³ Տես «Հայոց գեներալ»: «Կոմունիստ», 22 մայ 1988 թ.:

⁴ Տես Գ. Ավետիսյան. Գեներալներ – արմենացիները ռազմական պատմություններում. Ե., 2007, ս. 218:

⁵ Տես Ա. Հարուրյումյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապատպանական կովկները: Ե., 1984, էջ 87:

խոստումնալից տարբերակը»⁶: Նա հատուկ նշել է, որ գեներալ Սիլիկյանը «ընդունեց միակ ճշմարիտ, համակողմանիորեն կշռադատված... տաղանդավոր որոշումը՝ հայրենիքը պաշտպանելու կոչել «զորքը և բոլորին, ովքեր ընդունակ են զենք կրելու»⁷:

Բարձր գնահատելով Սիլիկյանի ծառայությունները՝ մարշալ Հ. Բարբամյանը նրան բնութագրել է որպես «ժամանակի հայ գեներալներից ամենաշնորհալին»⁸:

СИЛИКОВЪ	Получ. образ.: 1 Моск. воеи.
<i>Моисеесъ Бабаевичъ.</i>	гимн., 3 воен. Александр. 77.
С Кавказск. стр. п.	и оф. стр. шк. „усыпшно“.
Род. 14 Сен. 862.	Въ 155 пѣх. Кубинск. п.
Бѣроисп. арм.-григ.	Занималъ должности:
Въ сл. вст. 28 Авг. 882.	Ком. р. 7 л. 7 м. 6 д.; ком.
Подпр. 14 Авг. 884.	бтл. 2 г. 5 м.
Пор. 14 Авг. 888.	Награды:
Ш.-К. 15 Март. 895.	С. Ст. 2 910.
Кап. 6 Мая 900.	
Подпк. 26 Фев. 905.	

«Общий список офицерским чинам Русской Императорской Армии.

Составленъ по 1-е Января 1910 г.» (տպագրված է առաջին անգամ)

Հայաստանի Հանրապետության հոչակումից հետո, 1918 թ. հունիսին գեներալ Սիլիկյանը ծառայության է անցել հայկական բանակում, ակտիվորեն մասնակցել է երկրի բանակաշինությանը, եղել է Հայաստանի Հանրապետության բանակի կազմակերպիչներից մեկը, հաջողությամբ դեկավարել է մի շարք ռազմական գործողություններ:

1918 թ. հովհանն նա նշանակվել է Առանձին հայկական դիվիզիայի հրամանատար և Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության Ռազմական խորհրդի անդամ: Սիլիկյանի անմիջական ջանքերով և դեկավարությամբ մինչև 1918 թ. օգոստոսի 15-ը կազմավորվել են Առանձին հայկական դիվիզիայի զորամասերը և ստորաբաժանումները, ձևավորվել են Հայաստանի Հանրապետության զինվածքը ուժերը⁹: Առանձին հայկական դիվիզիայի հրամանատար եղած ժամանակ (1918 թ. հովհան–1919 թ. ապրիլ) Սիլիկյանի դեկավարած հայկական զորքը հարթեց 1918 թ. դեկտեմբերին բռնված հայ-վրացական պատերազմում. հայկական բանակի ջանքերով Հայաստանի Հանրապետությանը միացվեցին նախկինում Թուրքիայի կողմից բռնազավթված որոշ հայկական տարածքներ¹⁰:

⁶ И. Х. Баграмян. Мои воспоминания. Е., 1979, с. 89.

⁷ Նոյն տեղում, էջ 91:

⁸ Նոյն տեղում, էջ 90:

⁹ Տես Մ. Կարսպետյան, Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920 թ.): Ե., 1996, էջ 28-30, 32:

¹⁰ Այս մասին ավելի հանգամանորեն տես Մ. Կարսպետյան, Նշ. աշխ., էջ 80-100, նոյնի՝ Գեներալ-լեյտենան Օվանես Ախերձյան. Е., 2003, ս. 12-44:

1919 թ. ապրիլին Առանձին հայկական դիվիզիայի հրամանատարի պաշտոնը բողնելուց հետո գեներալ Սիլիկյանը ծառայությունը շարունակեց որպես Հայաստանի Հանրապետության գինվորական նախարարի տեղակալ: 1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ նրան շնորհվեց գեներալ-լեյտենանտի կոչում¹¹: Պետք է նշել, որ Հայաստանի Առաջին Հանրապետությունում այդ բարձր գինվորական կոչմանը արժանացել է ընդամենը չորս գեներալ՝ գինվորական նախարարի տեղակալներ Մովսես Սիլիկյանը, Հովհաննես Հախվերդյանը, հրետանու պետ Կոնստանտին Ղամազյանը և Կարսի բերդի պարետ Դանիել Բեկ-Փիրումյանը¹²:

1920 թ. աշնանը գեներալ-լեյտենանտ Սիլիկյանը դեկավարել է ռազմական գործողությունը Կարս-Ալեքսանդրապոլ ճակատում, երբ հուսահատ փորձ արվեց կասեցնելու բվապես զգալիորեն գերազանցող բուրքական ուժերի նոր առաջխաղացումը¹³:

1920 թ. վերջին զորացրվելուց հետո Սիլիկյանը մնացել և ապրել է Խորհրդային Հայաստանում: Որոշ ժամանակ աշխատել է փոքրիկ ջուլհակագործական արհեստանոցում որպես տնօրին: 1921 թ. հունվարին նա ենթարկվել է բոնածնչումների, ձերբակալվել և ուղարկվել Բաքու: Արտոքից վերադառնալուց հետո ապրել է Խորհրդային Հայաստանում, աշխատել Երևանում (այսուհետև՝ Ալեքսանդրապոլում) բացված զյուղատնտեսական գործիքների առևտորվ գրադարձությունում: 1923 թ. աշխատել է «Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեի» հոսպիտալում¹⁴: Այդ տարիներին Սիլիկյանը գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանի խնդրանքով շարադրել է իր հուշերը, որոնք մինչև օրս պահպում են Հայաստանի Ազգային արխիվում: Այդ հուշերը, սակայն, պահպանվել են միայն գեներալ Թ. Նազարբեկյանի ձեռագրով¹⁵:

Անբողջ կյանքն ազնվորեն հայրենիքին նվիրած տաղանդավոր զորապետ, մեծ հայրենասեր Մովսես Սիլիկյանը դարձել է 1937 թ. ստալինյան բոնածնչումների զոհ:

¹¹ Տես Կ. Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թ., 2002, էջ 45:

¹² Տես նույն տեղում:

¹³ Տես Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն: Թեհրան, 1980, էջ 479–480:

¹⁴ Տես «Ծննդա գեներալ»:

¹⁵ Տես ՀԱԱ, ֆ. 45, գ. 1, գ. 18, ինչպես նաև՝ Գեներալ Թ. Նազարբեկյանի ձեռքով արված քաղվածքները գեներալ Մ. Սիլիկյանի՝ 1918 թ. բուրքական արշավաճրների և մայիսյան հերոսամարտի մասին պատմող նամակներից՝ գրված Ռուսովից 1929 թ.: «ՀՔ», 2004, հմ. 2:

ՀԱՍՏԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

**Դ. Ա. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ, Ա. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ,
Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր, Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր**

ՀԱՅ-ԱՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

այլափոխում – вырождение; degeneration	cipline
առաջավար – лидер; leader	կարգուկանոն – порядок; order
առաջավոր փորձ – передовой опыт; best practice	կենտրոնախույս միտում – центробежная тенденция; centrifugal trend
արմատական թեկում – коренной перелом; radical turn	կերպափոխում – трансформация; transformation
արտապատկերման ֆունկցիա – отображающая функция; mapping function	կողմնացույց-անկյունաչափ – буссоль; aiming circle
բացազատում – развертывание; deployment	կողմնորոշչի – ориентир; landmark, guideline
գերճշգրիտ զենք – сверхточное оружие; high-precision weapon	կրովի զենիթահրթիռային համալիր – переносной зенитно-ракетный комплекс, portable antiaircraft missile system
դարան – засада; ambush	հակահրթիռ – установка <i>հակահրթիռային հրիտ</i>
ընդմիջակայք – интервал; interval	հակատանկային կայանք – противотанковая установка; anti-tank ditch
ընտրապատում – отбор; selection	հանարժեքած միջին – средняя ошибка; reduced mean error
ընտրողական մոտեցում – избирательный подход; selective approach	հայտանիշ – признак; sign
թվական – контингент; contingent	համարձակական – рекомендация; instruction
ինքնուրբուն – идентичность, самость; self	հավաքական – парк; ordnance depot
ինքնօգնություն – самопомощь; self-help	հարթման գործակից – коэффициент сглаживания; smoothing factor
լրահամալրում – доукомплектование;	հարմարվողականություն – 1. адаптируемость, приспособляемость, 2. приспособленчество; 1. adaptability, 2. timeserving
1. recruitment, staffing, 2. completing	հիվանդացույթուն – заболеваемость,
խանգարում – помеха; interference, hindrance	
խտրական նորմ – дискриминационная норма; discriminatory norm	
կարգարերում – наладка; adjustment, setup	
կարգապահություն – дисциплина; dis-	

morbidity, sickness rate	ներուժ–потенциал; potential
հրածգորյան ճշգրտություն–точность стрельбы; shooting accuracy	նմանարկում–имитация; imitation
հրետանի–артиллерия; artillery	նշագրում–обозначение; designation
–զենիֆրային հրետանի–зенитная артиллерия, antiaircraft artillery	նշանառում–прицеливание; aiming
–ինքնազնա հրետանի–самоходная артиллерия; self-propelled artillery	շրջադիտակ–перископ; periscope
–լեռնային հրետանի–горная артиллерия; mountain artillery	չափանմուշ–эталон; etalon, standard
–վրագետնյա հրետանի–наземная артиллерия; field artillery	պաշտպանական–1. оборонный, 2. оборонительный; defense
հրթիռ–ракета; missile, rocket	–պաշտպանական անվտանգություն–оборонная безопасность; defense security
–բալիստիկ հրթիռ–баллистическая ракета; ballistic missile	–պաշտպանական գոտի–зона обороны; defense zone
–հակահրթիռային հրթիռ–противоракетная ракета, противоракета; antimissile	–պաշտպանական դաշինք–оборонный союз; defense alliance
–հակատանկային կառավարվող հրթիռ –противотанковая управляемая ракета; anti-tank guided missile	–պաշտպանական ենթակառուցվածք–оборонная инфраструктура, defense infrastructure
մահարերություն–летальность, смертельность; lethality	–պաշտպանական կառույց–1. оборонное вооружение, 2. оборонная структура; defensive structure
մահացություն–смертность; mortality	–պաշտպանական քաղաքանություն –оборонная политика; defense policy
մարդաշափական տվյալներ–антропометрические данные; anthropometric data	պատահական փոփոխական–случайная переменная; random variable
մարտական պարագաստություն–боевая готовность; combat readiness	պատեհաժամություն–своевременность; timeliness
մարտակարգ–боевой порядок; battle array, formation	ռադիոհեռաչափ–радиодальномер; radio rangefinder
մարտապաշար–боезапас; ammunition	ռադիոնավագական համակարգ–радионавигационная система; radionavigation system
մշտական ճնշման ռազմավարություն–стратегия постоянного давления; strategy of constant pressure	ռազմականացում–милитаризация; militarization
մուտքային մեծություն–входная величина; input value	ռազմամթերք–боеприпасы; ammunition
նախանշանակում–предназначение, назначение; 1. earmarking, 2. predestination	ռազմերք–марш; march
	սանձազերծված պատերազմ–развязанная война; unleashed war
	սարքավորանք–оборудование; equipment

վարժասարք – тренажер; training simulator	показатель; contact index
վրածածկման հավանականություն – вероятность накрытия; coverage probability	экспоненциальное распределение; exponential distribution
տանկավտանց ուղղություն – танковое направление; armored approach route	обученность; educatedness
տեղակայում – установка; installation	переходная дисперсия; transfer dispersion
տեղակապակցում – привязка к местности; binding to the terrain	интероперабельность; interoperability
տեսանելիություն – видимость; visibility	взаимодействие; interaction
ցուցանիշ – показатель; index, indicator	взаимопомощь; mutual aid
–ժողովրդագրական ցուցանիշ – демографический показатель; demographic indicator	тягач, буксир; tractor, tug
–շփումային ցուցանիշ – контактный	кriminогенное поведение; criminogenic behavior

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

адаптируемость – հարմարվողականություն	мам հավանականություն
антропометрические данные – մարդաչփական տվյալներ	взаимодействие – փոխգործություն
артиллерия – հրետանի	взаимопомощь – փոխօգնություն
—горная артиллериya – լեռնային հրետանի	видимость – տեսանելիություն
—зенитная артиллериya – զենիթային հրետանի	входная величина – մուտքային մեծություն
— наземная артиллериya – վրագետնայա հրետանի	вырождение – այլափոխում
— самоходная артиллериya – ինքնագնաց հրետանի	дискриминационная норма – խորական նորմ
боевая готовность – մարտական պատրաստություն	дисциплина – կարգապահություն
боевой порядок – մարտակարգ	доукомплектование – լրահամարում
боезапас – մարտապաշտ	заболеваемость – հիվանդացություն
боеприпасы – ռազմամթերք	засада – դարձն
буксир – բարշակ	зона обороны – պաշտպանական գոտի
буссоль – կողմնացույց-անկյունաչափ	идентичность – 1. նույնականություն, 2. ինքնություն
вероятность накрытия – վրածածկ-	избирательный подход – ընտրողական մոտեցում
	имитация – նմանարկում
	интервал – ընդմիջակայր
	интероперабельность – փոխգործե-

լիություն	переносной зенитно-ракетный комплекс—կրովի զենիթահրիուային համալիր
контингент—քվակազմ	перископ—շրջադիտակ
коренной перелом—արմատական քեկում	показатель—ցուցանիշ
коэффициент сглаживания—հարրման գործակից	—демографический показатель—ժողովագրական ցուցանիշ
криминогенное поведение—քրեածին վարք	—контактный показатель—շփումային ցուցանիշ
летальность—մահաբերություն	помеха—խանգարում
лидер—առաջավար, առաջնորդ	порядок—1. կարգ, 2. կարգուկանոն
марш—1. երթ, 2. ռազմերթ	потенциал—ներուժ
милитаризация—ռազմականացում	предназначение—նախանշանակում
назначение—1. նշանակում, 2. սմ. <i>пределназначение</i>	привязка к местности—տեղակապակցում
наладка—կարգաբերում	признак—հայտանիշ
обозначение—նշագրում	приспособленчество—հարմարվողականություն
оборонительный—պաշտպանական	приспособляемость—см. <i>адаптивность</i>
—оборонительное сооружение—պաշտպանական կառույց	прицеливание—նշանառում
оборонный—պաշտպանական	противотанковая установка—հակատանկային կայանք
—оборонная безопасность—պաշտպանական անվտանգություն	радиодальниомер—ռադիոհեռաչափ
—оборонная инфраструктура—պաշտպանական ենթակառուցվածք	радионавигационная система—ռադիոդիլեվարական համակարգ
—оборонная политика—պաշտպանական քաղաքականություն	развертывание—1. ձավալում, 2. բացազառում
—оборонная структура—պաշտպանական կառույց	развязанная война—սանձագերծված պատերազմ
—оборонный союз—պաշտպանական դաշինք	ракета—հրթիռ
оборудование—1. սարքավորում, 2. սարքավորման	—баллистическая ракета—քայլստիկ հրթիռ
обученность—ուսումնավարժվածություն	—противоракетная ракета—հակահրթիռային հրթիռ
ориентир—կողմնորոշիչ, ուղենիշ	—противоракета—см. <i>противоракетная ракета</i>
отбор—ընտրազառում	—противотанковая управляемая ракета—հակատանկային կառավարվող հրթիռ
отображающая функция—արտապատճենական ֆունկցիա	рекомендация—հանձնարարական սամոպոմօշտիք
передаточная дисперсия—փոխանակումային ցրում	самость—см. <i>идентичность</i>
передовой опыт—առաջավոր փորձ	

сведенная срединная ошибка—
համարերված միջին սխալ
сверхточное оружие—գերճշգրիտ
զենք
своевременность—պատեհաժամութ-
յուն
случайная переменная—պատահա-
կան փոփոխական
смертельность—см. летальность
смертность—մահացություն
стратегия постоянного давления—
մշտական ճնշման ռազմավարություն
танкоопасное направление—տան-

կավտանգ ուղղություն
точность стрельбы—հրաձգության
ճշգրտություն
трансформация—կերպափոխում
тренажер—վարժասարք
тягач—բարչակ
установка—1. կայանք, 2. տեղակա-
յում, 3. կողմնորոշում, 4. նախադրում
центробежная тенденция—կենտ-
րոնախույս միտում
экспоненциальное распределение—ցուցային բաշխում
эталон—չափանմուշ

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

adaptability—հարմարվողականություն
adjustment—կարգարերում
aiming—նշանառում
aiming circle—կողմնացույց-անկյու-
նաշափ
ambush—դարան
ammunition—1. ռազմամթերք, 2. մար-
տապաշար
anthropometric data—մարդաչափա-
կան տվյալներ
anti-tank ditch—հակատանկային կա-
յանք
armored approach route—տանկա-
վանգ ուղղություն
artillery—հրետանի
—antiaircraft artillery—գենիթրային
հրետանի
—field artillery—վրագետնյա հրետանի
—mountain artillery—լեռնային հրե-
տանի
—self-propelled artillery—ինքնազնաց
հրետանի
battle array—մարտակարգ
best practice—առաջավոր փորձ
binding to the terrain—տեղակապակ-
ցում
centrifugal trend—կենտրոնախույս

միտում
combat readiness—մարտական պատ-
րաստություն
completing—լրահամալրում
contingent—բվակազմ
coverage probability—վրածածկման
հավանականություն
criminogenic behavior—քրեածին
վարք
defense—պաշտպանական
—defense alliance—պաշտպանական
դաշինք
—defense infrastructure—պաշտպա-
նական ենթակառուցվածք
—defense policy—պաշտպանական
քաղաքականություն
—defense security—պաշտպանական
անվտանգություն
—defense zone—պաշտպանական գոտի
—defensive structure—պաշտպանա-
կան կառույց
degeneration—այլափոխում
deployment—1. ծավալում, 2. բացա-
զատում
designation—նշագրում
discipline—կարգապահություն
discriminatory norm—խորական նորմ

earmarking—նախանշանակում	order—կարգուկանոն
educatedness—ուսումնավարժվածություն	ordnance depot—հավաքակազմ
equipment—1. սարքավորում, 2. սարքավորանք	periscope—շրջադիտակ
etalon—չափանմուշ	portable antiaircraft missile system —կրողի գենիթահրթիռային համալիր
exponential distribution—ցուցչային բաշխում	potential—ներուժ
formation—see <i>battle array</i>	predestination—նախանշանակում
guideline—see <i>landmark</i>	radical turn—արմատական թեկում
high-precision weapon—գերճշգրիտ գեներացիա	radio rangefinder—ռադիոհեռաչափ
hindrance—see <i>interference</i>	radionavigation system—ռադիոուղեցիքական համակարգ
imitation—նմանարկում	random variable—պատահական փոփոխական
index—ցուցանիշ	recruitment—լրահամալրում
—contact index—շփումային ցուցանիշ	reduced mean error—համարելիքած միջին սխալ
indicator—see <i>index</i>	rocket—see <i>missile</i>
—demographic indicator—ժողովրդագրական ցուցանիշ	selection—ընտրազատում
input value—մուտքային մեծություն	selective approach—ընտրողական մուեցում
installation—տեղակայում	self—ինքնություն
instruction—հանձնարարական	self-help—ինքնօգնություն
interaction—փոխգործություն	setup—see <i>adjustment</i>
interference—խանգարում	shooting accuracy—հրաձգության ճշգրտություն
interoperability—փոխգործելիություն	sickness rate—see <i>morbidity</i>
interval—ընդմիջակայք	sign—հայտանիշ
landmark—կողմնորոշչի	smoothing factor—հարթման գործակից
leader—առաջավար, առաջնորդ	staffing—see <i>recruitment</i>
lethality—մահաբերություն	standard—see <i>etalon</i>
mapping function—արտապատկերացիան ֆունկցիա	strategy of constant pressure—մշտական ճնշման ռազմավարություն
march—ուղամերք	timeliness—պատեհաժամություն
militarization—ուղամականացում	timeserving—հարմարվողականություն
missile—հրթիռ	tractor—քարշակ
—antimissile—հակահրթիռային հրթիռ, հակահրթիռ	training simulator—վարժասարք
—anti-tank guided missile—հակատանկային կառավարվող հրթիռ	transfer dispersion—փոխանցումային ցրում
—ballistic missile—բալիստիկ հրթիռ	transformation—կերպափոխում
model—see <i>etalon</i>	tug—քարշակ
morbidity—հիվանդացություն	unleashed war—սանձազերծված պատերազմ
mortality—մահացություն	visibility—տեսանելիություն
mutual aid—փոխօգնություն	

ԳԻՏԱԿՆՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ռ. Գ. Գևորգյան, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. Մոսօյան, տեխնինգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ե. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. Մոսօյան, տեխնինգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հ. Ս. Սիսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Ս. Սարգսյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Ս. Մանանյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

- Р. В. Агузумцян, кандидат психологических наук, доцент;
Н. У. Аракелян, академик НАН РА;
В. М. Арутюнян, академик НАН РА;
Г. Е. Багдасарян, академик НАН РА;
Г. А. Геворкян, академик НАН РА;
Р. Г. Геворкян, доктор геологических наук, профессор;
А. А. Манташян, академик НАН РА;
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;
М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;
К. С. Мосоян, доктор технических наук, профессор;
В. С. Саргсян, академик НАН РА;
А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;
Ю. С. Чилингарян, академик НАН РА*

SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:

- Р. В. Aghouzoumtsan, Candidate of Psychological Sciences, Docent;
N. H. Arakelian, Full Member, NAS RA;
G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;
Y. S. Chilingarian, Full Member, NAS RA;
H. A. Gevorkian, Full Member, NAS RA;
R. G. Gevorkian, Doctor of Geological Sciences, Professor;
V. M. Haroutyounian, Full Member, NAS RA;
A. H. Mantashian, Full Member, NAS RA;
E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;
M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;
K. S. Mossyan, Doctor of Technical Sciences, Professor;
V. S. Sargsian, Full Member, NAS RA;
H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor*

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ուսումնավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ուսումնագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ուստերեն և անգերեն անփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր արդյունները:

Հեղինակները պատասխանառու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիրյան և գաղտնիության պահպանիների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիմագրանները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ուսումնասանագիտական հապալումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտասպումը բույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Каанаяна МО РА «Айакакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях. Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանառու քարտուղար՝ **S. U. Անդրոնիկյան**

Ուազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ **Զ. Դ. Ասավրյան**
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ **Ա. Մ. Մովսիսյան**
Տեխնիկական բաժնի պետ՝ **Ա. Պ. Նազարերյան**

Զնավորող նկարիչ՝ **Ա. Ա. Փարվանյան**

Լուսանկարիչ՝ **Ա. Դ. Ներսիսյան**

Տեխնիկական և գեղարվեստական խմբագրումը՝ **Ա. Պ. Նազարերյան**

Տեքստերի թարգմանությունը՝ **Ա. Հ. Հակոբյանի**, **Ա. Մ. Մարտիրոսյանի**, **Ք. Վ. Փիրոյանի**
Համակարգչային ապահովումը՝ **Վ. Ռ. Խալաֆյանի**, **Ն. Զ. Ծալուրյանի**
Սրբագրիչներ՝ **Ն. Հ. Բաղդասարյան**, **Ա. Մարուխյան**

Լուսանկարչական ապահովումը՝

ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՈՒնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94

Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>

Պաշտոնական բլոգ-կայք՝ <http://razmavaraget.wordpress.com>

Էլ. փոստ՝ haykakan_banak@mail.am

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ուսումնական հետազոտությունների
ինստիտուտի «Հայկական բանակ» ուսումնական հանդես, 2012 թ.


Ստորագրվել է տպագրության 10.12.2012: Թուղթ՝ օֆսեթային: Զնաշափը՝ 70x100 1/16:

Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ: Տպաքանակը՝ 500:


Տառատեսակները՝ «Արիա», «Թայմս» և «Բայթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:

Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում



ՀՀ հատուկ նախանշանակման զորքերի
մարտական ավանդույթների հիմնադիր,
«Ազատագրական բանակի» գլխավոր հրամանատար,
ՀՀ և ԼՂՀ առաջին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանի ասպետ
Լեռնիդ Ազգալոյանի (1942 – 1992)
հուշարձանը Երևանում



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ